

ՀԱՅԿԱԿԱՆՏԱՐԱԶ



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
Институт археологии и этнографии

АРМЯНСКАЯ
ОДЕЖДА

С ДРЕВНЕЙШИХ ВРЕМЕН
ДО НАШИХ ДНЕЙ

ИССЛЕДОВАНИЕ И РИСУНКИ АЛЬБОМА
АРАКЕЛА ПАТРИКА

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
Ереван 1967

Վրացում/Ք
հա - 70

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Հնագիտության և ալգագրության ինստիտուտ

ՀԱՅԿԱԿԱՆ
ՏԱՐԱԶ
ՀՆԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻՉ
ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ և ԱԼՔՈՍԻ ՆԿԱՐՆԵՐԸ
ԱՌԱՔԵԼ ՊԱՏՐԻԿԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍԿ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉ ՈՒԹՅՈՒՆ
Երևան 1967

ԽճՈՒՆԱԿԱՆ
Գ. Գ. ԳՆՏՍՅԱՆՆԻ

COSTUMES
ARMÉNIENS
DEPUIS L'ANTIQUITÉ JUSQU'À NOS JOURS
L'ÉTUDE ET LES DESSINS DE L'ALBUM PAR
ARAKEL PATRIK



Ն Ե Ր Ա Ն Թ Ա Կ Ա Ն

Այս աշխատությանը ջանացել ենք պատմական, հնագիտական և ազգագրական նյութերի հիման վրա ներկայացնել հայկական տարազանները, հնագույն ժամանակներից մինչև 20-րդ դարի շուրջ առաջին քառորդը: Նյութերը ամփոփել ենք 82 տախտակի մեջ, համապատասխան ծանոթագրություններով:

Շուրջ երեք հազարամյակ տեղի ժամանակաշրջանի ընթացքում, Հայաստանում տեղի են ունեցել բնակչության մեծ տեղաշարժեր՝ արտագաղթեր, օտար ցեղերի ներխուժումներ և այլն, որոնք, անշուշտ, իրենց ազդեցությունն են ունեցել մեր տարազանների վրա, սակայն չեն վերացրել նրա ազգային ինքնուրույն նկարագրերը: Հայկական բազմադան տարազանների հենց այդ բնույթը նրան տալիս է պատմականորեն կարևոր նշանակություն. հայ ժողովուրդը հաճախ ներգործուն դեր է կատարել հարևան ժողովուրդների տարազգի վրա:

Այս վերջին իրողությունը մեզ թեկզորեց ալբոմի վերջում տալ հարևան ժողովուրդների տարազանների մի շարք նմուշներ:

Հայկական տարազգի վերաբերյալ պատմական հիշատակությունների ամփոփումներով առաջին անգամ հանդես է եկել Ղուկաս Բենիճյանը: Ալիշանի գործերի մեջ էլ երբեմն հանդիպում ենք դանդաղան տեղիկությունների, Բայց այդ հարցին նվիրված առաջին լուրջ ուսումնասիրությունը կատարել է Վենետիկի Միլիթարյաններից Վարդան Հացունին, իր «Պատմություն հին հայ տարազգին» աշխատությանը, հրատարակված՝ 1923 թվին: Հեղինակը լինելով հմուտ պատմաբանասեր և բարձր տեղյակ հին մատենագրության, օգտագործել

է հայկական տարազգին վերաբերող հայ և օտար պատմական գրեթե բոլոր հիշատակությունները: Թեև այդ աշխատությունը մեզ համար հաճախ հանդիսացել է որպես ուղեցույց՝ հատկապես աղբյուրագիտական հարցերում, բայց և այնպես, կցանկանալիք անել մի քանի դիտողություններ: Ամենից առաջ հայ տարազգի պատմության բոլոր ժամանակաշրջաններում Հացունին գերազանց տեղ է հատկացրել երկրում օտար իշխողների ազդեցություններին, մոռանալով, որ երբեմն օտար տիրապետողները նույնիսկ ստիպել են հայերին կեցվածքով ու տարազով շնամնվել իրենց, անհանդուրժելի համարելով այդ թե՛ կրոնական. և թե՛ տիրող ժողովրդի իրենց առանձնահատկությունը պահելու տեսակետից: Այդ են ապացուցում նաև արաբ խալիֆների և օսմանյան սուլթանների պարբերաբար արձակած հրովարտակները «գլավուրներ» կեցվածքի ու տարազի մասին:

Հացունին աննկատ է թողել նաև հայ-վրացական տարազային առնչությունները, որոնք հետևյալն են եղել դարավոր հարևանության, մշակութային, դիմվորական և քաղաքական սերտ շփումների, մանավանդ Բագրատունյաց և Զաքարյանների իշխանության ժամանակաշրջանում: Տարազի վերաբերյալ որևէ ուսումնասիրություն, առանց փաստական պատկերների, անշուշտ, վարժեք չի կարելի համարել, ուստի, Հացունին մեծ վտույթ է պատճառում կարողացել է իր գրքում հավաքել բավականաչափ զննական նյութ: Մենք էլ ջանացել ենք ավելացնել նորանոր տվյալներ, օգտվելով Հայաստանի պետական պատմական թանգարանի ժողովածուներից, Մատենադարանի մանրանկարչական և պատմական այլ հուշարձաններից, հաճախ նրանց կողքին տալով վերականգնված գծա-

գրութիւններ, տարագածեն ավելի ըմբռնելի դարձնելու համար:

Այս առթիւ հարկ ենք համարում նշել նաև այն, որ հնագույն հուշարձաններն ընդօրինակելիս, թեև քանացել ենք հավատարիմ մնալ իսկականին, սակայն եբբեմ՝ քանդակողի կամ նկարողի կատարողական թերութիւնները շեքք ընդօրինակել լուսանկարչական ճշտութեամբ:

Բացի այդ, երբ մեր տրամադրութեան տակ շէքք ունեցել տվլալ ժամանակաշրջանի վերաբերյալ բավականաչափ նյութ, նպատակահարմար ենք համարել արտատպել մեր հարեան ժողովուրդներին հուշարձաններից ամենատիպականները, քանի որ պատմական վկայութիւններ կան նրանց հետ մեր տարազային ինչ-ինչ նմանութիւնների մասին: Դրանք ամփոփել ենք տախտակ № 69—82-ում: Այս վերջինները ոչ միայն որոշ չափով լրացնում են մեր պատմական տարագածե-վելի բացերը, այլև կարևոր առաղձ են հանդիսա-նում ճանաչելու նաև մեր հին ու նոր հարեան ժողովուրդների տարազը:

Հանցունու ուսումնասիրութիւնն ընդգրկում է միայն հին շրջանի տարազը, հասնելով հազիվ մինչև 16-րդ դարը. ուստի, ձեռնարկելով ներկա աշխատութիւնը, մեր նպատակն է եղել ոչ միայն հին վրտա ավելացնել նորը, այլև շարունակել ու հասցնել այն մինչև մեր ժամանակները ու դրանով տալ հայ ժողովրդի տարազի ընդհանուր պատկերը:

19-րդ դարի վերջերից մինչև 20-րդ դարի առաջին քառորդը ընկնող ժամանակամիջոցի հայ տարազային նյութերը ըստ գավառների ներկայաց-նելիս, մեծ մասամբ օգտվել ենք բազմավաստակ ազգագրագետ Եր. Լալայանի ուսումնասիրութիւն-ներից: Տարագային գունավոր նկարներից շատերը վերցրել ենք նկարիչներ Վարդգես Սուրենյանցի, Արշակ Ֆեթվաճյանի, Սարգիս Խաչատրյանի, Լան-սեհրի հայ գաղթականներից կատարած էտյուդ-ներից:

Մենք էլ ջանացել ենք կորստից փրկել սխտե-

մասիկ բնաջնջման ենթարկված արևմտահայերի գանազան գավառների հատուկ տարագածները, հայրենագարձներէց հավաքելով հին լուսանկար-ներ և սփյուռքում լույս տեսած հայրենակցական և ազգագրական հրատարակութիւններից քաղելով համապատասխան նյութեր:

Բացի այդ, հեղինակը որպէս արևմտահայ, առիթ է ունեցել 1915 թվականի տղետից առաջ անձամբ ծանոթանալու Փոքր Հայքի մի շարք շրջանների հայ ազգաբնակչութեան կենցաղին ու տարազին, իսկ տարագրութեան ծանր տարիներին ականատես է եղել Արևմտյան Հայաստանի գանա-զան գավառների բնիկների դեպի բնաջնջում քշվող քարավաններին:

Վերահիշալ առիթներով հայ ժողովրդի տարա-զածները մեր լայն ծանոթութիւնը օգնել է մեզ զատորոշելու այն, ինչ որ նրան եղել է ինքնահա-տուկ և հարազատ:

Այդ բոլորը մեզ համարձակութիւն են ներշնչել նաև ձեռնարկելու 19-րդ դարից մինչև 20-րդ դարի առաջին քառորդը ընկնող ժամանակաշրջանի հայ ժողովրդական տարագածների ընդհանուր մի քար-տեղի պատրաստման:

Այդ քարտեզն ինքնին ցույց է տալիս հայ տա-րազի տարածման սահմանները, այսինքն՝ պատ-մական և արդի Հայաստանը: Իսկ ինչ վերաբերում է հին և նոր գաղթավայրերում ապրող հայերի տարագածներին, թեև աշխատութեան մեջ ըստ առնչութեան տեղ և գտել մի քանի նմուշներ, սա-կայն ընդհանուր առմամբ դուրս են մնացել մեր տեսագաշտից:

Մենք հավակնութիւն չունենք սպասած համա-րելու հայ ժողովրդի տարազի պատմութիւնը բո-լոր կողմերով: Մեր ձեռնարկը մի փորձ է ընդհա-նուր դժերով տալու հայ ժողովրդի տարագածների բազմադարյան պատմութիւնը: Հասկանալի է, որ հետագայում կարիք կլինի լրացումների և ճշտում-ների՝ նորանոր նյութերի և ուսումնասիրութիւննե-րի հիման վրա:





ՊՍԵՄԱԿԱՆ ԷՍԵՍՈՒՑ ԱԿՆՈՐԿ

ինչպես ամեն մի ժողովրդի, հայերի մեջ էլ տարազը սերտ ամուրթյուն է ունեցել նրա պատմական զարգացման հետ: Ուստի, անհրաժեշտ է գեթ համատար մի ակնարկով ներկայացնել հայ ժողովրդի բազմադարյան պատմության պիտավոր հանգույցները, որոնց արտացոլումն են հանդիսանում մեր այլոժում հաջորդականորեն ներկայացված տարադաձևերը:

Ա. Ուրարտու.—Մեր թվագրությունից առաջ, 9-րդ դարի կեսերից, ուրարտացիներն իրենց հզոր պետությամբ հեռոճհեռն լուրջ ախոյան են հանդիսանում Ասորեստանին:

Ուրարտացիների և ասորեստանցիների տարազներում թեև գտնում ենք որոշ նմանություններ հատկապես վերնախավում, սակայն աշխարհագրական միջավայրը, կլիմայական և էթնիկական տարբերությունները ստիպել են տարբերվել միմյանցից:

Հնագիտական պեղումներից հայտնաբերվել են ուրարտական դանազան հուշարձաններ, որոնց վրա պատկերված են աստվածությունների, քրմերի, պիմվորականների, պալատականների կերպարները, ինչպես նաև հասարակ ժողովրդի տարազի հազվագեղ նմուշներ, որոնց պիտի անդրադառնանք հանգամանորեն մեր այլոժի համապատասխան տախտակների բացատրագրերում:

Բ. Հայ ժողովրդի կազմավորման շրջան.—Հայկական բարձրավանդակում այդ նույն ժամանակաշրջանում ապրում էին մի քանի մեծ ցեղախմբեր, որոնցից հայասա-ազգիները և արիմ-արմեցեզերը, հետագայում նաև՝ իրենց պետականությունը կորցրած ուրարտացիները, դարերի ընթացքում հետոճհեռն միաձուլվեցին:

Հայասների տարազի մասին պատկերացում չունենք, սակայն նրանք դարերով հարեան և դաշ-

նակից լինելով ինթական մեծ ժողովրդի հետ (որոնց տարազից նմուշներ տվել ենք տխ. 69-ում), պետք է որոշ նմանություն ունեցած լինեն նրանց հետ: Իսկ Արմենները մասին ունենք պատմական հավաստի հիշատակություններ: 5-րդ դարի (484—425 թթ. մ. թ. ա.) հույն նշանավոր պատմագիր Հերոդոտոսը նկարագրելով Քսերքսեսի բանակը, որ արշավում էր դեպի Հելլադա, հիշատակում է այն բոլոր ցեղերը, որոնք իրենց զորագնդերով մասնակցել էին այդ պատերազմին: «Արմենները,—գրում է նա,—գինված էին Փոլուպիացիների նման. և ստուգապես փոյուղիական գաղթական իսկ են, և լեզվով էլ միմյանց նման: Երկու համազգեստ ցեղերն իրենց նմանակցության պատճառով գտնվում էին միևնույն հրամանատարության տակ»¹:

8—7-րդ դդ. մ. թ. ա. կիմերական և սկյութական արշավանքների հետևանքով արմենները ըստիպված եղան տեղաշարժվել մի մասը դեպի հյուսիս՝ Մեծ Հայքի բարձրավանդակը, իսկ մյուս ճյուղը դեպի հարավ՝ Տիգրիս գետի ակունքը, ուր սերտ փոխհարաբերության մեջ են մտնում մարեբի և պարսիկների հետ: Պերսեպոլիսի քանդակներում պատկերված ենք դտնում արմեն հարկատուներ (տխ. 4, նկ. 2):

Արմենների մասին շատ հետաքրքիր տեղեկություններ է տալիս 5-րդ դարի վերջի (մ. թ. ա.) հույն նշանավոր զորավար և պատմագիր Քսենոֆոնը իր «Անաբազիս» և «Նասանց բյուրոսց գործերում»:

¹ Արոդոտոս, Է., 59. (Վ. Հապսևրի, Պատմություն հին հայ տարազի, Վենետիկ, 1923), էջ 35:

² Հ. Մանուկյան, Քենական տեսությունը հայ ժողովրդի պատմության, Ս. հատոր, Երևան, 1944, էջ 381—382:

նա իր զորագնդով անցնելով արմենների բնակավայրերից, տալիս է նրանց զանազան ցեղերի մասին ինչ-ինչ տեղեկություններ: Օրինակ, խալտուբների մասին գրում է, թե՛ «ունեին վուշից պատրաստած զրահ, որը պաշտպանում էր մինչև փորը, իսկ զրահածալրերին կաշին հաստ հյուսքով քուզեր: Ունեին նաև սոնապաններ և սաղավարաներ, գոտու մոտ դաշույն, գործածում էին նաև նիզակ»¹:

Մյանց հյուսիսարևելյան ուրիշ մի ճյուղի՝ մոսի-նոյիկների «մեծագույն մասի համար ապրուստի աղբյուր էր երկաթագործությունը»:

«Խալտուբներն ազատ և ուղմասեր են. իբրև ղեկք նրանք գործ են ածում երկար վահաններ և նիզակներ, խալդայներն ունեին ծաղի ճյուղերից հյուսված կաշեպատ վահաններ և երկուական նիզակ: Նույնպես մակրոնները, որոնք հագնում էին ալժի մագից հյուսված ղզեստ»²:

Արմենները գտնվելով մարա-պարսկական քաղաքական ոլորտում, որպես նրանց հարևանը, դաշնակիցը, կամ գտնվելով նրանց իշխանության տակ, տարազային ձևերով նման էին միմյանց: Ստրաբոնը այդ մասին գրում է. «Շատ բաներում մարիբի և հայերի սովորությունները նման են, որովհետև աշխարհներն էլ նմանվում են միմյանց...զի խույր, ապարոշ, գոակ, թեղանիքավոր պարեզու ու վարտիք ցուրտ և հյուսիսային վայրերի մեջ, ինչպես Մարաստանն է, հանգիստ ազանելիք են»³:

Գ. Իսան-հայկական առնչություններ.—Մինչդեռ Հայաստանի արևմտյան մարզերը, ինչպես Մոփքն էր, ևնթակա են եղել հելլենական ազդեցության, նրա արևելքը, հյուսիսն ու հարավը, սակայն, պահում էին իրենց դարավոր կապերը իրանական ժողովուրդների հետ: Հայ ժողովրդի միջցեղային միասնությունը իր կազմավորման պրոցեսում էր գտնվում, երբ 330 թ. (մ. թ. ա.) տեղի ունեցավ Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքը դեպի Արևելք, կործանելով Աքեմենյան պարսկական պետությունը: Հայաստանն էլ հետագայում ենթարկվեց Մակեդոնացուն հաջորդող Սելևկյանների գերիշխանության, որը և պատճառ հանդիսացավ հելլենիստական ազդեցության տարածման:

Նրորդը դարձավ (մ. թ. ա.), սակայն, իրանական ցեղերից պարթևները հայերի հետ միասնաբար թողափեցին Սելևկյան լուծը: Քաղաքական և միջցեղային առնչությունների բերումով, հայե-

րի մեջ զորացավ պարթևական ազդեցությունը: Ըստ Տակիտոսի, «Հայերը տեղագրությամբ և բարքերի նմանությամբ պարթևներին ավելի մոտ էին և խանված էին նրանց հետ ամուսնություններով»⁴:

Գ. Դեպի հայ ժողովրդի միասնությունը.—189 թ. (մ. թ. ա.), երբ Սելևկյանները պարտվեցին հռոմեացիներին, Մեծ Հայքը՝ Արտաշես Ա-ի, իսկ Մոփքը Ջարհհի դիսավորությամբ ապստամբվեցին և դարձան անկախ թագավորություններ: «Մինչև Արտաշեսյան և Ջարհհյան թագավորությունների հիմնումը, հայ ժողովրդի նախնին՝ ավելի քան 400 տարվա պատմությունը, ինչպես տեսնում ենք, կարելի է համարել Հայաստանի ներքին աճման և ընդարձակման շրջան»⁵:

Նաև՝ «Արտաշեսի և Ջարհհի թագավորության ժամանակ արմենները հավանորեն ոչ միայն տարածվել ու հաստատվել էին Հայկական լեռնաշխարհի բազմաթիվ շրջաններում, այլև՝ զգալի շահով արդեն հայացրել էին այդ երկրները: Հնդկավորական արմենների միաձուլումը տեղական ցեղերի հետ և հայ ժողովրդի հետագա կազմավորումը, ինչպես տեսնում ենք, մոտ է եղել իր ավարտմանը դեռ Արտաշեսյան թագավորության հիմնադրման ժամանակ»⁶:

Այդ միասնությունը ավելի ևս ամրապնդվեց Արտաշես Ա-ի հաջորդների՝ հատկապես Տիգրան Բ-ի օրով, երբ Հայաստանը հանդիսացավ Մերձավոր Արևելքի ամենահզոր պետությունը:

Տիգրան Բ-ը ձգտել էր հելլենիստական մշակույթը տարածել իր հիմնած ընդարձակածավալ պետության մեջ, սակայն տարազի հարցերում նա ջանացել է պահպանել ազգային ինքնությունը: Դժբախտաբար, այդ ժամանակաշրջանից մեզ չի հասել որևէ հուշարձան, բացի նրա դրամներից, ուր նա պատկերված է ինքնատիպ թագով: Իսկ ինչ վերաբերում է նրա պալատական, զինվորական և ժողովրդական տարազաձևերին, օտար ազդյունների տվյալներից օգտվելով, հանգամանորեն պիտի անդրադառնանք մեր ալբոմի համապատասխան բաժնում:

Տիգրան Բ-ի աշխարհակալական դրավումների հետևանքով գերեզմանվեցին ժողովրդական հոծ զանգվածներ և բնակեցվեցին Հայաստանում, որը, անշուշտ, պետք է առաջացներ տարազային մեծ ալլազանություն:

¹ Հ. Մանանդյան, Ո. հատոր, էջ 381-382:

² Նույն տեղում:

³ Ստրաբոն, ԺԱ. ԺԳ Կ (Հայուկի, էջ 48):

⁴ Տակիտոս, Թարզմ. Գ. Ողորնիկյան, Երևան, 1917, էջ 73:

⁵ Հ. Մանանդյան, էջ 118:

⁶ Նույն տեղում:

6. Ավատույեւական հասարակարգը Հայաստանում.—Արտաշեսյան զինաստիպի անկումից հետո արդեն ծայր էր առել ստրկատիրական հարաբերությունների քայքայումը և սկսել էր փոքր ու մեծ ավատատեր-հողատերերի առաջացումը։ Սրանք ժառանգական իշխանություն ձեռք բերեցին մեկ կամ ավելի գավառների վրա և կոչվեցին նախարարություններ, որոնք, ըստ Ն. Ազոնցի, շուրջ 50 կին։

Նրանցից գերազուս կային 4 րդեշխություն, Հայաստանի սահմանային շրջա կողմերում, որոնք կոչվում էին զանուհեց իշխաններ։ Ասկայն թե՛ մեծ նախարարների և թե՛ րդեշխների կրած տարազի մասին, մեր պատմիչները շատ ժառու են եղել տեղեկություն տալու տեսակետից։ Ուստի մենք պիտի օգտվենք նաև տվյալ ժամանակաշրջանի պատմիչ-վա-սասանյան տարազների պատկերացումներից, որոնց հետ հայերը, ըստ մեր մատենագիրների, փոխազդեցություններ են ունեցել։

9. Արշակունիների հարստությունը.— Մեծ թվազրություն 52 թվականից սկսած պարթև արշակունիների մի ճյուղը սկսեց թագավորել Հայաստանում, որով հիմնադրվեց հայ Արշակունիների հարստությունը, որը տևեց մինչև 428 թ., երբ Իրանում իշխանությունը վաղուց անցել էր Սասանյանների ձեռքը։

301 թվականից հետո, երբ Հայաստանում պետական կրոն հռչակվեց քրիստոնեությունը, Սասանյանների քաղաքականությունը Հայաստանի հանդեպ հետևողականորեն թշնամական բնույթ կրեց։

Տրդատ Գ-ի կողմից աշխարհում առաջին անգամ քրիստոնեությունը որպես Հայաստանի պետական կրոն հռչակելու քայլը՝ Արևելքի և Արևմուտքի երկու աշխարհակալ պետությունների միջև բնկած մի երկրում, կարծում ենք առավելապես թիվադրված է եղել իր երկրի և ժողովրդի ինքնուրույնությունը պահպանելու մտահոգությունից։ Մի՞թե նույն այդպիսի մտահոգության հետևանքը չի եղել նաև հայ ժողովրդի մշտական ձգտումը ազգային ինքնատիպ իր տարազի պահպանման վերաբերմամբ։

8. Մարզպանական շրջան.— Սասանյան Պարսկաստանը և Բյուզանդիան 387 թ. իրենց միջև բաժանեցին Հայաստանը, որի շրջա-հինգերորդ մասը մնաց Սասանյանների գերիշխանության տակ, որոնք արևտեղ նշանակեցին պարսիկ և հայ մարդպաններ։ Նրանք դրանով էլ չզոհացան, փորձեր արին վերջ տալու հայ ժողովրդի ինքնուրույն գոյությանը, պարտազրեելով Հայաստանում գրա-

գաշտական կրոնը։ Սակայն հանդիպեցին անընկճելի դիմադրության, որի մեծագույն ազդակն հանդիսացավ 406 թ. Մեսրոպ Մաշտոցի (361—440) կողմից սեփական դպրության ստեղծմամբ հայ ժողովրդի ինքնագիտակցության զարթոնքը։

Ը. Հայաստանի՝ բյուզանդական գրավման ենթակա մարզերում հայերը գեո կրկար ժամանակ պահպանեցին ոչ միայն իրենց լեզուն, կրոնը և բարբերը, այլ նաև ազգային տարազը, հակասակ Բյուզանդիայի միաձուլման քաղաքականության։ Բյուզանդիայի տիրապետության տակ անցած հինգ նախարարությունները պահում էին իրենց ինքնուրույնությունը նույնիսկ որպես զինվորական ուժ՝ մինչև Հուստինիանոսի ժամանակ (529 թ.), ինչպես վկայում է Պրոկոպիոսը՝ Վերանք իրենց գավառների մեջ պահեցին իրենց իրավունքները և իրենց տոհմերը կառաջնորդեին ու չէին խառնրվում կայսերական բանակի զորքերին մինչև Հուստինիանոս Ա.-ի ժամանակ¹։

Նույն պատմագիրը նկարագրում է նաև հայ իշխանավորների տարազը. «Նրանց զլամիզը մաղեղեն էր, բայց ոչ կենդանական, այլ պինդ կոշիկած ծովախոտերից։ Նրանց զգեստը ծիրանեփայլ և սևիպաճուլճ էր։ Քրոմիդի ծայրն ուներ ոսկեզործ ճարմանք, պատվական ակնեղեններով ընդհանրված, որից ոսկեշար, դյուրաթեք շղթայով կախ էին լինում երեք հակինթ։ Հագնում էին մետաքսյա շապիկ, տեղ-տեղ ոսկեհանգուցով։ Մինչև ծնկները հասնող կարմրեբանգ սոնապաններ կրում էին, որոնք ոչ ոք կարող էր զգնուով, բացի հոռոմայեցիների կայսրերից և պարսիկ արքայից»²։

Պրոկոպիոսը հայ զինվորների մասին նաև գրում է. «Մեքուարիոս կոչված մի զորախումբ կար, թվով իբր 3500 հոգի, որը սկզբից կայսրական պալատի սահապան անձնապահ գնդի պաշտոնն ուներ... Առաջ սրանք ընտրվում էին հայերից, իրենց բարձրագույն արժանիքների համար, ինչ որ նրանց տանում հասցնում էր այդ պատվին»³։

Անձնապահ այդ զորագունդը ապահովաբար կրում էր հայ զինվորական տարազը, ինչպես հետագայում թուրք սուլթանների անձնապահ զորագնդի տարազը արևանական էր։

Բյուզանդական կայսրության արևելյան այդ նահանգներում հայ ազգաբնակչությունը միշտ եղել էր հոծ ու գերակշիռ։ Գրա համար կոչվում էր

¹ Մ. Չամչյան, Պատմության հայոց, Բ հատոր, Վենետիկ, 1786, էջ 153։

² Չ. Ենեիդյան, Նախասուլթան, Բ հատոր, Վենետիկ, էջ 286։

³ F. W. Bussell, The Roman Empire from 81 to 1081, London, 1910, p. 354.

«Փոքր Հայք», իսկ հետագայում՝ «Կոտայք»-
թյուն Արմենյակներով»:

Թ. Հայաստանը զարգացած ավատապետու-
թյան շրջանում.— Յոթներորդ դարի քառասնական
թվականներին արաբների աշխարհակալական հոր-
ձանքերը հասավ նաև Հայաստան: Շուրջ երեք դար
անող արաբական տիրապետության ընթացքում
Հայաստանն ուղղակի նվաճված գրության մեջ
մնաց մինչև 885 թ., 885—922-ը կիսանկախ էր,
իսկ 922—1045-ը վայելում էր անկախություն և
բարգավաճում էր:

Այդ ժամանակամիջոցում հայ ժողովրդի մշա-
կույթի և տարազի մարդկրոտ նշանակալի փո-
խազդեցություններ տեղի ունեցան: Արաբ ներխու-
ժողները ոչ միայն խորթ էին իրենց լեզվով, կրո-
նով և բարերով, այլ նաև՝ անապատային կլիմա-
յին հատուկ իրենց պարզունակ արարողով:

Խալիֆաները հատուկ հրովարտակով խստիվ
արգելի էին ոչ-խալիֆաներին արաբների նման ըզ-
գեստ կրել: «Զիմմին»՝ հպատակը պարտավոր էր
տարբերվել խալիֆաներից: Նրա համար սահմանված
էր գոտի՝ բրդից կամ մազից, իսկ այդ գոտին նա
դիտի կապեր աշխատեց, որ նկատելի լինեի բոլորին:
Նրա գլխի պաթաթը (չալմա) պիտի սև գույնի
լինեի և ավելի՛ երկար՝ քան ուղղահավասարներին:
Արգելվում էին մետաքսի գոտիներ, շքեղ հա-
լոտաններ»¹:

Ժամանակի ընթացքում այդ խստությունները
որոշ չափով մեղմացան, գեթ վերնախավի և քա-
ղաքաբնակների համար:

Ըստ արաբ աշխարհագիր Իբն-էլ-Ֆակհիի, ա-
րաբական տիրապետության ժամանակ Հայաս-
տանում կար 18,000 գյուղ: Հաշվելով յուրա-
քանչյուրում 250—300 բնակիչ, ստացվում է
լրատև հինգ հինգ միլիոն բնակչություն: Այդ մեծ
զանգվածի զգեստները, տարազը, անշուշտ պատ-
րաստվում էին տեղական տնայնագործությանը
և ըստ ավանդական տարազի, մանավանդ, ժողո-
վըրդական խավերում, ինչպես տեսնվում է 4—
7-րդ դարերի պատկերաքանդակներում (տխ. 9
և 10) և մեր մանրանկարչական պատկերացում-
ներում:

Արաբական տիրապետության ժամանակ հպա-
տակ ժողովուրդները, ընդ որում նաև հայերը,
պարտավոր էին մասնակցել նրանց մղած պատե-
րազմներին: Հայ նախարարական լրուձին նշա-
նավոր էր իրրև քաջ կովոդ ուժ, ինչպես Մարզ-
պանների ժամանակ: Սպարապետությունը մերթ

վատանում էր Մամիկոնյաններին, իսկ ավելի հա-
ճախ՝ Բագրատունիներին: Յուրաքանչյուր նախա-
րարի ղորագունդ անշուշտ ունեի, որպես զինվորա-
կան անհրաժեշտություն, իր զատորոշիչ տարազը,
զրոշակը, ինչպես Սասանյանների ժամանակ:
Գծրախտարար նրանց տարազի մասին լուսնեք
որոշակի տվյալներ:

Ժ. Բագրատունիների քաղալուրություն.— 9-րդ
դարից սկսյալ արաբական խալիֆայթը գնում էր
զեպի անկում: Այդ իրադրությունից առավելապես
օգտվեցին Բագրատունիները, գրավելով կիսան-
կախ դիրք: Ամիրապետները իրենց կապված պա-
հելու համար, դիմում էին հաճախ սիրաշահական
միջոցներին. նրանց շնորհում էին արտոններ, ու-
ղարկում էին իշխանական թանկարժեք հանգե-
ձանք՝ անշուշտ արաբական ճաշակով: Այդ պատ-
ճառով Բագրատունյաց արքունիքում պաշտոնա-
կան առիթներով սկսեցին գործածել սերպիոն (մե-
ծազանգված փաթույթով շինված պիսանոց), դու-
ռա (ապիեղևն աղնիվ պարեգոտ), ռիտա (վերնա-
զգեստ):

Արաբների քաղաքական այդ սիրաշահումներին
հանգեց պատարբեր շմաց Բյուզանդիան, որը, իր
կարգին, նույնօրինակ նվերներով, անշուշտ բյու-
զանդական արքունի ռժով, ջանում էր իր ազդեցու-
թյան ոլորտում պահել հայ իշխանավորներին՝
Բագրատունիներին, Արծրունիներին, հետագայում
նաև՝ վանանդի և Սյունիքի իշխաններին:

9-րդ դարից սկսյալ Հայաստանում ավատապե-
տությունը թևակոխում է զարգացման մի նոր շրջ-
ջան: Արդյունագործության և առևտրի աշխուժաց-
ման հետևանքով արհեստներն անջատվում են
գյուղատնտեսական արտագրության կցորդ վիճա-
կից ու զարգացող քաղաքներում դառնում են մաս-
նագիտացված ուրույն ասպարեզ: Ստեղծվում են
արհեստակցական համաքարություններ: Հյուսիս-
քեղեկի արդյունաբերությունը հատկապես մեծ
զարգացում է ապրում Գվինում և Հայաստանի մի
քանի այլ քաղաքներում, որոնց մասին հետաքրքիր
տեղեկություններ է տալիս արաբ պատմագիր
Ալ-Իսթահրին: Խոսելով Գվինի հյուսիս-արևմտյան
արտագրությունների մասին, նա գրում է. «...այս
քաղաքում արտադրվում են բրդյա հագուստներ
ու գորգեր, բարձեր, բազմոցների երեսներ, զայ-
թաններ (երիզ) և հայիկական արտագրության այլ
շատ իրեր»: Նաև՝ «Հենց այնտեղ էլ արտադրվում
են մետաքսյա շատ կտորեղեններ»²:

Պրոֆ. Հ. Մանանդյանի համաձայն ժԱՆԻԻ պե-

¹ Առ. Բ հատոր, 288.

² Ал-Истахри, Собр. мат., вып. XXIX (пер. Н. А. Карацубова), Тбилиси, 1901, стр. 19—20.

զումների ժամանակ գտնված արհեստային և զինվորական-արհեստային արդյունաբերության արտադրանք ցույց տվեց, որ Անիի և Բագրատունյաց Հայաստանի քաղաքների կուլտուրական կյանքը զարգացման ավելի բարձր մակարդակի վրա էր գտնվում, քան՝ Արևմտյան Եվրոպայի միջնադարյան քաղաքներում»¹։

Տարազային տեսակետով հարկ է նկատի ունենալ նաև այն, որ այդ ժամանակաշրջանում Բյուզանդական կայսրությունը սեղան լինելով հայկական ծագում ունեցող Մակեդոնական հարստության մականի տակ, հասել էր իր հզորության բարձրակետին, ետ էր մղում արաբներին և իր ազդեցությունը ջանում էր տարածել կովկասյան ժողովուրդների վրա։ Ուստի, բնական էր, որ բյուզանդական ինչ-ինչ ձևեր ընդունվում էին գտած լինեին հայկական արժեքներում։ Վրացիների մոտ այդ ազդեցությունը ավելի ահնաբախ է, դատելով այդ ժամանակաշրջանի նրանց հուշարձաններից (սեպտեմբեր 80 և 81)։

Շուրջ 160 տարի տևող Բագրատունիների, Արծրունիների թագավորության ժամանակից զբժարախուսար տարազային քիչ նմուշներ են հասել մեզ։

ԺԱ. Կիլիկյան Հայկական քաղաքացիություն.— Արարական, Բյուզանդական, իսկ 11-րդ դարից սկսած նաև միջինասիական քոչվոր ցեղերից՝ սելջուկների հաջորդական ավերիչ արշավանքների հետևանքով, հայ իշխաններն, որպես շարիքներից փոքրագույնը, իրենց ժողովրդով փախչում, ապաստանում էին Բյուզանդական երկրներ։ Այդպիսով, կապաղովկիայի և հատկապես Կիլիկիայի որոշ մարզերում բնակչության մեծամասնությունը հետզհետե բաղկացած է եղել հայերից։

Հայկական այդ գաղութները երկար ժամանակ պահպանեցին իրենց տարազը, լեզուն, կրոնը և բարքերը։

Ռուբինյան իշխանները, որոնք ըստ ոմանց սերում էին Բագրատունիներից, տիրապետում էին Կիլիկիայի Տավրոսյան լեռնային մարզերում։ Հետագայում, երբ նրանք հետզհետե տարածեցին իրենց տիրույթը մինչև Միջերկրական ծով և ուղղակի շփման մեջ մտան Արևմտաքի ժողովուրդների հետ, իրենց տոհմական տարազն էլ կրեց որոշ փոխազդեցություններ։ Կիլիկյան բանուկ նավահանգիստները հաճախում էին տարբեր ազգերի վաճառականներ, արհեստավորներ, լատին և հույն կրտսավորներ, ասպետներ և այլն, որոնց հետ կի-

լիկյան հայության շփումը՝ մշակութի և բարքերի վրա ազդեցություն թողեց։ Այդ մասին է վկայում 12-րդ դարի հայտնի մատենագիր Ներսես Լամբրոնացու մի նամակը, ուղղված Լևոն Ա թագավորին։

Հայաստանից՝ Ձորագետի վանականները իրենց նամակով թագավորի մոտ մեղադրում են Լամբրոնացուն, որպես Հայաստանյան եկեղեցու կարգերին ոչ հավատարիմ հեռուգի։ Լամբրոնացին այդ առևտրությամբ գրում է թագավորին, թե «...նրանց մեղադրանքի անհիմնությունը նման է այն բանին, որ դուք ես պետք չէլ ըստագուրիս լինեք, ինչպես ես լատին իշխաններն ու թագավորները, այլ՝ դեռ շարփուշ (փաթեթավոր արաբական գրություն)։ Ինչպես կրել են ձեր նախնիք, երկարեք ձեր մազերն ու մորուքը, ինչպես ձեր նախահայրերը։ Հագեք զուսա՝ լայն ու թավ և ոչ թե փիլոն կամ սեղմ պատմուճան և այլն։ Ուստի եթե հոժարիք փոխել ձերը, մենք էլ պատարագ կմատուցենք սափալսյալ և երկու կանգուն վեղարով։ Կլինինք խարաղազգեստ՝ պատարագի ժամանակ, ինչպես ձորագետցիք կամենում են և ոչ թե թթանազգեստ, ինչպես մեր կրոնն է սահմանել։ Արդ, եթե ձեզ համար ծանր է թողնել Ֆրանկների նուրբ սովորությունները և դառնալ հին, կոշտ ձևերին, մենք էլ նրանցից օգտվելով մեր կատարած եկեղեցական բարեկարգությունից շնք կարող հրաժարվել»²։

1198 թ. Կիլիկյան Հայկական իշխանապետությունը վերածվեց թագավորության, Լևոն Ա -ի մեծահանգես թագադրությամբ՝ Տարսուսի մայր եկեղեցու մեջ։ Նրան թագ ուղարկեցին Հռոմեական «արքայան կայսրությունից», ինչպես նաև՝ Բյուզանդիոնից, որովհետև երկուսից յուրաքանչյուրը ձգտում էր նրան պահել իր քաղաքական ազդեցության ոլորտում։ Բյուզանդիայի կայսրը Լևոնին նույնիսկ զգուշացնում էր չդնել հռոմեացիների թագը, այլ կրել բյուզանդականը, քանի որ երկու երկրները սահմանակից են։

Սեր պատմադրության մեջ հայ թագավորների թագադրության հանդիսությունների մասին հարևանից տեղեկություններ միայն կան։ Մինչդեռ Ներսես Լամբրոնացին տալիս է Լևոն Ա-ի թագադրության մանրամասն նկարագրականը։

Արքայական պալատում հավաքվում են երկրի բոլոր մեծ ու փոքր իշխանները և եկեղեցու պիսավորները։ Լևոն Ա-ի օման ժամանակ ներկա էին 44 հայ իշխաններ և 15 եպիսկոպոսներ, որոնք

¹ Я. А. Манабян, Краткий обзор истории Армении, М.—Л., 1943, стр. 38.

² Ն. Լամբրոնացի, Թուրքի առ Լևոն, վեճեպիկ, 1665, էջ 211.

Հանգիստավոր թափսրով առաջնորդում են թագազորություն ղեկավար հեղեցի, ուր գտնվում էր կաթողիկոսը: Թագազորույթը հագնված է համակ սպիտակ՝ «Հալավ ձիավորի» որպես ասպետ՝ փիլոնը թիկունքին առած, կարճ պատմունձանով, որի տակից տեսանելի էին ջաղջերը (անդրավարտիք), խթանավոր կոշիկները:

Թագազորության կողքին քայլում էին գունդատարը (զորատու)՝ ձեռքում թագավորության նշանակ ոսկե-խնձարը. թագազորը՝ վեր բռնած թագը, սենեցալը՝ շուշանագույն մականը, ջամբուլանը՝ (սենեկասպիտ) թագավորական հանդերձանքը:

Թիկնածուն երբ մանում է խորան, հանում են վրալի փիլոնը ու եկեղեցական արարողությանը հաջորդաբար հագնում են. նախ՝ պնդնավոր սպիտակ շապիկ, հետո մետաքսյա կարմիր պարեգտը, նրա վրա՝ պատմունձանը, կարճ ու լայն թեզանիքով: Այդ արարողության ընթացքում կաթողիկոսը երգմենցնում է թագավորին լինել հավատարիմ «սովորական երաւանցն», ազգային եկեղեցու օրհնեքներին, ավանդություններին: Այնուհետև կաթողիկոսը գիմելով ժողովուրդին, հարց է տալիս թե՛ համաձայն են նրան թագավոր ճանաչել և ուխտել հնազանդություն:

Չրանից հետո եպիսկոպոսական դասը թագավորին է հանձնում «զատեր վաղակավոր». պարանոցից կախում են մանյակ, մատին դնում մատանի ու թիկունքին անցկացնում են արքայական ծիրանագույն փիլոնը: Հետո կաթողիկոսը թագավորի աջ ձեռքն է տալիս «Խաչի վերայ խնձորոց ոսկոյ», իսկ ձախին՝ «գավազան զօրութեան և ի ծայրն ծաղիկ», որը այդ ժամանակ աղավաղված ֆրանսերենով կոչում էին «ֆլավորիս» (Fleure de lis — շուշանածաղիկ): Ամենից հետո եպիսկոպոսների շքախումբը վերցնում է «ղզպակն մեծաւ պատով»՝ այլիքն թագը ու դնում թագավորի գլխին¹:

Թագազորման այս արարողությունը այդ ժամանակի լատինական արքունիքներում կատարվածի հայացված փոփոխակն էր հանդիսանում:

Խաչակրաց արշավանքների հետևանքով Կիլիկիան և անցումի մի մարզ հանդիսացավ Արևմտաբլից եկող այդ խաժամուժին, որոնք բացի քաղաքական աղետներին, առաքյալներն նաև բարեբեր և տարազի որոշ փոխազդեցություններ: Կիպրոսի և Անտիոքի հարևան լատին իշխանությունների հետ հայ արքունիքի առնչությունների հետևանքով էլ երկրում ստեղծվեց լատինամետ կուսակցություն, որը աղաչանական կուսակցության դեմ միջոտ պայքարի մեջ գտնվեց:

¹ Ալիշան, Սխտան, Լջ 472—474 (բուզվածաբար):

Ինչպես լատինական երկրներում, Կիլիկիայում նույնպես տարածում գտավ հայկական սուպերու-թյունը (chevalier): Այդ կարգին արժանանում էին նրանք, ովքեր հանդիսավոր ուխտ էին անում ծառայել հայրենիքին, եկեղեցուն և պաշտպան կանգնել տկարներին: Խաչաղ ժամանակ նրանք հայնում էին համակ սպիտակ կարճ պարեգոտ, որի տակից մասամբ երևալու էր ջաղջերը, ստներին կրում էին երկարաձիտ կոշիկներ, կրնկին մանմեզ ամրացված (ձին խթանելու համար): Պատերազմի ժամանակ նրանք զբաղվում էին:

Կիլիկահայ արքունիքում ևս կային պետական բարձր գործիչներ, որոնցից լուրաբախչուրը անշուշտ կրում էր համապատասխան տարազ և պատվանշաններ:

Թագավորական դիվանը գլխավորում էր շահնգիւրը:

Թագավորական կալքի վերահսկիչն էր գունդըստալը:

Զինված ուժերի հրամանատարն ու գունդըստալի օգնական էր մարաշախալը (մարշալ):

Երկրի ֆինանսական գործերի մինիստրն էր սինեշալը:

Թագավորի բնտանիքի և անշափահաս թագաժառանգի խնամակալը պալլըն էր: Գահի խորհրդի նախագահն էր իշխանաց իշխանը:

Կար նաև քաղաղի իշխանի պատվակալ պաշտոնը և պալատական այլ պաշտոններ:

Բաղդատմամբ նախորդ դարաշրջանների, Կիլիկիահայ թագավորության ժամանակներից մեզ հասել են բավականին ճոխ ու ալլաղան տարազային հուշարձաններ թե՛ վերնախավի, թե՛ գինվորականության և թե՛ հասարակ ժողովրդի վերաբերյալ, որոնց անդրադարձել ենք մեր ալլոմի համապատասխան բաժնում:

ԺՖ. Փաղափական կացութունը 11—16-րդ դարերում բուն Հայաստանում.— Կիլիկիան Հայկական թագավորության կազմավորումը, զարգացումն ու անկումը (14-րդ դ.) առանձին մի գրվածք էր հանդիսանում մեր պատմական հայրենիքից դուրս: Իսկ բուն Հայաստանում, հազիվ ձերբազատված արաբական լծից, Միջին Ասիայից սկսեցին հաջորդաբար ներխուժել թուրանական վաշկատուն ցեղեր՝ սելջուկներ, մոնղոլներ, թուրքեր, արյուն ու սվեր սփռելով:

Բյուզանդիայի նկնզ քաղաքականության հետևանքով կործանվեցին Բագրատունիների, Արծրունիների թագավորությունները և հայկական այլ իշխանություններ, որոնք մինչ այդ որոշ չափով

պատվար էին հանդիսացել վերոհիշյալ քոչվոր ցեղերի առաջխաղացման հանդես:

1048 թվականից թուրանական այդ ցեղերը հետադահեալ տիրացան ոչ միայն Հայաստանին, այլ նաև՝ բյուզանդական շատ երկրներին: Հայ պետականության կործանման այդ տագնապալի ժամանակներում, լեռնային անտիկ դիրքերի շնորհիվ դեռ պահում էին իրենց ինքնուրույն գոյությունը մի քանի իշխանական տներ՝ Սյունիքում, Մոկսում, Տաշիրում: Իսկ Արծրունի իշխանների գլխավորությամբ նաև՝ վանա լճի արևելյան ափերին: Մասունում և Մշո դաշտի վրա Թոռնիկյան-Մամիկոնյան իշխանները պահեցին իրենց իշխանությունը մինչև 13-րդ դարը:

Քաղաքական աղբյուրի ճգնաժամային պայմաններում անգամ հայ ժողովուրդը ընդհանրապես պահեց իր բնիկ տարազանները:

Ինչպես ցույց է տալիս պատմությունը, քաղաքակրթության ցածր մակարդակի վրա գտնվող նվաճողները ժամանակի ընթացքում հետզհետե յուրացրել են նվաճվածների մշակույթը, ներառյալ նույնիսկ նրանց տարազային ինչ-ինչ ձևերը:

Այդպես էլ եղել է թուրանական վերոհիշյալ ցեղերի ներխուժումից հետո:

Այն, ինչ որ մենք «թուրանական» կոչեցինք, իրականում նրանք խայտաբղետ ցեղեր էին և նույն ընդող տարազը չէին կրում իրենց տափաստաններում, լինեին դրանք սելջուկներ, մոնղոլներ կամ թուրքական ցեղեր: Այդ նախնական կյանքով ապրող ցեղերը իրենց զենքերի հաջողության համար կարիք ունեին որակյալ բազմաթիվ արհեստավորների, որոնք արտադրեին զենք, զրահ, գործվածքներ և այլն: Այդպիսի մասնագետ արհեստագործներ նրանք գտան Միջին Ասիայում, իրանում և Հայաստանում: Հետևաբար «թուրանական» ընդհանուր անունով կոչված տարազային ձևերը առաջացան արտադրողների և տիրապետող սպառողների ճաշակի մի տեսակ խառնուրդից:

Այդ ժամանակի հայ մանրանկարչական հուշարձաններից մենք ընտրել ենք տարազային մի շարք բնորոշ գրեկորումներ, որոնք բաժանել ենք գլխավորապես երկու խմբի.

ա) Տարազային ձևեր, որոնք զերծ են եղել թուրանական ազդեցությունից:

բ) Տարազային ձևեր, որոնք առավել կամ նվազ չափով ենթարկվել են գերիշխողների ազդեցության:

Առաջինները պատկանում են Շիրակի, Լոռիի, Սյունիքի մարզերին, մասնավոր կանանց տարազում:

Երկրորդ դասին է պատկանում առհասարակ հայ վերնախավի տարազը:

Իսկ ինչ վերաբերում է գեղարվեստին, որոնք Հայաստանի բնակչության մեծամասնությունն էին կաղնու, այս նրանք պահպանել են իրենց վազմի բնիկ ձևերը:

ԺԳ. Հայ-վրացական տարազային առնչությունները.— Պատմական ամենահեռավոր անցյալից ի վեր այս երկու հարևան ժողովուրդների միջև գոյություն են ունեցել մշակութային, քաղաքական և գինվորական սերտ հարաբերություններ:

Այդպիսի սերտ կապերի առկայության հետևանքով, բնական էր, որ երկու ժողովուրդները միջև գոյություն ունեցած լինեին նաև տարազային առնչություններ:

Արդարև, այդ են ապացուցում վրացական աղբյուրներից մեր փոքր ի շատե քաղած նյութերը:

12-րդ դարի վերջին քառորդում, իսկ հատկապես Քամար թագուհու (1184—1213) ժամանակ ավելի սերտացավ հայ և վրացական գինվորական համագործակցությունը Ջաբարե և Իվանե սպասարար եղբայրների գլխավորությամբ, որոնք սելջուկներից հետզհետե ազատագրեցին պատմական Հայաստանի մեծ մասը:

Ջաբարյան եղբայրների և նրանց հաջորդների շնորհիվ Արևելյան Հայաստանը հարաբերաբար խաղաղություն վայելեց, որով 13-րդ դարը հանդիսացավ հայկական ճարտարապետության և զարգացման դարավառի արվեստի ու մանրանկարչության զարգացման շրջանը: Այդ զարգացումը իր արտահայտությունը գտավ նաև ազգային տարազի մեջ:

ԺԷ. Հայ ժողովրդական տարազաները թուրք-պարսկական ախրայետության տակ.— Սելջուկյան պետության տրոհման պայմաններից օգտվելով, միջինասիական վրանաբնակ քոչվոր թուրք ցեղը հեշտությամբ սկսեց իր նվաճումները: Անցնելով Հայաստանի վրայով, տարածվեց մինչև Անատոլիայի խորքերը: Որոշ ժամանակ ամրապնդելով իրենց գյուրին նվաճումները, թուրքերին հաջողվեց գրավել նաև անկման եզրին հասած Բյուզանդական կայսրության մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը, վերջ տալով նրա գոյությանը:

Թուրքերը հպատակ քրիստոնյաների գոյությունը հանդուրժում էին նրանց կեղեքելու համար, քանի որ նրանց ձեռքում էր գտնվում երկրի արդյունագործությունը, արհեստները, վաճառականությունը, մասամբ էլ հողագործությունը՝ մինչև վերջին ժամանակները: Հայ և հույն դերձակ-դերձակուհիներն էին կարում պալատականներից ըս-

կըսած մինչև հետին վինյորականի ու պաշտոնյայի զգեստները: Նրանց տարազն էլ մի տեսակ խառնուրդ էր պարսկա-արաբականի, ինչպես իրենց գիրն ու զրականությունը, մասամբ էլ լեզուն:

Թուրքերը ժամանակի ընթացքում հեռացան տիր դարձան Հայաստանի մեծագույն մասին, իսկ մնացյալը բաժին ընկավ Պարսկաստանին: Այդպիսով հայ ժողովուրդը բաժանվեց երկու հատվածի:

ա) Արևմտահայեր՝ Թուրքիայի սահմաններում:

բ) Արևելահայեր՝ Պարսկաստանի սահմաններում:

Տարազային տեսակետից էլ արևմտահայերին կարելի է բաժանել գլխավորապես երկու շրջանի:

ա) Արևելյան նահանգների՝ Տարոնի (ներառյալ Սասունը), Բարձր Հայքի, Վասպուրականի և Բարեշի շրջանները:

բ) Արևմտյան նահանգների՝ Սեբաստիայի, Կեսարիայի, Կիլիկիայի, իսկ հարավում՝ Խարբերդի և Տիգրանակերտի շրջանները:

Առաջին գոտին ավելի հարազատ պահպանել է հայկական տարազի ավանդությունները. երկրորդում՝ զգացվում է անատոլիական ինչ-ինչ ձևերի պատվաստը:

Ընդհանուր առմամբ, սակայն, արևմտահայերի տարազն իբրև մեր ժողովրդի դարավոր մշակույթի մի գրեթե ամբողջ, անկրկնելի մի ավանդ է հանդիսանում, մասնավորապես նրանց եղեռնական բնացնույթից հետո:

Ճիշտ է, որ հատկապես տղամարդկանց տարազի վրա կարելի է հանդիպել օտարոտի պատվաստումներ, մասնավորապես հայերի վերնախավում, հաճախ հարկադրականորեն: Օսմանյան կայսրության հպատակ քրիստոնյաների տարազի վերաբերմամբ թուրքական իշխանությունները հաճախ ինչ-ինչ արգելքներ են սահմանել: Օրինակ, 1581 թ. արգելվում է փակեզը կամ զավուխը՝ և հրամայվում էր գզակ դնել: Նույնպես սամուչըն պիտակն արգելված էր քրիստոնյաներին, ինչպես նաև կարմիր ֆեսը, սակայն վերնախավի նկատմամբ բացառություն էր արվում: Ահա նաև սուլթանական մի շնորհի օրինակ. 4. Պուլի նշանավոր տպարանապետ Պողոս Արաբյանին, իբր վարձ թուրքերենի տպագրության նրա մատուցած մեծ ծառայությունների, հրամայում է զերծ կացուցանել, բացի մի շաբթ տուրքերից, նաև՝ «...Իր ուտելիքի, հագնելիքի, սարը մեսիքի—դեղին հողաթափի,—անկողնի, նավակի, զավակների տարազին, պոսնիական «զերվ» զլխարկի, «թաթար-զալփաթի» մասին ոչ ոք միջամտություն չընեն. իր ծառաների զգեստը և

տարազը փոխել հարկ եղած պարագային արգելք չի հարուցել» և այլն¹:

Արևմտահայերի տարազն անի մի քանի ենթա-էջուղավորումներ: Մենք՝ որպես մեկնակետ բնարել ենք Սասունը՝ պատմականորեն մեր ամենահին բնակավայրերից մեկը և իր զմլարամատուց լեռնային դիրքով որոշ շավով զերծ մնացած օտար ազգեցություններից: Այդ ինքնատիպ տարազի փոփոխակներն են հանդիսանում նաև Մոկաի, Շատախի, Հայոց Ձորի, մասամբ նաև Բարեշի և Վասպուրականի հարավային շրջանների լեռնային գյուղերի տարազը:

Այդ կազակցությամբ անհրաժեշտ ենք համարում ճշտել մի պարագա: Եվրոպացի ճանապարհորդները և նույնիսկ հայ ազգագրագետներից ոմանք կարծել են, թե վերոհիշյալ մարզերի տարազը քրդական է: Դա անշուշտ հետևանք է մակերեսային դատողության և պատմական փաստերի անգիտության:

Սասունը, ինչպես և կղզիացած դիրքով վերոհիշյալ լեռնային մարզերը իրենց զգեստավորման կարիքները բավարարում էին տնայնագործական իրենց միջոցներով միայն: Նույնիսկ Քսենոֆոնը այդ շրջաններից անցած ժամանակ նկատել է, որ մակրոնները այժմ մազից պատրաստած զգեստներ են կրում, ինչպես մինչև վերջերս սասունցիներն էլ գործածում էին իրենց թավամազ ապին: Թովմա Արծրունիի խոթեցիների զգեստավորման մասին գրեթե նույնպիսի նկարագրական է տալիս (էջ 134): Հնուց ի վեր այդ շրջանների հայ բնակչության մենաշնորհն է եղել ջուլհակությունն ու զգեստեղենի պատրաստումը, որից օգտվել են նաև քրդերը, որպես հետևանք դարավոր համանրման կենցաղի:

Բացի այդ, 16-րդ դարի առաջին քառորդում պարսկական Շահ Իսմայիլի և օսմանյան ժալոզ Սուլթան Սելիմի միջև մղվող երկարատև պատերազմների ընթացքում, այս վերջինի կողմից որպես վստահելի պաշտպանական պատենշ, Միջագետքից մեծ թվով քուրդ ցեղախմբեր գաղթեցնելով՝ բնակեցրեց պարսկական սահմանների երկայնքով՝ հայաբնակ վայրերի միջև Եկվորները, առավելապես անասնապահ և շոգ կլիմայի բնակիչներ, բնականաբար, կարիք ունեին հայ ջուլհակների պատրաստած հագուստ-կապուստին, որով մեխանիկորեն հեռզհեռև որդեգրեցին տեղական տարազը, գրեթե աննշան փոփոխությամբ:

¹ Թեոպիլի, Տիպ ու տաս, Կ Պուլս, 1912, էջ 68:
² Լեո, Հայոց պատմություն, Գ հատոր, էջ 170:

ինչպես տեսանք, Քուրբխայի և Պարսկաստանի միջև 15—16-րդ դարերի ընթացքում տեղի էին ունենում երկարատև պատերազմներ՝ Հայաստանին տիրելու համար, որի մեծագույն մասը ի վերջո մնաց օսմանցիներին: Իսկ փոքր մասը՝ Արարատը, Շիրակը, Գուգարքը, Սյունիքը և Արցախը՝ Պարսկաստանին:

ԺԾ. Արևելահայեր.— Արևելյան Հայաստանի բնակչությանը դարերի ընթացքում արդեն ենթարկվել էր զանազան բռնագաղթների: Բազմաթուրքի թագավորության կործանումից հետո, Անիից մեծագանգված արտագաղթ տեղի ունեցավ դեպի Տրանսիլվանիա, դեպի Ահաստան: 1604 թ. Շահ Աբուսր բռնագաղթի ենթարկեց Արարատյան նահանգի, Նախիջևանի բնակչությանը Զուղայի վրայով դեպի Պարսկաստանի խորքերը:

Իսկ 1828 թ. Ռուս-պարսկա-թուրքական պատերազմների հետևանքով հայերի ներգաղթ տեղի ունեցավ Տաճկաստանից և Պարսկաստանից: Սահմանամերձ Բարձր Հայքից ներգաղթողները, թվով շուրջ 90,000, տեղավորվեցին Շիրակում, Աևանա լճի շրջակայքում, Լուդում, Ջավախք և Ախալցխա գավառներում:

Պարսկաստանից եկող գաղթականները, շուրջ 40,000, տեղավորվեցին Նախիջևանում, Արարատյան հովտում, Սյունիքում:

Տարազային տեսակետից Արևելյան Հայաստանում մենք տեսնում ենք երեք մարդ.

ա) Պատմական Սյունիքն իր վաղեմի բնիկ տարազով (մենք միշտ նկատի ունենք առավելագույն կանանց տարազը, քանի որ տղամարդկանցն ամենուրեք ենթարկվեց «Կովկասյան» համատարած ընդհանուր ձևերին):

բ) Պարսկահայերի տարազը վերոհիշյալ մարդերում:

գ) Արևմտահայ տարազի ազդեցություն՝ նրանց տեղավորված շրջաններում:

¹ Աղղթություն մեծ մասը երկուր ժամանակ զանված լինելով պարսկական տիրապետության տակ, ինչպես հայերի, նույնպես ոչ-իսլամ ուրիշ ժողովուրդների ազամարդկանց ասարզը որոշ չափով նման էր պարսկականին:

Գլխաբեզ. ուրի կամ ոչխարի մորթուց կտրված «փափանի» է. բարձր կանանկ. մերթի բուխարյա ախլով, կոմ ցածր դրանան: Միջև ձևերից վեր հասնող կարծ տարեգուտ, արխալուխ է, հաճախ մուգ կապույտգույն: Նույն գույնի է շալվարը, որի փոքրերը բնականապես ձգվելից վար երկտրամիտ կոշիկի կամ գուրլայի մեջ ամփոփված են լինում: Չուխան մուգ գույնի է, ձուկներից էլ վար երկտրոց որպես վերաբեզ: յուղնապերան լեղաներով: Պարսկաստանից ներգաղթող նույն ազամարդկանց համար ուրիշն: տարազը զգալի փոփոխություն ունի: Իսկ կանայք պահպանել են զամբիժուս, նորջու գանջուս իրենց տարազը:

Հայ տարազը Արարատյան հովտում.— Գարեբ շարունակ Արարատյան նահանգը եղել էր հայ թագավորների ժառանգական տիրույթը, որովհետև այն աշխարհագրապես կենտրոնական մի դիրք է գրավում Հայաստանի արևելյան և արևմտյան մարզերի միջև:

Տարազային տեսակետից այժմ էլ նա մի օղակ է հանդիսանում հայ ժողովրդի երկու հատվածների միջև:

Նրևան.— Ուրարտական ժամանակներից հիմնված և ավելի քան երկուսուկես հազարամյակ հրեությունավոր ալաբազը, որը վերջին մի քանի դարերի ընթացքում հանդիսանում էր նաև Արարատյան հովտի նահանգական կենտրոն, կարելի է համարել հայ ժողովրդի բազմադարյան գոյություն խարսխներից մեկը:

Հայ ազգաբնակչության հին տարազից նյութեր զօրախտաբար մեզ չեն հասել: Արևելյան Հայաստանի զանազան վայրերում գտնվող 14—18-րդ դարերին պատկանող դամբանների պատկերաքանդակներից կազմել ենք երեք տախտակ, որոնց մեջ հանդիպում ենք թաթարական տարազի ինչ-ինչ ազդեցություններից սկսյալ մինչև «Կովկասյան» տարազի նախատիպերը: Կարծում ենք դրանք զեթ մասամբ կարող են ծառայել որպես փաստական նյութ: Գալով վերջին ժամանակների տղամարդկանց տարազին, ինչպես ասել ենք, եղել է «Կովկասյանը»: Կանանց տարազը, սակայն, ոչ միայն պահպանել է հայկական իր վաղեմի հատկանիշները, այլև իր ազդեցության է ենթարկել հարևան մի քանի գավառների տարազը: Նույնիսկ Քիֆլիսի հայ կանացի տարազը ձևավորվել է Երեվանից գաղթողների ազդեցությամբ, ինչ որ տեղի է ունեցել հետևյալ պատմական անցքերի բերումով:

Վրաց Հերակլ Բ թագավորը 1778 թվականին հարձակվում է Երևանի պարսից խանության վրա, սակայն չի կարողանում գրավել բերդը: Որպեսզի ամաչացնի նրա երկիրը, իր հետ վերցնում է Երեվանի և նրա շրջակա գյուղերի հայ բնակչության մի մասը ու տանում բնակեցնում է Քիֆլիսում, Քելափում և Վրաստանի այլ վայրերում: Քիֆլիսի Հավաբար հայաբնակ թաղամասը այդ թվականին է հիմնվել:

1804 թվականին էլ Երևանից և էջմիածնից մեծ թվով հայեր գաղթեցին Վրաստան: Այդ ժամանակներից հետո Քիֆլիսում դարգացող հայ արհեստավորների և այսպես կոչված մտքալուրների շրջանակներում ավելի նրբաճաշակ մշակում ստացավ նրանց տարազը և հետզհետե տարա-

ծում զտավ ուրիշ մարդերում, ճանաչվելով որպես «Քիֆլիսի տարագ»¹:

Ջանգեզուրի և Ղարաբաղի ժողովրդական տարագը.— Լեռնային այդ շրջանները հին ժամանակ ծանոթ էին Արցախ և Սյունյաց աշխարհ անունով:

Քուրանական արշավանքների ժամանակ լեռնային այդ դժվարամատչելի մարզերը պահեցին իրենց գոյությունը որպես հարկատու իշխանություններ: Պարսկական տիրապետության ժամանակաշրջանում էլ կառավարվում էին կիսանկախ, հարկատու մեղիքներով: Տղամարդկանց տարագը «Կոլկասյանն» է: Կանանց տարագը, սակայն, ինքնատիպ հայկականն է: Այդ հազվագյուտ տարագը իր զուպ, տպավորիչ ձևավորումով, ժիրանագույնի, սևի, կանաչի և մուգ զեղնավունի զեղեցիկ զուգակցությամբ, ապահովաբար հանդիսանում է հենց պատմական Սյունիքի և Արցախի կանացի տարագի մի հարազատ նմուշ, բացի զխահարդարանքի ծանրաբեռնվածությունից, որը հետեվանք է հարեան մահճեղական բեկությունների խաթարիչ ազդեցության:

Դողբան զավառի (Ազուլիս, Օրդուբադ) և զանձակեցիների տարագը ձևով զրեթե նույն գույնն են պատկանում:

Լուին հնում կոչվում էր Գուգարաց աշխարհի Տաշիր զավառ: Բնակչության մի մասը հին բնիկներ են. սակայն 1795 և 1830 թվականներին այստեղ հայ զաղթականներ են եկել հաստատվել Ղարաբաղից, Շամշադինից Ալաշկերտից և Կարինից: Իսկ այդ իրողությունը ազդել է անշուշտ տեղական տարագի վրա:

Շիրակը աշխարհագրապես պատկանում է Արևելահայ հատվածին, սակայն մեր արքայից նրանց տարագը զետեղել ենք Արևմտահայերի

շարքում, ինչպես նաև՝ Ախալցխայի և Ախալքալաքի կանանց տարագը, քանի որ նրանք զաղթել են Կարինից և նրա շրջաններից 1829-ական թվականներին:

* * *

Հայ ժողովրդի տարագը անցնելով պատմական զարգացման երկար ուղի, չի սահմանափակվում լուրջ ազգային նեղ շրջանակներում, քանի որ տղնտեսական և քաղաքական բազմաթիվ կապերով և իր պատմական զարգացման առանձնահատկությամբ նա անբաժան մի մասն է հանդիսացել Մերձավոր և Միջին Արևելքի ժողովուրդների տարագաձևերի ընտանիքի՝ աչքի ընկնելով նաև ինքնատիպությամբ:

Հայ ժողովրդի տարագը նրա ինքնապահպանման ազդակներից մեկն է հանդիսացել. Նույնիսկ օտար փոխառությունների անհրաժեշտության զեպքերում, հայ ժողովուրդը միշտ ստեղծագործական մոտեցում է ունեցել ըստ իր սոցիալական ճաշակի և զարավոր ավանդություններին: Հատկապես պետք է նշել հայ կնոջ ցուցաբերած ավանդապահությունն այդ հարցերում: Նա միշտ հայտնաբերել է ինքնուրույն ճաշակ, ձևերի և գույների վայելչության, ներդաշնակության բնածին նրբազգայություն: Խորշի է անբովանդակ, անհեթեթ ձևերից: Հայկական տարագի զանազան փոփոխակները նման են մեր լեզվի բազմաթիվ բարբառներին, որոնք բոլորն էլ սերտորեն կապված են միասնական լեզվի հետ և նրանց նման հանդիսանում են մեր զարավոր մշակույթի անկրկնելի գանձերից մեկը:

Բացի դրանից, հայ ժողովուրդը գտնվելով Արևելքի ու Արևմուտքի ոճերի բախման ու մերթհամադրման մի մարզում, հաճախ ներգործող զեր է կատարել հարեան ժողովուրդների տարագի վրա:

¹ «Ազգագրական հանդես», զիլդ 9-րդ, 1902, էջ 200:

¹ «Կոտայկ հայոց Աշխարհի», տմասիր, 1862 թ., սպրիտ համարից, էջ 278—281:





ՄԱՆՈՒԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԱՂԲՈՒԹ ԵՎ ԱՐՆԵՐԻ

Տ Ա Խ Տ Ա Կ 1

Նկար 1 — Ուրարտուի քարակցք:

Նկ. 2 — Ուրարտուի թագավոր Արգիշտի Ա-ի բրոնզյա սաղավարտը¹, հայտնաբերված՝ Կարմիր Բլուրի պեղումներից:

Սաղավարտի հակառի աջ և ձախ եզրերից շորական վիշապ դեմ դիմաց բարձրանալով, գլուխները խոնարհել են մեջտեղի կենաց ծառին, որի երկու կողմում կան մեկական քուրմ: Նրանց տակի երկու շարքերում նույնպես շորս, ստորին շարքում՝ հինգ կենաց ծառեր կան, յուրաքանչյուրի կողքին երկու քուրմ կանգնած, որոնցից սմանք թռչնաթևերով են: Վիշապների հսկի մասում, երկու շարքի վրա մարտակառքեր և ձիավոր պատերազմիկներ են քանդակված:

Տ Ա Խ Տ Ա Կ 2

Նկ. 1. — Արգիշտի Ա-ի սաղավարտի քանդակներից առանձնացված մի մարտակառք, ուր կանգնած են երկու զինվորական. նրանցից մեկը անձորուտ երիտասարդ է: Աջով բռնել է նիզակ, իսկ ձախով՝ սանձափակերը: Կողքինը մորուքավոր է, ձեռքը հրամայաբար առաջ կարկառած: Նա կրում է պճղնավոր պարեգոտ և թիկնոց: Նրա նիզակը ամբողջով է կառքի հսկի, որի բնին կապված կա ինչ որ ժապավեն, հավանաբար որպես նշանակված զրոշակիկ:

Նկ. 2-ը ուրարտացի լեռնագնաց հետևակ զին-

վորի տիպ է², պոփոք պաշտպանված զարգմանակալոր սաղավարտով, իրանը՝ վերտավոր զրահով, իսկ սրունքները՝ սոնապանով: Կրում է փոքր, կլոր վահան և երկարաբուն նիզակ:

Նկ. 3-ը նույնպես հետևակ զինվոր է³, կարճ պարեգոտով և մեջքին հավելվածաբար սուր կապած:

Նկ. 4-ը Կարմիր Բլուրից հայտնաբերված բրոնզյա սաղավարտ⁴, որի վրայի եռաժանու ձևի նշանը, ըստ հնագետների, պատերազմի աստված Քեյշեբի սիմվոլն է:

Նկ. 5 — Ուրարտական թագավորի հուշարձան ցարդ չէ հայտնաբերված: Երկու ջալլամի միջև կեցող անձը Ուրարտուի ենթակա Մուսասիրի արքա Ուրզանան է: Հետո թագավորները միևնույն ժամանակ լինելով քրմապետ, թիկունքում կրում էին թռչնաթևեր, ըստ աստիճանի նա զլխին ունի թասաձև խուչը: Պատմուհանը պճղնավոր է, կարճաթևան և ամփոփված է մեջքին շուրջ գոտիով և զարդարված երեք շարք լայն ծոպերով: Այս հուշարձանը կարող է մտաւոր պատկերացում տալ ուրարտական թագավորի⁵:

Նկ. 6-ը ոսկյա մի մեզալիտնից է⁶, որի վրա պատկերված են երկու կին, մեկը զահի վրա բազմած, հավանաբար թագուհի կամ աստվածուհի է, զլխին երկար, զարդարուն քողով: Պատմուհանը պճղնավոր է, կարճ թևակալով, զղանցքը եզեր-

² Սարժանտարի պղնձյա քանդակներից (Հայտնի, 26):

³ Նույն տեղում:

⁴ ՀՊՊԹ:

⁵ Հասպալի թանգարանում, որպես կնիք (Հայտնի, 18):

⁶ Քեուլիի թանգարան (Հայտնի, 33):

ված՝ ծուպավոր լայն ժապավենով: Մեջքին կապել է զոհարարադր լայն գոտի. բազուկներին կրում է ապարանջան: Նրա դիմացը կանգնել է խնդրարկու մի կին, նույնպես պեղծավոր և զարդահյուս պարեզոտով, գլխին՝ ավելի կարճ մի թուղ:

Նկ. 7, 7՝—Նախորդ կանանց գլուխները թողածով լինելով, նրանց հերահարողարանքը տեսանելի չէր: Այդ տեսակետից ուշադրավ է այս նկարը, վերջում բրոնզյա թռչնաթև մի արձանիկից, հայտնաբերված՝ Վանում¹: Մենք նկարել ենք առանց թռչնաթևի, քանի որ մեր նպատակն է ցույց տալ ուրարտացի ազնվական դասի կնոջ շնորհալի հերահարողարանքը՝ դիմացից և ծոծրակից դիտված: Հետագայից է նաև կնոջ կրծքամասի զարդական հորինվածքը:

Նկ. 9-ը Կարմիր Բլուրից գտնված պատերազմի աստված Քեյշեբի արձանիկն է²: Գլխին կրում է թագանման մի գանգվածեղ գլխանոց, որի վերևում կա դլանաձև մի խողովակ, որպես հարմարանք՝ արձանիկը մի տեղից կախելու: Ընկալալի երկու կողմից վեր են ցցվել մի զույգ եղջյուր, որպես նշան հզորության: Պատմաճանի վրա կրում է պեղծավոր մի վերարկու, կարճաթևեղան, որը ձախից աջ ուսընդանուր շեղակի իջնում է՝ եզերված լայն և երկար ծոպ ժապավենով: Քղանցքն էլ եզերված է նույնպիսի ժապավենով: Հանդերձի վերջին գարդական այդ ժապավենները կամ էջարպաները ինչպես ասորեստանցիների, նույնպես և ուրարտացիների մոտ բարձր աստիճանավորի նշան էին: Քեյշեբը աջով բռնած ունի մի գուրզ, իսկ ձախով՝ սակրի նման մի զենք:

Նկ. 12-ը պտղաբերության դիցուհի Բագբարզու աստվածուհին է³, որ համապատասխանում է մեր հեթանոսական շրջանի Անահիտ դիցուհուն: Բրոնզյա սուրն արձանիկը՝ գտնված Վանի մոտ, Գարաբեյ ամրոցում, տալիս է ավելի ամբողջական մի պատկերացում ուրարտական բարձր դասի կնոջական տարազի:

Նկ. 10-ը բրձական տարազի մի նմուշ է, վերջում՝ Արգիշտի Ա-ի վերոհիշյալ առաջավարտից:

Նկ. 11-ը պալատական ծառայողի կերպարը ներկայացնող բրոնզյա մի արձանիկ է⁴, հանդերձանքի գլխավոր մասերը նման են Քեյշեբի կրածին: Սա նույնպես տղամարդ է, գանդահեր, բայց զենքը հերազուրկի Գրա համար ոմանք այն համա-

րում են պալատական ներքինի: Նրա ձախ ուսի վրայից առկախ ձգված է մի լայն ժապավեն, նրման՝ հետագայում եկեղեցական ուրարի, որը նույնպես աստիճանավորի նշանակ է: Աջ ձեռքում բռնել է մի հովհար, ինչ որ իր պաշտոնի հանդամանքն է ցույց տալիս:

Նկ. 8-ը նախորդի մի հարկատու է հավանաբար⁵, ու մի հազվագյուտ նմուշ՝ ժողովրդական տարազի: Պատմաճանը կարճ թևերով ունի, պեղծավոր է և երկփեղկանի, մեջքից վար ծուպերով երիզված: Քղանցքի աղեղնաձև բացվածքից երևում է ներքնազգեստը, նույնպես ծուպերով երիզված: Մեջքին ունի նեղ գոտի: Ուսից դեպի թիկունքը ձգված է մի ինչ որ անձնոցիկի Գլխարկը՝ հիշեցնում է փոյուզակաճը, սակայն ծայր փոխանակ դեպի առջ ծավալված լինելու, թևերում է դեպի ետև՝ ծոծրակը: Կողիկը երկարաճիտ է և ցըցուն թթով, ինչպես հատիկաշաղկան է լեռնալիս ժողովուրդներին:

Տ Ա. և Տ Ա. Կ 3

Վերևի շարքում՝ Ա, Բ և Գ երեք աստվածությունների կերպարներն են: Ա-ը հաղի գլխավոր աստվածն է, առյուծի վրա կանգնած: Բ-ը Քեյշեբն է ցույց վրա: Գ-ը՝ Շիրիլի աստվածուհին, որ գլխի վրա կրում է արևի սկավառակը խորհրդանշող երկաթական թռչնաձևը: Սրանց տարազն էլ բարձր դասի անձնավորությունների զգեստավորման մի նմուշ է հանդիսանում:

Ստորին շարքում՝ Ա և Բ—Ուկրիս փոքր արձանիկ, գտնված՝ Քոփրակ-Կայալից, որոնք ուրարտական կնոջ տարազի նմուշ են: Ա-ը գիտված է կոնակից: Գանգրված մաղբը իջնում են ուսերի վրա: Պարեզուտի վրա ուսընդանուր կրում է երկար ծուպերով մի էջարֆ, որը մեջքում սեղմված է դոտիով: Պարեզուտի քղանցքն էլ եզերված է ծուպերով: Բ—բանդակը կնոջ գլուխ է, ծաղկազարդ մի զգակ դրած, որի տակից մաղի փնջիկներ եզերում են ճակատը, իսկ թունքերն է վար իջնում են գանգրված զույգ խոպոպ: Վրի շուրջ մանյակ ունի: Բ-ը պատկերում է ծոծրակի մաղբի հյուսքը:

Գ-ը Նորից Քեյշեբ աստվածն է⁷—Ատեյնճևլպից (Վան) հայտնաբերված, որպես բարձրաբանգակ—ցուլի վրա կանգնած: Նրա տարազը այստեղ ավելի շքեղ է և մանրամասն պատկերված: Գլխին կրում է զոհարարադր թագ, զագաթում՝ մի ծաղիկ: Ծա-

¹ Б. Б. Пиотровский, История и культура Урарту, Ереван, 1944, стр. 227.

² ԳՊԹ.

³ Նույն աղբյուր:

⁴ Գտնված՝ Քոփրակ-Կայալից (Վան):

⁵ Աճ. Ա հատր. էջ 228.

⁶ Կարմիր Բլուրից, ԳՊԹ.

⁷ Б. Б. Пиотровский, Искусство Урарту, стр. 97.

կատմաստում նույնպես ունի զույգ եղջյուր: Երկար պատմուճանը համակ ծաղկահյուս է և զեղեցիկ եզրազարդով: Քեղանիքը կարճ են: Բազկին կրում է ապարանջան: Կողքից երևում է մեջքին կապած արի երախակար:

Տ Ա Ա Տ Ա Ա 4

Նկ. 1-ը ներկայացնում է Հին Բայազետի մի քարայրի մուտքի վրայի եղծված բարձրաքանդակի վերականգնված նկարը:

Այս հուշարձանի ժամանակի և պատկանելիության մասին որոշ տարակարծություններ կան հնագետների միջև: Ոմանք այն համարում են արիմենյան, ոմանք՝ մեդական, ոմանք էլ՝ ուլար-սական: Ենթևով տարազային ձևերի մեր բազդասական քննարկումից, մենք շատանք որևէ հավանական նմանություն և հատկանիշ մեզ ծանոթ վերոհիշյալների հետ: Ուստի մեզ այլևի հավանական է իմում, հենց իր տեղադրությամբ էլ, այդ հուշարձանը վերագրել հայ ժողովրդի բազդաստանի տարրերից մեկին՝ հայասներին կամ ավելի շուտ՝ արմեններին, քանի որ այս վերջինները դարձվոր հարևան են եղել փոյուզացիներին, որոնց անունով ծանոթ գլխարկ են կրում սույն հուշարձանի երկու անձնավորությունները:

Նկ. 2-ը Պերսեպոլիսի բարձրաքանդակներից է՝ ուր բազմաթիվ հարկատու ժողովուրդների կերպարների կարգին կա նաև այս քանդակը, որը մասնագետները կարծում են արմեն հարկատուներ, քանի որ նրանք որպես հարկ տալիս էին ընտիր ձիեր և զինի:

Նկ. 3, 4 և 5-ը նեմրուք-դադից (Կոմագենի շրջան, որը հնում մասն էր կազմում հեթանոսական պետության) վերջերս հայտնաբերված հուշարձաններից վերջերս ենք այս երեք տիպական նմուշները, որոնց զվաճարգարանքի ոճը որոշ խնամություն ունի մեր տարազային ձևերին²:

Տ Ա Ա Տ Ա Ա 5

Նկ. 1-ը Արտաշես Ա-ի ժամանակակից Մոփքի հայ թագավոր Զարեհի, նկ. 2-ը՝ Արշամի, նկ. 3-ը՝ Քսերքեսի դրամներից են:

Նկ. 4-ը Տիգրան Մեծի հանրածանոթ դրամն է: Նրա մարգարտաշար թագը, շքեղ և ինքնատիպ, շի նմանվում նրա ժամանակակից ոչ մի արքայի թագին,

ուր զետեղված են ազգային նվիրական սիմվոլներ հանդիսացող ութնասագայթյա արևը, որի երկու կողմում՝ մեկական արծիվ, զլուխները զեպի լուսատուն դարձրած: Թագը օժտված է մարգարտաշար ծոծրակապանով և ականջապանով: Թագի վարի եզրի շուրջ բուրված է նվիրական սիմվոլ հանդիսացող թագակապ ժապավենը՝ ծոծրակի վրա հանգուցված և ծայրերը առկախ ձգված: Ականջին կրում է զեղաձև օղ: Վզի շուրջի ծայրերը արքայական ծիրանիին են:

Նկ. 5-ը Տիգրան Բ-ի որդի Արտավազդ Բ-ի դրամն է: Նրա թագը ժառանգականորեն նման է հոր թագին, բացի թագակապ հանգուցի ձևից, որը հակաստմասում ինքնատիպ մի ծաղ է ձևացրած: Ականջապանը հասցված լինելով, երևում է ականջը, սակեօղով զարդարած: Ուսի վրա ճարմանդած է արքայական ծիրանին:

Նկ. 6-ը Տիգրան Գ-ի թագուհու՝ Երատոյի կերպարով մի դրամ է³, որի թագը թեև զոհարազարդ է, սակայն պարզ շեն վրայի սիմվոլները: Արանում հատկանշականը թագի կատարից զեպի կուրծքը իջնող մարգարտաշար երկար մանյակն է:

Նկ. 7-ը «Պարտված Հայաստան» մակագրությունը մի քանի դրամներ են կարել հոռոմեացի նվաճողները, պանծացնելու իրենց ստոր հաղթանակը: Սա մի նմուշ է դրանցից, ուր պատկերել են բեկված աղեղնալարի վրա հանգչող հայկական մի թագ:

Տ Ա Ա Տ Ա Ա 6

Նկ. 1-ը ներկայացնում է հոռոմեական մի այլ դրամ⁴ (20 թ. մ. թ. ա.), ուր պատկերված է «Պարտված Հայաստանը»՝ ծնրագիր մի հայ թագուհու գիրքում: Նրա կոնաձև թագը եղելովս է թագակապ հանգուցյով: Որպես պարտվածի, այն ներկայացրել են մի պարզ պարեզոտով, որի տակից երևում է երկար ու նեղ փողբերով անդրավարտիքն, ըստ հայապարթև տարազի, ինչպես պիտի տեսնենք նաև Հայաստանում:

Նկ. 3-ը նույնպես, մի «Պարտված Հայաստան» է (163 թ. մ. թ. ա.), ուր ձևեր ծնոտին նստել է մի հայ թագուհի: Սրա թագի ձևը տարբեր է նախորդից և նման է խուչրի, եղելովս ատամնավոր զարդով, բայց զուրկ է թագակապ հանգուցից: Սուրբական պարեզոտի վրա հագել է երկար թեղանիքով մինթան, վարի եզրը զարդական հատվածներով: Սրա

¹ E. Schmidt, Persepolis, Chicago, 1953, p. 29.
² Юнеско - Курьер, № 2 (февр. 1962), Непруд-даг.

³ Վիեննայի Մխիթարյանների մաս:
⁴ Բրիտանական թանգարանում:

պարեզոտի տակից էլ երևում է սեղմ փողբերով անդրավարտիքը:

Նկ. 2-ը միևնույն թվականին պատրաստված շքադրամ է¹, նույնպիսի նպատակով կտրված: Թևավոր «Հաղթանակ»-ի դիմաց կան երկու հալ գինվոր, մեկը զենանին նստած: Նրանցից վերջված հանդերձանքն ու զենքերը բարձել են մի տեսակ հանդերձակալի վրա, ուր կան նաև երկու վահան, աղեղ ու կապարճ, մի գլխարկ՝ փոյուզական ձևով և այլն:

Նկ. 4 և 5-ը նույնպես «Պարտված Հայաստան» մականգրուձևով հոռմեական դրամներն են՝ (20 թ. մ. թ.), որոնց վերակազմությունը տվել ենք տխ. 7, նկ. 3, 4 և 5-ում:

Տ Ա. Խ Տ Ա. Կ 7

Նկ. 3-ը հայ հետևակ զինվորի մի ազոտ պատկերացումն է տալիս, քանի որ հոռմեացիները ջանացել են անշքացնել այն որպես «պարտվածի»: Մինչդեռ, ըստ խորհրդանշանի, դեռ Երվանդյան Տիգրանի օրերից հայկական բանակն օժտված է եղել կուռ կազմակերպվածությամբ. «Հետևակ կովոդները ձևավոր դարձան, պարեզով կովոդները՝ հտջող սղեղնավորներ. կուպուլով կովոդները զինվեցին արերով և տեղավոր նիզակներով. մերկերը պատպարվեցին վահաններով և երկաթե զգեստներով. և երբ նրանք մի տեղ հավաքվեին, միայն նրանք արտաքին տեսքն ու նրանց պահպանակները և զենքերի փայլունքը բավական էին թշնամիներին հայածելու և վանելու»²: Իսկ Տիգրան Բ-ի բանակը ճոխապես հանդերձված էր ազգային զինվորական տարազով: Հոռմեացի Ապպիանոս պատմիչի համաձայն՝ «Երբ հոռմեացիները հաղթեցին, տիրապետության բանակի զոհվածները վրա տեսան ապարանջաններ և զուսմարտակներ (մանյակ), բայց լուպան դրանց, որովհետև զորավարն արգելել էր կողոպտելը»³: Այդ զարդերը անշուշտ պատկանում էին բարձրաստիճան զինվորականներին: Սույն նկ. 3-ում ջանացել ենք տալ զինվորի տարազի հատկանշական մասերը՝ կոնաձև գլխանոց, ծոծրակավոր, կարճ պարեզոտ, մեջքի շուրջն ամփոփված Նեղ գոտիով, որից առկախ է պաքակալը: Որպես զենք կրում է աղեղ և նիզակ: Պարեզոտի տակից, ծնկներից վար՝ անդրավարտիքն է, որի

փողբերը ամփոփված են երկարաձիտ կոշիկի մեջ:

Նկ. 5-ը հետևակ զինվորի մի ուրիշ տարբերակն է, ըստ տխ. 6, նկ. 2-ի հոռմեական դրամում հայ գերի զինվորների և նրանց զենքերի տվյալները՝ փոյուզական գլխանոց ծոծրակավոր, մի թիկնոցակ, աչ ուսի վրա ճարմանդած: Մեջքին կապած է պատենավոր սուր: Վահանը թվում է ճղահյուս և կաշեպատ, ինչպես արմենների մոտ: Ոտներին՝ արեխ, անդրավարտիքի փողբերը ամփոփված փաթույթով:

Նկ. 4-ը համարվում է հայ քաղաքացու տարազ: Գլուխը ծածկված է փոյուզական գլխարկով, իսկ կոնակը՝ թիկնոցակով, որի ծայրերը կրճի վրա հանդուցված են: Մեջքին փաթաթվել է բազմածալ գոտի, ինչ որ մի անհրաժեշտություն էր հայկական բարձրավանդակի բնակիչների համար: Անդրավարտիքը բազմածալ է, փողբերը կոշիկների մեջ ամփոփված:

Նկ. 1 և 2-ը նույնպես հայկական տարազ են համարվել հոռմեացիների կողմից: Արդարև, տրվյալ ժամանակներում հայերի և պարսիկների տարազի միջև սերտ նմանություն է գոյություն ունեցել:

Նկ. 1-ը Հայաստանի գահակալ պարթև Արշակունի Պարթամասիքի քանդակն է՝ իր մանկավիճի հետ⁴:

Նկ. 2-ը մ. թ. երկրորդ դարի մի արձան է, Արմենիան ներկայացնող: Նույնպիսի Պոսեյդոնյան թանգարանում հոռմեական տիրույթները ներկայացված են եղել յուրաքանչյուր երկրի տիպական մի կերպարով: Հայաստանը, ուրեմն, ներկայացված է հայապարթև տարազով՝ մի կնոջ կերպարով: Նրա գլխարկը հատուկ կոնաձև է, ծոծրակավոր, ինչպես հայկական նախորդ տիպերը: Բազմածալ մի թիկնոցակ ուսերի վրայով ճարմանդած է աչ կոշտում, ինչպես տեսնում ենք Պարթամասիքի վրա ևս: Երկուսի պարեզոտներն էլ հասնում են մինչև ծնկները. սակայն «Արմենիան» հազել է մի երկրորդ ևս, որի առաջամասում մեջքի շուրջը վարագուրաձև զարդածալքեր են գոյացրել: Երկուսի սեղմ անդրավարտիքը ծնկներից վար երկարում է մինչև կրունկները և հասնում ոտնամանին:

Տ Ա. Խ Տ Ա. Կ 8

Որպես Տիգրանյան ժամանակաշրջանի մինչև այժմ ներկայացված տարազաձևերի համատեղում պատկերել ենք Տիգրան Մեծի արթունքը, ուր գահի վրա բազմած է «Արքայից արքան»։ Նրա կող-

¹ Փարիզի հայկական մատենադարանում:

² Բրիտանական թանգարանում:

³ Մ. Խորենացի (Աշխ. թարգմ. Մա. Մալխոսյան), էջ 16:

⁴ Աղպիանոս, Յազգու Միհրդատեան մարտին (Հայտն. նի, 82):

⁵ Հոռմե կոստանդիանոսի հաղթական կաճարի վրա:

բին՝ կղեկապարթ թագուհին, շրջապատված իր նածիշտներով: Պալատում կան պետական զինվորական և քաղաքացու տարազ կրող բազմաթիվ անձնավորություններ¹:

S U. Խ S U. Կ 9

Նկ. 1 — Այս պատկերաբանդակը, հայտնաբերված Աղջի Արշակունյաց զետնադամբանից, հասկանալի հեթանոսական շրջանից մի պատկերացում է համարվում: Կողքի վերակազմությունից ստացվեց տվյալ ժամանակի տղամարդու մի տարազի նմուշ:

Նկ. 2 — Խաղաղաբազի մի բարձրաբանդակ է, հայտնաբերված Գլխից: Սա կարելի է 5—6-րդ դարերի աշխատավոր հայ կանանց զգեստավորման մի նմուշ համարել:

Նկ. 3-ը նույնպես Գլխից գտնված և գրեթե նույն ժամանակաշրջանի մի բարձրաբանդակ է, ուր նախնական արվեստով պատկերված է կանացի մի կերպար, սրբուհու լուսապսակով: Կողքի մեր վերակազմությունից պարզվում է, որ դա տրվյալ ժամանակի քաղաքաբանակ կնոջ տարազի հազվագյուտ մի նմուշ է: Նրա մազերը ամփոփված են մի գլխաշորով: Վերնազգեստը պնդակալի է, սեղմ թեղանիքով, կրծքից մինչև գոտկատեղին փակ է, սակայն մեջքից վար երկնզվում է, բաց թողնելով առաջամասը: Պատմաճանը այդ մասից ունի հաջորդական հինգ աղեղնաձև ծալքեր՝ մինչև ծնկները, իսկ նրանցից զեպի վար՝ 6—7 ուղղաձիգ ծալքեր իջնում են մինչև ոտները: Ընդհանուր կերպարը ձևավորված է զուսպ, բարձր ճաշակով:

S U. Խ S U. Կ 10

Նկ. 1—10-ը պատկերաբանդակներ են 4—7-րդ դարերի, որոնց յուրաքանչյուրի կողքին տրված է վերակազմությունը, իսկ բացատրությունները՝ տխ. 12-ում:

S U. Խ S U. Կ 11

Նկ. 11—20-ը շարունակությունն են 4—7-րդ

¹ Կարանական այս վերակազմությանը կատարելիս օգտուվել ենք Տիգրան Բ-ի և Արտավազ Բ-ի զրամներից. Թագուհու կերպարի հոմար՝ ախ. 5, նկ. 6 և տխ. 6, նկ. 1 և 2. Իսկ հայ քաղաքացու՝ տխ. 7, նկ. 4-ից: Օգտվել ենք նաև օտար տարագաններից՝ ախ. 70, Ա. շարքի նկ. 4, Բ. շարքի նկ. 6, և տխ. 91, նկ. 5-ից:

² I. Baïtrusaitis, Etude sur l'art medieval en Georgie et en Armene, pl. LXXXII, № 137.

դարերի պատկերաբանդակների, որոնց բացատրությունները ևս տվել ենք հաջորդ՝ տխ. 12-ում:

S U. Խ S U. Կ 12

Թովանդակում է նախորդ երկու տախտակների վերակազմությունները, մերթ թվական ոչ նույն հաջորդականությամբ, որոշ խմբավորում կատարած լինելու պատճառով:

Կոթողային հուշարձաններից բազմած այդ քրեան տարագանները կարելի է բաժանել երեք խմբավորման.

Ա. Քաղաքաբանակ ժողովրդի տղամարդկանց տարազներ՝ նկ. 1, 2, 8, 10, 11, 12 և 18:

Բ. Կանանց տարազներ՝ նկ. 4, 7, 9, 16 և 17:

Գ. Վերնախավի տարագաններ՝ նկ. 3, 5, 6, 13, 14, 15, 19 և 20:

Նկ. 1-ը Աղջի Արշակունյաց դամբարանից է, քրիստոնեական վաղ շրջանի՝ 4-րդ դարի գործ: Հագել է կարճ մինչև ծնկները հասնող պարեզոտ, կարճ թեղանիքով: Անզրավարտիքը լայնկիկ է, փողբերը միմյանց երկարաճիտ կոշիկների մեջ:

Նկ. 2-ը խոշազուխ՝ պատկերված է, հավանաբար, որպես Տրդատ Գ-ը: Պատմաճանը նման է առաջինին. միայն թղանցքի կողքերը ճեղքվածքով են, և մեջքը սեղմված է նուրբ գոտիով: Ուսը ներդնաթի կրում է հոռմեական սոկա:

Նկ. 3-ը Քասաղի քառակող կոթողի պատվանդանից է և ներկայացնում է, ըստ պրոֆ. Առաքելյանի, Տրդատ Գ-ը³:

Նկ. 4-ը վերցրել ենք էջմիածնի տաճարի հյուսիսային պատի մեջ ազուցված մի քանդակից (4-րդ դար), ուր հունարեն գրված է «Թեկլա» անունը, ծանոթ՝ որպես Պոդոս առաքյալի գործունեության անշակից քարուհի: Սա ուրեմն հանդիսանում է մի հազվագյուտ նմուշ տվյալ ժամանակի հայ կանանց տարազի: Մազերը ճակատից երկճրզված, պսակաձև շրջանակում են դեմքը: Կրում է մի պարզ պարեզոտ, մեջքը ամփոփած նեղ մի գոտիով: Քղանցքը շորս ծալքերով իջնում է մինչև ոտները: Թեղանիքը նեղ են և երկար:

Նկ. 5-ը վերցրել ենք Օձունի հուշարձանի քանդակներից: Սա ևս ներկայացնում է Տրդատ Գ-ը: Հուշարձանը սկսած է կատուցված լինել 6-րդ դարի սկզբներից ոչ ուշ⁴: Վերնազգեստը երկարում է մինչև ծնկները: Մեջքին կապել է արքայական կա-

³ Բ. Առաքելյան, Հայկ. պատկերաբանդակները Գ. և զգ., Երևան, 1949, էջ 43:

⁴ Նույն տեղում:

մար, որից կախված է սուրբ: Վերաբերուի տակից երկարում է պատմութեանը՝ մի ինքնատիպ ձևով. դա՛ առաջակողմի կարծութիւնն է հետնամասից, հավանաբար քայլելու կամ ձի հեծնելու դուրս-թիւն համար և համապատասխանում է զուցե Փավստոսի հիշատակած «նոտրկոտուր» ձևին¹: Անդրավարտիքի փողքերը ներգացած, իջնում են կոշիկի վրա:

Նկ. 6-ը կոթողի նույն տիպի քանդակներից է և նախորդի հետ ունի տարազային որոշ ընդհանրութիւն:

Նկ. 7-ը Քալիւնի շրջանի Գառնահովիտ (Ազիա-ման) դուրից բառակոփ մի կոթողի քանդակներից է: Կի՛նը երկու ձեռքով զլխից վեր է բարձրացրել մի ափսե, ուր կան նախշուն երկու նկանակ: Հագել է միւթեան, երկար և նեղ թեզանիքով. մեջքն ամփոփված է նուրբ զտիւթով, որի ծայրը առկախ է: Մինիթանի տակից պարեգոտը իջնում է մինչև ոտները:

Նկ. 8-ը Քալիւնի պատվանդանավոր մի կոթողի քանդակներից է և, ըստ պրոֆ. Բ. Առաքելյանի, ներկայացնում է Գրիգոր Լուսավորչի կերպարը: Տարազային տեսակետից հետաքրքիր է, սակայն՝ ստարակուսչի, որովհետև եկեղեցականի զգեստավորումով չի ներկայացված, այլ՝ մի բազմաձև տակ² է կրում, ուսերդանութ ձգված:

Նկ. 9-ը վերահիշյալ կոթողի պատվանդանի քանդակներից է և ներկայացնում է Տիրամայրը, աթոռի վրա բազմած, մանուկ Հիսուսը գրկին: Նրա երկու կողմում կանգնած են երկու հրեշտակ: Թե՛ Տիրամայր և թե՛ հրեշտակների տարազը մի նոր ներդրում է հանդիսանում 5—7-րդ դարերի հայ կանանց ժողովրդական տարազը բացահայտելու գործում:

Ինչպես տեսնվում է վերակազմութիւնից, Տիրամայր մազերը ամփոփված են զլխաշորով: Պճեղ-նավոր պատմութեանի վրա կրում է ստուան³:

Գալով երկու հրեշտակների կանացի տարազին, ձախակողմյանի մինիթանի ծայրերը բոլորչի են, թեզանիքը՝ երկար ու լայնավոր լայնքով: Պարեգոտը երեքական ծալքով իջնում է ոտներին: Աջակողմյան հրեշտակի մինիթանը գրեթե նման է նա-

խորգին, բայց եզրերը դարդական ծալքերով են վերջացած:

Նկ. 10—Ազարակի քառակող կոթողի պատվանդանի քանդակներից է, 6—7-րդ դարերից: Չորս անձեր կանգնած են կողք կողքի, մոտավորապես նման զգեստավորումով: Չորսն էլ հագել են մինչև ծնկները, կամ քիչ ավելի վար երկարող պատմութեան, որի վրայից հագել են մի տեսակ վերաբերու, որի ծայրերը ուսերից իջնելով՝ միանում են կրծքի վրա, եռանկյունաձև առկախ վիճակում:

Նկ. 11-ի պատմութեանը երկարում է ծնկներից քիչ վար, կողմնակի սովորական ճեղքվածքով: Վերաբերու դարսել է թևերին, որի վրայից առկախ է ընկել Լոսանկյունաձև մի մաս, հավանաբար օձիքը:

Նկ. 12-ը վերջրել ևնք Քալիւնի մի կոթողի բեկորից: Սրա զգեստը նման է նախորդին. սակայն սրա մեջքից վար իջնում է եռանկյունաձև, ծայրը կտրված, զոգնոցանման մի կտոր, ինչ որ մեզ են-թաղրել է սալիւ, թե ներկայացված անձը պատկանում է իշխանական տոհմի:

Նկ. 13-ը Հառիճի վանքի կոթողից է⁴, 4—5-րդ դդ.: Թիկունքին կրում է լայնկեղ վերաբերու, առկախ ձգված թևերով, ինչպես սովորութիւնն էր հայ Արշակունի թագավորների մոտ:

Նկ. 14-ը Խարբաբ վանքի կոթողի քանդակներից է, նախորդի մասնակալից ու գրեթե նմանօրինակ տարազով:

Նկ. 15-ը Օձունի կոթողի քանդակներից է, ուր ներկայացված է մի երիտասարդ, հավանաբար իշխանական ծագումով: Սրա տարազը՝ ինքնատիպ է և բնիկ հայկական: Հագած է կարճ՝ մինչև ծրնկները հասնող վերաբերու, առաջամասում երկփեղկանի: Օձիքը ճաճանչաձև ասեղնագործված է: Թեզանիքը աննախընթաց ձև ունի. սովորականի նման խողովակաձև չէ, այլ՝ հասնելով մինչև արմունկը, անութից վար երկնղվում է, որի միջով բազուկը կարող էր անցնել և ազատորեն շարժվել: Վերաբերուի քղանցքը եզերված է ասեղնագործութեամբ: Մեջքը ամփոփված է կաշվե նեղ զտիւթով, որից առկախ է աջակողմում, ինչ որ անսովոր է, սուրբ: Զարդահայտ պարեգոտը նույնպես ինքնատիպ է՝ առաջամասում քղանցքի եռանկյունաձև բացվածքով: Երկու կողքերից մինչև ծունկը ճեղքվածք ունի, քայլելու դուրսութեան համար: Երևում են նաև անդրավարտիքի փողքերը, որոնք իջել են կոշիկի վրա:

¹ Փավստոս Գրգանդ, 263.

² «Տօկոս»-ն համեմատելիներին հատուկ ազգային զգեստ էր, բազմազան ուղիղակ, երկայն մի կերպարից, որով փոթաթվում էին և այդպիսով ձգում էին դասորչվել «բարբառաներից», այսինքն ուրիշ ժողովուրդներից:

³ Ինչ որ էր տոկան համեմատի այդ մարդկանց համար, նույնն էր ստուան կանանց համար: Ստուան կրում էին առնիկայի վրա, որն հագնում էին ուզակի մարմնի վրա:

⁴ Հ. Գրիգոր:

⁵ Նույն տեղում:

Նկ. 16-ը Քալիդի մի կոթողի քանդակներից է (5—7-րդ դդ.) և ներկայացնում է թևավոր հրեշտակ, քարզված գլխով: Հրեշտակի կանացի զգեստը իր ճաշակավոր ձևավորումով կարելի է համարել մեր պատկերաբանագիտության լավագույն նմուշներից մեկը, բնիկ հայկական ոճով:

Նկ. 17-ը նույնպես Քալիդից է (5—7-րդ դդ.) պատկերացված՝ որպես հրեշտակ, կանացի տարադու: Սա թիկունքին կրում է վերարկու, որի երկար ծայրերը, ինչպես տեսանք նախընթաց մի քանի ձևերում, ուսերի վրայից իջնում են զարդականորեն կանոնավոր փոթերով և միանում՝ կրծքի վրա ու հասնում մինչև ծնկները: Պարեգտը երկար է, մեջքից վար մինչև ազդրերը երկու կողմից իջնում են ազդերածև յոթ կանոնավոր ծալքեր, որպես զարդ:

Կանացի այս տարազն էլ նույնքան ինքատիր է և զեղեցիկ, որքան նախորդները:

Նկ. 18-ը Հատիճի վանքից է՝ (5—6-րդ դդ.), նույնպես մի կոթողի քանդակներից և ներկայացնում է Գանիկը առյուծների գրում: Տարազային տեսակետից սա ևս ունի ինքնուրույն հանգամանք: Քանդակը թևե շատ պարզունակ արվեստով է կատարված, սակայն հանդերձի մասերը սրված են իրենց բնորոշ գծերով: Գլխին կրում է թափաձև զղակ: Քունքերից մազափնջիկներ են իջնում և ծածկում ականջները: Գեմքը մորվանի է: Վերարկուն փիլոնածև է: Պատմությանը գոտուց սկսյալ երկձողում է և թողնում եռանկյունաձև մի բացվածք, որի տակից ներքնազգևտան է երևում, երեք շերտավորումով: Անզրավարտիքը խոզովակաձև իջնում է մինչև ոտները:

Նկ. 19-ում 6-րդ դարի պատմական մի անձնավորություն է: Պատկերված է իշխան Մանուել Ա՝ մատունին (510—590) ձիավոր, առյուծը նետահարելու խոյանքի մեջ¹: Սույն քանդակը զետեղված է իր իսկ կառուցած Պտղոսի եկեղեցու հարավային մուտքի վերև: Նրա տարազի ընդհանուր ձևերը գրեթե համընկնում են մինչև այժմ քննարկվածների: Գոգակը թուղածև է, ծայրը զեպի էտ հակված, Մորուսը բոլորչի է, շափավոր երկարությամբ: Նրա քունքերից էլ իջնում են մազափնջեր և ծածկում՝ ականջները: Պարեգտի թևերիքը կարճ են՝ մինչև արմուկներ: Անզրավարտիքը, շա-

փավոր լայնքով, իջնում է մինչև կոշիկները, որոնք հանդիման են ասպանդակի վրա:

Սա՝ վաղ միջնադարյան տարազի հազվագյուտ նմուշներից է, որ բացահայտում է հայկական վերնախավի հանդերձանքի ընդհանուր ոճը:

Նկ. 20-ում ձիավորի սույն տարազը մոտավոր նմանություն ունի Մանուել Ա՝ մատունու կրածի հետ, հակառակ այն բանին, որ նրանք տարբեր միջավայրում և հավանաբար տարբեր ժամանակներում են ապրել: Այս վերջինը հայտնաբերվել է Անիի մոտիկ Ճալա գյուղի ձորից, և, ըստ ն. Մասի, պատկերել է կամսարական տոհմի մի անձնավորության, նախքան Անիի Քաղաքատունիների անցնելը, ուստի պետք է լինի շուրջ 7-րդ դարի գործ: Հուշարձանը թևե շատ եղծված, բայց տարազային տեսակետից շատ արժեքավոր է և պատկերաբանագիտական մեր հուշարձանների մեջ հանդիսանում է վարպետի գործ: Այս քանդակի լավագույն բնութագիրը տվել է ինքը՝ ակադեմիկոս ն. Մատր²:

«Սա հայտնի բարձրաքանդակ է, որ պատկերում է իշխանական երթը: Բշխանը հեծյալ է, առջևից զնում է մունետիկը, հետևից՝ զինակիրը: Զիու պոչի հանդուսը և ձիու վրա ձգած կապերոսի ծուպերով զարդարված լինելը ցայտուն կերպով խոսում են հին հայկական կենցաղային նորմերի մասին, որոնք նման էին իրանականի հետո:

Նկ. 21 և 21՝ —Գլխից գտնված քարե զլուխ (21՝-ը վերակազմությունն է): Բնորոշ է որպես հայկական արթաչի տիպ, գուցե հայ Արշակունիների ընտանիքից: Գլխին կրում է թևեկակի կոնաձև խույր, նման տիգրանյան թագին, նույնպես ծոծրակալով: Խույրի տակից մազափնջիկները իջնում են ճակատի վրա: Ականջներին ունի օղբեր: Գեմքը մորուսավոր է:

Նկ. 22 և 22՝ —Նույնպես քարակերտ զլուխ, թևեկակի կոնաձև խույրով, որի վրա, ճակատի մասում քանդակված են երեք եռանկյունիներ: Դա՝ արևելյան տիպի թագ է, սակայն առանց թագակապ ժայպվենի, իսկ զիմագիծը հոսանակաձև, մաքուր ածխված:

Տ Ա Խ Տ Ա Կ 13

Զվարթնոցի շինարար վարպետների պատկերաբանագիտական յոթերորդ դարի հայ արհեստավորի կերպարի հազվագյուտ նմուշներ են: Գրանք

¹ Զողթ:

² Նույն տեղում:

³ Գարեգին արքեպ. Հովսեփյան, Նյու Յորք և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության, պրակ Գ, Նյու-Յորք, 1944:

⁴ Н. Я. Марр, Описание Дворцовой церкви в Ани, стр. 31.

մեզ հասել են բավականին եղծված վիճակում¹, ուստի նպատակահարմար համարեցինք պատրաստել նրանց վերականգնված գծագրությունները տխ. 14-ում:

Տ Ա Ն Տ Ա Ա 14

Ձվարթնոցի այդ պատկերաքանդակները մինչև այժմ չեն արժանացել հատուկ ուսումնասիրման: Բոլորն էլ անխտիր համարվել են շինարար վարպետներ, մինչդեռ, ինչպես պարզվում է նրանց վերականգնված գծագրություններից, նկ. 2-ը այժմեցեցործ է՝ խաղողի երկու վազերի միջև, հոտոցը ձևերին: նկ. 3-ը որմնադիր է, ձեռքերը ձևերին: նկ. 6-ը՝ քարառչ, նկ. 4, 7 և 8-ը՝ քանդակագործներ: նկ. 5-ը կրճարավոր է, ունենալով թիկունքին աղաբորտն, իսկ գլխի շուրջը՝ լուսապսակ: նա աչ ձեռքում բռնել է մի փոքր մուրճ, որպես խորհրդանիշ՝ քանդակագործությունը կազմող շրջանում: Մեր մեջ հետազայում կա եղել են շնորհալի քանդակագործ-կղերականներ:

Գլխավոր ճարտարապետ Հովհանը (նկ. 1) կրճարավոր կամ կենդանական բառով՝ «վեղարավոր» է: Այդ իրողությունը ումանց ենթադրել է տվել, թե նա եղել է կղերական²: Մինչդեռ կնգուզը վաղուց լայն գործածություն է ունեցել մեր ժողովրդական խավերում: նույնիսկ հեղինակի դարաշրջանում Մոսկոյի թագավոր Ջարեհին տեսնում ենք (բառ նրա դրամի)՝ կնգուզավոր գլխանոցով (տխ. 5, նկ. 1): Հետագայում՝ 14—18-րդ դդ. մեր գերեզմանաքան-

դակների վրա էլ գտնում ենք կնգուզավոր աշխարհական ժարդկանց պատկերումներ (տխ. 32, 33 և 34): Հետևաբար, կարելի է ասել, որ այդ գլխանոցը կրճարականները վերցրել են աշխարհականներից և սեփականացրել: Ուստի, Հովհան ճարտարապետի աշխարհական լինելու հանգամանքը, բառ մեզ, մնում է անսուարկելի:

Գալով Հովհանի զգեստավորման, մյուս վարպետներից աչքառու տարբերությունը չունի: Հագել է պատմուճան, որի երկարությունը, սակայն, անհայտ է: Մեր վերականգնած գծագրության մեջ ամբողջացրել ենք այն, ելնելով նկ. 6-ի ավելի հայտնի մասերից և տվյալ ժամանակաշրջանի պատկերաքանդակների ամենահավանական ձևերից: նա պատմուճանի վրա հագել է մինչև մեջքը հասնող միջթան, երկար թեղանիքով: նմանորինակ միջթան կրում են նաև նկ. 4, 6 և 8 վարպետները, իսկ մնացյալները պարզորոտ են միայն, հաճախ շերտավոր ծալքերով և մեջքի շուրջ մի նեղ գոտիով ամփոփված: Բացի Հովհանից, մյուս շինարար վարպետները գլխաքայք են:

Հովհանը ներկայացնում է, ուրեմն, որպես զեկավար անձնավորություն, աչքով մի թիկունքում, իսկ ձախով՝ քանդակագործի մուրճը. մի հանգամանք, որ հատուկ է միայն Հովհանին, իսկ դա հավելյալ մի փաստ է նրա գլխավոր ճարտարապետ լինելու հանգամանքին:

Տ Ա Ն Տ Ա Ա 15

Մեր ներածականում խոսել էինք 387 թ. Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև Հայաստանի բաժանումից հետո բյուզանդական բաժնում ապրող հայ նախարարների երկար ժամանակ իրենց ազգային ինքնորոշությունը պահպանման մասին:

նկ. 1-ը այդ ապացույցող պերճախոս փաստ է: Դա՞ մի դամբարան է Ռավեննայում, ուր թաղված է համայն Իտալիայի հայազգի էկզարք Սահակ Հայկազը (625—643): նա իր այդ դամբարանի վրա իր կենդանության ժամանակ խորհրդանշաբար քանդակել է տվել բիրլիական մի զրվա՞ղ Դանիելը երկու առյուծների միջև: Դանիելի տարազը հարազատորեն հայկական է և այնքան նման տխ. 7, նկ. 2-ում Արմենիան անձնավորող հոռոմեական արձանի տարազին, անշուշտ ոչ բոլորովին պատահականորեն, քանի որ Հայաստանն էլ նույնպես գտնվում էր երկու զիշատիչ կայսրությունների՝ Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև: Իսկ դամբարանի վրա Կրել է տվել հետևյալ խորխոս մակագրությունը. «Ըն Սահակ, մեծապայծառ տոհմից,

¹ Մեր պատկերաքանդակների աստատարակ եղծված լինելու պատճառը եղել է մասնագետների տիրապետողների մոլեռանդությունը, որովհետև մասնագետները կրճարավորում էլ որևէ հնգավոր ետևի պատկերացումը, հատկապես՝ ժարդկաները: Թովմա Արթուրյանի պատմում է, որինակ, թե ինչպես ինչից Մուլիֆը (720—721) «սալա» նրաման փշրել և խորտակել ցկենդանացրեալ պատկերու տերունական հրճարիտ և նորին աշակերտացալ: հետագայում էլ այդ բարբարոսական վարմունքը շարունակվեց մեր պատմական ընդեր հուշարձանների հանդեպ սամանյան տիրակալոցների կողմից:

² Ինչպես ենթադրում է նաև թ. Թորամանյանը (Հայկ. Հարու., էջ 248): Մենք ստաբիլում ենք այդ կարծիքի գեմ, նաև հետևել նկատատուներով:

Ա. Եթե վեղարը նրա կենդանական լինելու հանգամանքը բնորոշը, հարկ էր, որ նկ. 5-ի լուսապսակ և թիկունքին աղաբորտն կրող անձն էլ պատկերվեր վեղարով, որպես կղերականի:

Բ. Ձվարթնոցի նման խիտա բազզ, հանդուզն հյացումներով լի մի հանձարեց սանգծագրություն կարող էր գլխավորել միայն և միայն աստվարեպով ճարտարապետա-թվանը նվիրված և բազմաթյա փորձառություն տեր մի վարպետ:

զարդ և փառք ամենայն հայոց, էի մարտակից արքաների»¹։

Նկ. 2-ը Բյուզանդական կայսրության բարձր դասին պատկանող պետական գործիչ նույնպես մի հայի կերպարն է՝ Հովհան Պոռթսիմոսը, արդեն բյուզանդացու տարազով, քանի որ այսին է 11-րդ դարում։ Սակայն նա իր ծախսով Ազրիանսպոլսում 1007 թ. գրել ու ծաղկել է տվել հայերեն մի Ավետարան, ուր գետնադրված է նշել իր սույն մանրանկարը², բյուզանդացի ազնվականի տարազով։

Նկ. 3 և 4-ը էջմիածնի Ավետարանի մանրանկարներից³ և (էջ 224ա), ուր պատկերված են հայ իշխանավորի և իշխանուհու տարազով երկու անձնավորություն (շուրջ 10-րդ դարի գործ)։

S Ա. Խ S Ա. Կ 16

Նկ. 2 և 2' (վերակազմություն)։—Հայաստանի մարզպանական ժամանակաշրջանից մեզ հասած միակ վավերական հուշարձանն է հանդիսանում 7-րդ դարում մարզպան Գավիթ Սահառունու բարձրարանդակը իր կառուցած Մրենի նկեղծցում։ Նա զլխաբաց է, հավանաբար եկեղծցում գտնվելու նկատառումով, սակայն անպայման վարսակալ ժայպովենով ամփոփած լինելու էր մաղերը։ Քրիկունքին առել է երկար մուշտակ, անշուշտ սամուրենի, որի երկար և լայնաբերան թեղանիքը զարդակներին ազատ ձգված են, ինչպես հնուց սովորություն էր, և ինչպես տեսանք 4—7-րդ դարերի մեր պատկերաբանդակների շարքում՝ Հառիճի, Բալինի և այլ կոթողների վրա ևս։ Պատմուճանը երկարում է մինչև սրունքի կեսը, զարգական շերտերով։ Ջախ ձևերում բռնկ է մագաղաթի մի փաթեթ, իսկ բազուկից առկախ է իր դավազանը։

Անշուշտ այդքան պարզունակ, անպաճույճ չէր հայ մարզպանների և նախարարների տարազը։ Մեր պատմագիրները այդ մասին տվել են մի քանի արժեքավոր տեղեկություններ։ Գրանցից հիշենք Հայր Մարգարեի պարզան։

Պապ թագավորը պատժելու համար Հայր Մարգարեի դավաճանական մի արարքը, հրամայում է արքայական իր հանդերձատնից նախ նրան հարգվեցնել իշխանավայել զգեստներ։

«Եւ ազուցիկ նմա գրատակ և վարտիս։ Եւ էր հանդերձն անհեթեա մեծութեամբն, զի խորշ զխոր-

¹ Ա. Արևիկյան, Պատմություն հայ գողթականության, Ա. Տարսր, Կահիրե, 1043, էջ 122։

² Հայտնի, էջ 173։

³ Մաշտոցի անվան Մատենադարան, 2374։ Այսուհետև՝ Մա տենադարան։

⁴ Ու զից ստորկարով պատմուճան։

շիւ իջանէր, մինչ զի ոչ կարէր հանդերձն զանձն իւր, զի պատեաց մեծութիւն հանդերձոյն։ Եւ ազուցեալ զպատմուճանն մեծ, էած զգօտին ընդ մէջ իւր, զորմէ թուրն կախէր։ Եւ սուսեր ընդ մէջ ածեալ, և խորշ ի գոտոյն դրատիցն իջեալ, զթուրն և զսուսերն ծածկէր։ Իսկ զվարտի զգեցեալ, և մուկս ազուցեալ, և զնրանն (զաշույն) ազդեր կապեալ, և ի վերայ նրանին խորշն ի վարտեացն իջեալ, անկեալ ի վերայ նրանին, ծածկեալ մինչև ի սրունս»։

Հայ Արշակունի արքունական տարազի մասին ունենք նաև հետևյալ տեղեկությունները։

Պապ թագավորի շարանենգ սպանությունից հետո, Շապուհը ի հեճուկս Բյուզանդիայի, հետևյալ նվերներն է ուղարկում նրա այլի թագուհուն, երկու զահաժառանգներին և սպարապետ Մանուէլ Մամիկոնյանին.

«Քաղաքական պատմուճան»—անշուշտ ծիբանազույն։

«Սամուրը» — մուշտակ իմաստով։

«Գլխոյ պատի գարգմանակ ոսկի և արծաթ», «ու ի պատի զլխոյ ի վերայ գաղաթանն ի թիկանց արծուոյն հանգույցք թագի կապեալ աշխարաանդ հանգույց», «Լանջաց պատի՛ ապիգակ, որպէս օրէնք են ունել թագաւորաց»,

«Շիկակարմիր խորան» — կարմրագույն վրանը արքային էր միայն հատուկ։

Իսկ սպարապետ Մանուէլ Մամիկոնյանին նվիրում է «Ահահակ մեծամեծ և կապուտակ երկնագույն հովանոցս» (այս վերջինը՝ վրան իմաստով) և ի վերայ խորանին արծուի նշան» — որպես Մամիկոնյանների տոհմական գինանշանը։

Իսկ Նիզիշեն Վասակ Սյունեցու տարազի մասին տալիս է հետևյալ նկարագրականը.

«Եւ նա ըստ առաջի կարգի օրինացն արքունի, արկանէր զպատվական հանդերձն, զոր ունէր ի թագաւորէն։ Կապէր զպատուավորան (վարսակալ ժայպովենը) և խորն ոսկեղեն զնէր ի վերայ, և զկուսակուռ ձուլ ոսկի կամարն, ընդելուզեալ մարգարտով և ակամբ պատուականօք ընդ մէջ իւր ամէր. և զզինդան յակնջան և զգումարտակն (մանյակ) ի պարանոցին, զպատուրան զթիկամբքն և զամենայն օրենս պատուոյն զտնձամբ արկեալ, և թխայր յարքունիս...»։

Նկ. 3 — Կողբից հայտնաբերված այդ բարձրարանդակը, 6-րդ դարի գործ, տարազային տեսակետից ուշադրավ մի հուշարձան է որպես իշխանական կամ տղնվական դասի կերպար։ Վերարկուն

⁵ Փոփոքուս Բուզանդ, 114 (Մա. Մալխ., էջ 248)։

իջևում է ծնկներից շատ վար և եղերված է դարգարուն լայն ժայռվեցով:

Նկ. 4-ը հայտնաբերված է Անիից և հիշեցնում է Զվարթնոցի շինարար վարպետների կերպարը, ալիւլի հստակ գրեւատվորումով: Սա ևս նրանց նման գլխարաց է և մազերն ամփոփված են ճակատը շրջանցող ժայռվեցով: Ներքին երկար պարեգոտի վրա հագնել է նույն երկարությամբ մի վերարկու, կարճ թեղանիքով: Մեջքն ամփոփված է կաշվե նեղ գոտիով, որից երկու կողքերին առկա են զարգական զույգ կախիկներ: Վերարկուի երկու փեղկերի վրա աղեղնաձև շորասկան փոթիկներ կան, իսկ քղանցքի երկու կողքերին, մինչև ծնկները սովորական զույգ ճեղքվածք կա: Քանդակի այս վերջի մասերը նկ. 4-ի վերակազմության վրա ավելացված են, հիմնվելով նման պատկերացումների տվյալներից, ինչպես պիտի տեսնենք Վասպուրականի Գագիկ Արծրունու երկու մահկալիկների քանդակների վրա (տես. 19, նկ. 2 և 3):

S U. և S U. Կ 17

Վերևում.—Անիի միջնաբերդում քանդակված է դարգական մի ծառ, որի երկու կողմերում պատկերված են երկու ձիավորներ՝ որպես ս. Գևորգ և ս. Թեոդոր, լիշապի հետ մարտնչելիս¹:

Վարի շարժում.—Վերակազմությունն են այդ երկու զինվորի տարազային ու լրիվ տվյալներին: Նրանց մեջտեղում գետնի վրա ենք Անիի պարսպի զլխավոր մուտքի վերև աղուցված առյուծի քանդակը, որը հավանաբար Բագրատունիների զինանշանն է եղել:

S U. և S U. Կ 18

Նկ. 1.—Անիում ն. Մատի՝ 1906 թ. կատարած պեղումներից հայտնաբերվեց սույն արձանը, ուր Գագիկ Ա Բագրատունի թագավորը ներկայացված է արքայական տարազով՝ զլխին մեծազանգված սեւփուշ, արքայական լայն թեղանիքով դուռա հագին, որպես պատմուճան, և նույնաձև սիլիս՝ որպես վերարկու: Միակ հսկակական նշանը կրծքից շղթայակապ խաչն է²:

Ստուվորայան նմանօրինակ տարազով է ներկայացված նաև Սմբատ Բ-ը (նկ. 3) Հաղպատի եկեղեցու արևելյան պատի բարձրացանդակում: Ուստի դրանով պե՛տք էր հարակացնել, ինչպես

¹ Brosset, Ruines d'Ani, 1858. St. Peter. pl. 37.
² Զվարթնոցի նմանությամբ Տրդատ ճարտարապետին կառուցել տված իր էկեղեցում, 10-րդ դարի վերջում:

անում է Հացունին³, թե արքայի բոլոր Բագրատունիների և Արծրունիների տարազը արքայական է եղել: Ինչպես պիտի տեսնենք, այդպիսի մի ընդհանրացում չի համապատասխանում որոշ փաստերի⁴, որովհետև հենց Սմբատ Բ Բագրատունու զինաց քանդակված է նրա եղբայրը՝ Գուրգենը. դոհարազարգ թագը զլխին:

Բացի այդ, Հ. Գրասխանակերտցին⁵ նկարագրում է Յուսուպի ուստիկանի ուղարկած նվերները Սմբատ Ա Բագրատունուն. «Թագ ևս յստիտյ սոյն»

³ Հացունի, էջ 177:
⁴ Զարմանալի է, որ ն. Մատի նման մեծանուն մի գտնուական նույնպես անմատուց է եղել սխալ դատումների՝ Բագրատունիների թագի մասին: Անկե՛ս հաստատված է (էջ 60—64) Գուգիկ Ա-ի արձանի հայտնաբերման տեղի վրա երկարորեն փնտրում է պատմաբան մի հիմնավորում նրա զլխի արքայական շղթա-ի (սպորտ) մասին:
Նա մի պահ ենթադրում է, թե Բագրատունիների մոտ գրադործածությունը աճանակաճան է եղել և կապվել է մինչև հայ Արշակունի թագավորներին, որոնց իրենց կարգին հետևել են Սասանյաններին, իսկ այս վերջիններն քրիստոնեակն են մտնելուց: «Թագ այդ հարցերը լուսաբանելը պիտի լինի,—ասում է վերջում,—մի անհուսալի ձեռնարկ»:

Նա մի պահ ենթադրում է, թե Բագրատունիների մոտ գրադործածությունը աճանակաճան է եղել և կապվել է մինչև հայ Արշակունի թագավորներին, որոնց իրենց կարգին հետևել են Սասանյաններին, իսկ այս վերջիններն քրիստոնեակն են մտնելուց: «Թագ այդ հարցերը լուսաբանելը պիտի լինի,—ասում է վերջում,—մի անհուսալի ձեռնարկ»:

Նա մի պահ ենթադրում է, թե Բագրատունիների մոտ գրադործածությունը աճանակաճան է եղել և կապվել է մինչև հայ Արշակունի թագավորներին, որոնց իրենց կարգին հետևել են Սասանյաններին, իսկ այս վերջիններն քրիստոնեակն են մտնելուց: «Թագ այդ հարցերը լուսաբանելը պիտի լինի,—ասում է վերջում,—մի անհուսալի ձեռնարկ»:

Նա մի պահ ենթադրում է, թե Բագրատունիների մոտ գրադործածությունը աճանակաճան է եղել և կապվել է մինչև հայ Արշակունի թագավորներին, որոնց իրենց կարգին հետևել են Սասանյաններին, իսկ այս վերջիններն քրիստոնեակն են մտնելուց: «Թագ այդ հարցերը լուսաբանելը պիտի լինի,—ասում է վերջում,—մի անհուսալի ձեռնարկ»:

Նա մի պահ ենթադրում է, թե Բագրատունիների մոտ գրադործածությունը աճանակաճան է եղել և կապվել է մինչև հայ Արշակունի թագավորներին, որոնց իրենց կարգին հետևել են Սասանյաններին, իսկ այս վերջիններն քրիստոնեակն են մտնելուց: «Թագ այդ հարցերը լուսաբանելը պիտի լինի,—ասում է վերջում,—մի անհուսալի ձեռնարկ»:

Նա մի պահ ենթադրում է, թե Բագրատունիների մոտ գրադործածությունը աճանակաճան է եղել և կապվել է մինչև հայ Արշակունի թագավորներին, որոնց իրենց կարգին հետևել են Սասանյաններին, իսկ այս վերջիններն քրիստոնեակն են մտնելուց: «Թագ այդ հարցերը լուսաբանելը պիտի լինի,—ասում է վերջում,—մի անհուսալի ձեռնարկ»:

Նա մի պահ ենթադրում է, թե Բագրատունիների մոտ գրադործածությունը աճանակաճան է եղել և կապվել է մինչև հայ Արշակունի թագավորներին, որոնց իրենց կարգին հետևել են Սասանյաններին, իսկ այս վերջիններն քրիստոնեակն են մտնելուց: «Թագ այդ հարցերը լուսաբանելը պիտի լինի,—ասում է վերջում,—մի անհուսալի ձեռնարկ»:

⁵ Հովհ. Գրասխանակերտցի, էջ 197:

բայ կազմեալ, և ի նմա յերեզեալ յեռեալ վարսակալ մարտարտատող տպագրարդոթիւնս և ականս պատուականս և բազում երեւելի զարգս արքունականս ոսկեճամուկս:

10-րդ դարից ունենք նաև Սանահինի եկեղեցու արևելյան ճակատում կյուրիկե և Սմբատ Բագրատունիների թագակիր բարձրաբանդակը (տխ. 18, նկ. 2):

Կա նաև Վասպուրականի թագավոր Գագիկ Արծրունու թագ կրելու փաստը:

S Ա. Խ S Ա. Կ 19

Արծրունաց թագավորութեան հիմնադիրն է հանդիսանում Գագիկ Արծրունին: 908 թ. Ասորպատականի ոստիկան Յուսուփը, ի հեճուկս Բագրատունիների, նրան ճանաչում է թագավոր Վասպուրականի՝ ռեզեալ թագ ի զլուխ նորա զուտ ոսկի, բազմարվեստ յորինմամբ, հիանալ մարդարտովք և մեծազնի ակամբք պատուականօք և զգեցուցեալ ոսկեպարզ պատմունճան միանդամայն և գօտի սուսերաւ, հանդերձ ոսկեհուն փայլեալ զարդու՞¹:

Նկ. 4-ր արդարև Աղթամարի ս. Խաչ եկեղեցու քանդակներից է, որ Գագիկը ներկայանում է թագակիր և արձանիչ արքայական փիլոնով: Կողքի նկ. 4-ը եղծվածի վերակազմութունն է:

Նկ. 1-ը Գագիկ Արծրունին է այդու՞ ծայապատիկ նստած, զինու բաժակը ձեռին: Նրա երկու սպասավորները միջոց են մատուցում: Նրանց տարակը հաղվագլուտ մի նմուշ է տվյալ ժամանակաշրջանի ժողովրդական տարազի:

Նկ. 5-ը նույն եկեղեցու քանդակներից Համազասպ իշխանն է, ոչ իբր իշխան, այլ՝ սնահատակ, զլիսի շուրջ լուսապակով: Կրում է պարզ մի խալաթ, մեքբի շուրջն ամփոփված զարդարուն գօտիով:

Նկ. 6-ը որպես Գողթաթ, տվյալ ժամանակի հայ հետևակ զինվորի տարազի մի պատկերացումն է: Կրում է վերտավոր զրահ, սաղավարտ, բուրբաձև փոքր վահան և նիզակ, իսկ աջ ձեռքում՝ երկարաշեղք սուրբ:

Նկ. 7-ը Անիից գտնված մի սուր է:

S Ա. Խ S Ա. Կ 20

Նկ. 1—4 — Աղթամարի եկեղեցու քանդակներից ժողովրդական տիպեր են:

¹ Արծրունի Թովմայի Պատմութեան, Կ. Պոլիս, 1817, էջ 321:

Նկ. 1, 2 և 3-ը աշխատավոր ժողովրդի զգեստավորման նմուշներ են:

Նկ. 4-ը նույն եկեղեցու խորանի որմանկարներից երկու հովիվներ են, որոնցից մեկը պարկայգուկավոր է: Հետաքրքիր են սրանց գլխարկի ձևերը:

S Ա. Խ S Ա. Կ 21

Վուրում՝ Կարսի Գագիկ թագավորի բնտանիքը, 10-րդ դարում, քստ Երուսաղեմի մի գրքի մագազաթյա պահպանակի նկարի²:

Այս փոքր թագավորությունը կարելի է մի էյուզը համարել Բագրատունիների, նաև տարազի տեսակետից:

Նկ. 1 — Գագիկը ծայապատիկ նստած, հագել է մի երկար վերարկու, լաչնաբերան թեղանիքով և առջածանիչ վահանիկներով զարդարուն: Բագուկների վրա կրում է զարդաժապավեն:

Նկ. 3-ը Գորանդուխտ թագուհին է: Թիկունքին ունի սպիտակ հերմին մուշտակ, կրծքի վրա միացրած գոհարազարդ ճարմանդով: Մազերը զույգ հյուսկենով իջնում են կրծքի երկու կողմում: Կրում է ապարանջան, մատանիներ և մանյակ:

Նկ. 2 — Նրանց դուստր՝ Մարիանեն, որ մոր նման զարդահյուս պարեզոտ է հագել և ուսերը ծածկել է սպիտակ շալով:

Նեւբաում՝ Անիի պեղումներից հայտնաբերված մանկական մետաքսահյուս կապա: Նույնը՝ դիտված կոնակից: Վերը՝ շապիկի օձիքը և թեղանիքի ասեղնազործած մասը՝ մեծացված:

S Ա. Խ S Ա. Կ 22

Մաւրթ.— № 22—24 տախտակներում ցանացել ենք սեղմորեն ամփոփել հարյուրավոր ձեռագիր մատյաններից բնորո՞ծ տարազային մանրանկարներ: Գրանց յուրաքանչյուրի նկարազրականը անհարկի կերպով պիտի գրավեր բազմաթիվ էջեր: Ուստի նկատի ունենալով նրանց ժամանակը և վալը, որքան զա հնարավոր էր, բաժանել ենք երկու մասի:

Ա. նրանք՝ որ անվթար են պահել ազգային տարազը:

Բ. նրանք՝ որ կրել են օտար փոխազգեցություններ:

Տխ. 22-ի մեջ ժողովրդական տարազ են կրում հետևյալները:

² Բնագիրը Հայաստանի մոտ (էջ 191) եղծված լինելով, վերսկանգնել ենք:

Նկ. 1-ը՝ սպասավոր, 2-ը՝ ջրամանով կին, 3-ը՝ նվազող պատանի, 5-ը՝ պարկապոտիկ նվազող, 6 և 7-ը՝ քաղաքաբնակ կանայք, 8-ը՝ գեղըկուհի՝ կծով, 9-ը՝ գավառական տարազով կին, 13 և 14-ը՝ ծառ հատող երիտասարդներ, 15-ը՝ գեղջուկ, 16-ը՝ ծեր հովիվ, 17-ը՝ զրազիր: Սոցիալական վերնախավին են պատկանում նկ. 4-ը, 11-ը և 12-ը, որոնց պիտի անդրադառնանք:

Նկ. 6 և 7-ը վերցված լինելով 11-րդ դարի Մուդնու Նշանավոր Ավետարանից՝, գրված՝ Անիում կամ Լոդիում, ժամանակի իրական կյանքից վերցված թանկարժեք նմուշ են հանդիսանում մայրաքաղաքի կանացի տարազի: Երկու կանայք, սպիտակ գլխաշորով, կրում են պարզ, սակայն նրբաճաշակ զգեստ: Երկուսի պարեգոտն էլ պեղնավոր է, զունագեղ և զարդահյուս: Քղանցքը երիզված է: Երկուսի վերարկուն էլ նմանաձև է՝ առաջամասը բաց ու երկար, նեղ թևերով: Ոտներին կրում են կարմիր հողաթափ: Նկ. 7-ում մոտերի առաջ կանգնած կինն ավելի երիտասարդ է և վզի շուրջ ունի մանյակ:

Նկ. 1 — Ծերենիկ անուճով այս սպասավորի տարազը, որի մանրանկարի կողքին գրված է. «Ծերենիկ, ձուկն բեր», վերցրել ենք Հաղպատի 1211 թ. Ավետարանից, մի ժամանակաշրջան, երբ ստեղծվել էր հայ-վրացական սերտ գործակցություն՝ Զաքարյանների գլխավորությամբ: Դրա հետևանքով էլ սարազային փոխազդեցություն էր տեղի ունեցել երկու հարևան ժողովուրդների միջև, ինչպես տեսնում ենք Հաղիճի վանքի Զաքարե և Իվանե սպասավոր եղբայրների քանդակում, որոնց տարազին համընկնում են նկ. 1-ի հանդերձանքի մասերը՝ գլխարկը, երկար վարսակալը, վերարկուն, կաշիկները:

Նկ. 8 և 9-ը պարզ և շնորհալի տարազով, պատկանում են ավելի ուշ ժամանակի՝ 15-րդ դարի, Տաթևի մի ձեռագրից վերցված²:

Նկ. 10-ը Սյունիքի իշխանուհի Ասֆան է, 13-րդ դարից: Հետաքրքիր է հատկապես նրա գլխահարդարանքը:

Նկ. 13 և 14-ում ծառ հատող երեք երիտասարդները տարազը³ Բաղրատունիների և ավելի ուշ ժամանակի հայ աշխատավորի տարազի հաղվադյուտ նմուշներ են:

Նկ. 11 — Հայկական վերնախավում՝ խոշոր վաճառականներ, վաշխատուներ, այդ ժամանակներում կրում էին սրա նման արարատիպ տարազ:

Նկ. 12-ի տարազը 13-րդ դարում հայ-վրացական վերնախավին պատկանող մի անձնավորության կերպարի արտացոլումն է⁴:

Նկ. 4-ը Հաղպատի վանքի 1211 թ. Ավետարանի ստացողը՝ մեկենասն է. հենց այդ հանգամանքով էլ նրա տարազը կարելի է համարել տվյալ ժամանակի ունեւոր քաղաքացու տարադի հարազատ մի նմուշ⁵:

Նկ. 5-ը Անիից գտնված մի քրեղանի միջի նկարից է վերցված⁶ և նկ. 4-ի զգեստավորման նման է հագնված-անշուշտ ավելի պարզ ու համեստ, որպես պարկապոտիկ նվազող ժողովրդական մի տիպ:

S Ա Ն Ս Ա Ն 23

Այս տախտակի նկ. 1, 2, 3, 7, 9, 12 և 16-ից բացի, մնացյալները տարազը, իր ժամանակի ոգու համեմատ, որոշ շփոթվ, կրում է թաթարականի ազդեցությունը:

Նկ. 1-ը Սյունիքի Օրբելյան իշխանական տոհմի շատավիդ պատանի Վախթանգ Օրբելյանն է (14-րդ դար)՝ զահի վրա բաղմամբ: Այս հայ իշխանավորի տարազը սերտ խնամություն ունի Վրաստանի Բագրատունիների տարազի հետ: Նրա նման պատմուճան են հագել նաև նկ. 2-ի երկու կանայք, ինչպես նաև նկ. 4-ի երկու պատանիները, թեև նրանց գլխարկները անսովոր են:

Նկ. 3-ը կիլիկյան հայտնի մանրանկարիչ Սարգիս Պիժակի ինքնանկարն է (այսինքն է 14-րդ դարում): Ուշագրավ է նրա կարմիր գլխարկի գործածությունը, որպես կրոնավորի:

Նկ. 5 և 6 — Բուրդել իշխան Օրբելյանը և նրա կինը (14-րդ դար) թաթարատիպ տարազով⁷: Նույն տիպի տարազով է նաև նկ. 8-ի անձը: Նկ. 9-ը կղերական է: Նկ. 10 և 11 — Պարոն Սորդաթ՝ միշ և Բեկի խաթուն (14-րդ դար), գրիմաբնակ⁸, հետևաբար ենթակա՝ թաթարական ազդեցության: Նկ. 12-ը մազադաթյա մի պատանիկից է⁹ (շուրջ 15-րդ դարից) Արևմտյան Հայաստանի հարա ու փեսայի կերպարի հաղվադյուտ մի նմուշ: Նկ. 13, 14 և 15-ում ներկայացված են հարսանիքում պարոզ երկու զույգ՝ ձեռքերում մոմեր և ծաղիկ

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում:

⁶ ՀՊՊԹ:

⁷ Մատենադարան, 215/115:

⁸ Հազուր, 218:

⁹ Մատենադարան, 766/4:

¹⁰ Նույն տեղում, 254:

բունած, որոնց տարազը, սակայն, օտարատիպ է¹։
Նկ. 16-ը գլուխը ապարոշավոր կրոնավոր է, դաս
ավանդելիս։ Նկ. 17-ում՝ նրա աշտկերտը։

S U. և S U. 4 24

Նկ. 1, 2, 3 և 4—Ըստ Լրևույթի, մի ընտա-
նիքի անդամներ են, հավանաբար ձեռագրի ստա-
ցողներ, որոնց տարազում զգալի է սլավոնականի
ազդեցությունը, դատելով հատկապես նրանց
պարսկական զլխանոցից²։

Նկ. 5, 6, և 7-ը—16-րդ դարի մի ձեռագրից։ Երևի
անձերի տարազն էլ նույնատիպ են գրեթե Պճրդ-
նավոր պարզոտի վրա հագել են կարճ թեղանիքով
բաճկոնակ, կրծքերը փակված՝ կոճակների շար-
քով։ Արևմտահայ տարազի նմուշ կարելի է համա-
րել, ձեռագրից պատրաստված լինելով Կ. Պոլ-
սում³։

Նկ. 8-ը 1397 թ. մի ձեռագրից է, գրված Բա-
ղեշում։ Կնոջ զլխահարդարանքի ձևը որոշ գավառ-
ներում շարունակվել է մինչև մեր օրերը։ Քոզը
զլխից իջնելով, պատում է նաև կուրծքը, ծայրը
սոսի վրա ճարձմանդած⁴։

Նկ. 9, 10 և 11-ը—18-րդ դարի տղամարդկանց
տարազ են։ Նկ. 10 և 11-ում տեսնում ենք «Կոլ-
կասյան» տարազի նախնական ձևեր՝ արխատուշը,
մեջքը կաշվե նեղ գոտիով ամփոփված, շալվարի
փոքրերը կոշիկների մեջ։

S U. և S U. 4 25

Մեր բաղմադարյան պատմության մեջ ոչ մի
ժամանակաշրջանից մեզ չեն հասել այնքան հու-
շարձաններ (զրամական, մանրանկարչական), որ-
քան մեր Կիլիկյան թագավորության շրջանից
հատկապես թագավորի, պալատականների, զին-
վորականների, մասամբ էլ ժողովրդական տարա-
զի վերաբերյալ։

Սույն տախտակի Ա-ն և Բ-ն վատիկանի թան-
գարանում պահված Առն Ա-ի կնիքներն են⁵, իսկ
մեջտեղում՝ Գ-ը վերականգնվածն է Ա-ի՝ Նրա
ականազարդ թագը ավելի նման է բյուզանդակա-
նին։ Երկու կողմից ականջի տակ տակախ են երե-
քական ոսկեգեղիկ, ըստ լատին սովորության։
Պճրդնավոր պատմության վրա կրում է արքայա-
կան ծիրանագույն փիլոնը, որի վրայի սկավա-

¹ Մատենադարան, 3708։
² Ա. Ղազարի մատենագրության, ձեռ. 1317։
³ Յե. Մազուր, Հայկական մանրանկարներ։
⁴ Մատենադարան, 7629։
⁵ Հաջունի, 371։
⁶ Հաջունի, 235 և 237։

ռակների մեջ առուծանիչ դարձրել են բանված։
Մեջքի ականակուտ քամարից առկախ է ոսկեգրվազ
սուրբ։ Որպես արքայական սիմվոլ, աջում բռնել
է խաչանիչ ոսկեխնձորը, իսկ ձախում՝ շուշանա-
գլուխ մականը։

S U. և S U. 4 26

Հիանալիորեն ճշգրիտ մանրամասնությամբ
Թորոս Ռոսլինը (13-րդ դար) սույն մանրանկարում
պատկերել է Առն Բ թագավորը, Կեռան թագու-
հին, նրանց երեք արքայազուն զավակները և եր-
կու դուստրերը՝ ծերագիր⁷։ Թագավորի զգեստա-
վորման մեջ ավելի շեշտված են հայկականի ինք-
նուրույն հատկանիշները, ինչպես թագի ձևում,
որից առկախ շիան ականջների տակի երեքական
ոսկեգեղիկները։ Թագավորի և թագուհու պատմու-
ճանը զարգաճամուկ լայն շերտավորումներով են։
Նրանց թիկունքի ծիրանին էլ, աստատված հերմին
մուշասկով, բազմածալ է։ Միայն թագածառանգը
փիլոն է կրում, իսկ մյուսների կարճ թեղանիքը
զարդականորեն առկախ է ձգված։ Նրանք կրում
են շրջանակաձև ցածրադիր թագեր, իսկ դուստրե-
րի զլխին՝ զոհարարաբար զլխազարդ և երկար, բազ-
մածալ թուր։

Նկ. 2-ում պատկերված է վասակ իշխանը իր
երկու զավակներով⁸։ Պարզ զգեստավորումով են
և գլխաբաց։ Իշխանը թիկնոցակ է կրում, կարճա-
թեղան պարեզոտ, կողմնակի ճղվածքով։

Նկ. 3-ում՝ Առն Բ-ն երբ թագածառանգ էր։ Առ-
յուծանիչ պատմության վրա կրում է բյուզանդա-
կան փիլոն, կրծքի մի կողմում՝ նրանց հատուկ
քառանկյունի զարդական պատառով։

Նկ. 4-ում ջանալների (վարչապետ) կերպարն է,
որի նման տարազ է կրում տխ. 27-ի նկ. 5-ում
Առն Գ-ի գաստատանում ոտքի կանգնած պատ-
կառելի անձը։

Նկ. 5-ը Մարիան թագուհու կերպարն է (14-րդ
դար) Սարգիս Պիժակից⁹ նկարված։ Սամկալի վրա
հանգչում է նրա լատինաձև թագը, իսկ տարազի
մնացյալ մասը՝ ըստ սովորականի։

S U. և S U. 4 27

Նկ. 1 և 2—Այս մանրանկարում Թորոս Ռոս-
լինը Առն Բ-ին պատկերել է, երբ նա զեռևս թա-
գածառանգ էր (13-րդ դար)՝ նրա Կեռան տիկնոջ

⁷ Երոտադեն, ձեռ. 1272։
⁸ Հաջունի, 255։
⁹ Երոտադեն, ձեռ. № 1346։

հետ: Երկուսի թագերն էլ գոհարագարդ պարզ շրբ-
ջանակաձև են: Կեռանը թաղը կրում է ծամկալի
վրա: Առնի պարեզուրը դարդարուն է առյուծանիշ
սկավառակներով: Մեջքի կամարից առկախ է մի
սպիտակ թաշկինակ, բայտ ժամանակի նորույթի:
Թագաժառանգի փիլոնը, լանջի երկու կողմում
բշուղանդական զարդապատարով է: Կեռանի
թիկնոցը ավելի պարզ է, կրծքի վերև ճարման-
դած, որից առկախ թողնված է մի ժապավեն:

Նկ. 3-ում ունենք պալատականի մի ուրիշ տի-
պար՝ Դավիթ արքայազայրը¹, որ զլխին կրում է
զգակաձև մի պարզ թագ, եղբրված՝ գոհարներով:
Նրա վրա առաջին անգամ հանդիպում ենք մեր
ժամանակի նման դարձած օձիքով բաճկոնի, զույգ
կոճակով միացած: Վրի շուրջ կրում է մանյակ:

Նկ. 4-ը կիլիկահայ գորավարի տիպ է, ներկա-
յացված որպես «Վարդան»²: Գրույր պաշտպան-
ված է վերտավոր գրահով: Իրանն էլ նույնպիսի
գրահով պատած է, զտակատեղում շարժական
առանձին շերտավորումով: Նախարարուկները
պաշտպանված են մետաղյա բաղապանով: Աջ ձեռ-
քով բարձրացրել է հրամանատարական սուրբ:
Վրի շուրջ էշարձով է պատած:

Նկ. 5—Սարգիս Պիժակի այս հիանալի մանրա-
նկարում³ համատեղված ենք դռնում կիլիկահայ
ավագանու և ժողովրդական խավերի զլխավոր
տիպերը: Առն Գ-ը ծալապատիկ նստած է գահա-
վորակի վրա, որպես գերագույն զատավոր: Գլխին
լատինախալ թագ է կրում: Մաղկազարդ պարեզու-
տի կրծքի մեջտեղում և գոտկատեղում վակասաձև
մի լայն շերտ է պարզարում: Թիկունքին շուրջառ
ունի, որով պատած է նաև ծնկները: Նրա դիմաց
ոտքի կանգնած անձը ջանալերն (վարչապետ) է:
Այս վերջինը մի պատկառելի ծերունի, թիկունքին
կրում է զարդարուն փիլոն: Նրա առջև ծնկաշոք
կիրք ինչ որ վիճում է դիմացը նստած երկու տղա-
մարդկանց հետ: Հետաքրքիր է հատկապես ծերու-
կի տարազը՝ կարճաթևզան պարեզուտի ուղնդա-
նով բացվածքով ու քղանցքի կողմնակի ճղված-
քով: Մեջքին կապել է նեղ, զարդարուն գոտի:

Նկ. 6—Հետևակ զինվորի տիպն են ներկայաց-
նում գետին տապալած երկու զինվորները⁴: Նրանց
սաղավարտը կոճակ է: Նրանցից միայն մեկի
լանջն է պաշտպանված վերտավոր գրահով, իսկ
սակից՝ մեջքից վար պատմունանը հասնում է

մինչև ծնկները, բազմաթիվ ուղիղ ծալքերով:
Երկու վահանից մեկը գմբեթաձև է, մյուսը՝ սուր
կոճակաձև:

Տ Ա Ն Ս Ա Կ 28

Կիլիկյան մեր մանրանկարչության մեջ բարե-
բախտաբար լայնորեն արտացոլում են գտնվ ժո-
ղովրդական տարազաձևերը, որոնցից ամփոփն
ենք տխ. 28 և 29-ում:

Նկ. 1—13-ը դարում կիլիկահայ հարս ու փե-
սայի պատկազրության զգեստավորման այս ման-
րանկարը՝ հաղվազյուտ մի հուշարձան է: Երկուսն
էլ «թագավորի և թագուհու» տարազ են կրում:
Նկարիչը, սակայն, ցույց տալու համար նրանց խո-
նարժ ծագումը, հարամտորեն մի փոքր վեր է
բարձրացրել փեսայի ջղանցքի ծալքը, որից պարզ-
վում է նրա զեղջկական տեխնիկը:

Նկ. 2, 3, 4 և 5—Ժողովրդական տիպեր են:
Առաջին երկուսը կույր են և գրեթե նման զգեստա-
վորումով: միայն զգակի ձևերն են տարբեր: Նկ.
4-ի զույգը փակեղավոր է, որով ծածկել է վրջն
ու ուսերը:

Նկ. 5—Ժողովրդական դասի կնոջական տա-
րազը: Սրա զլխի մազերը ամփոփված են հերա-
ցանցով, մի բան, որին առաջին անգամ ենք հան-
դիպում: Ականջից կախ է խաշաձև օղ: Կարճաթև-
զան պատմունանը ծաղկանկար է: Ուսերին կրում
է մուճակ:

Վարի շարքում ունենք քաղաքաբնակ շորս ան-
ձեր և մի զինվորական: Նկ. 6-ը զլխարաց է. պա-
րեզուտը մինչև ծնկներն է հասնում, որի վրայից
հագել է վերնաշապիկ:

Նկ. 7-ը պատանի է, մուգ գույնի պարեզուտով
մեջքը ամփոփված: Բազուկներին ունի զարդական
ժապավեն: Ուսերին կրում է երկարաճիտ կո-
շիկներ:

Նկ. 8—Ցած զգակ են կրում, նման ֆեսի:
Առաջին պլանի անձը երկար, բաց գույնի պարե-
զուտով է: Ուսերին զցած է մուգ գույնի երկար
մի կերպաս, նման սոկայի, ծալքերը կրծքին
ճարմանդած: Սրանք մեզ թվում են օտարական:

Նկ. 9—Զինվորականը կոճակ սաղավարտ է
կրում, իրանը պաշտպանված է վերտավոր գրա-
հով, իսկ սրունքները՝ սոնապանով: Վահանը փոքր
է և բոլորչի: Ուսին ձգած է մի կերպաս-վերարկու:

¹ Հատ Առատակըն՝ կաթողիկոսի պահարանի քանդակների
(Հոլանդիայի Այտա քաղաքի թանգարանում):

² Նույն տեղում:

³ Ս. Ղազարի մատենադարան, ձեռ. 141:

⁴ Նույն տեղում, 141:

⁵ Նույն տեղում, 3761:

⁶ Ս. Ղազարի մատենադարան, ձեռ. 3761:

⁷ Հացունի, 265—269:

⁸ Նույն տեղում, 269:

Տ Ա. Խ Տ Ա. Կ 29*

Այս տարիտակում կան մի քանի հատկանիշներ. նկ. 3, 6, 7 և 9-ը փակեղով են ծածկած իրենց գլուխը և վիզը: Պատմուճանները երկար են. ոմանք բազկի շուրջ դարդական ժապավեն են կրում, ինչ որ, բատ երևույթին, աստիճանավորի նշան պետք է որ լինի:

Նկ. 1-ը կրնաձև զլխանոցով, մուշտակավոր մի ծերուկ է:

Նկ. 2-ը երկար պատմուճանով և վերարկուով ունևոր քաղաքացու տիպ է: Նկ. 4-ը թագանման զլխարկով և երիզազարդ պատմուճանով անմորուս մի անձնավորություն, թվում է օտարական. նկ. 5-ը հովիտ է: Նկ. 6—10-ը տարազային վտեր սլավոնականությամբ քաղաքայիններ են: Նկ. 11-ը սև զրակով ծերունի մի մալբախ է:

Նկ. 12-ը մանկահասակներ են, երկար՝ մինչև ծածկակն իջած մաղերով: Նկ. 13-ում նրանք պատմուճանի տարիք են թևակոխել. իբր այդ ժամանակի սովորության համաձայն, որոշ հանդիսությամբ, կարճացրել են նրանց մաղերը:

Նկ. 14-ը գլորոց հաճախող մի պատանի է, կողմից առկախ է դպրոցական պայտուակ: Սրա կապան ավելի երկար է:

Նկ. 15-ը զրազիր է, թագանման զլխարկը անսովոր է և օտարաբան:

Տ Ա. Խ Տ Ա. Կ 30

13-րդ դարում հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման և մշակութային ծաղիկման գործում անբաժան կարևոր դեր կատարած Ջաքարյան տոհմից հազիվ Ջաքարն և Իվանն սպասալար եղբայրների բարձրաբանդակն է հասել մեզ, ազուցված Հատիճի եկեղեցու վրա:

Նկ. 1—նրանց նույնանման բարձրազիր զլխանոցը բաղկացած է երկու մասից. թեթևակի կոնա-

* Եկամտերը վերցրել ենք հետևյալ ձևադրերից.

Նկ. 1	ձևագիր՝ 1336 թ.	Գրողարհ. Մատենադարան	№
Նկ. 2	» 1336	»	3786
Նկ. 3	» 1336	»	6295
Նկ. 4	» 1337	»	6900
Նկ. 5	» 1283 թ. Ս. Պիժակի	»	5555
Նկ. 6	» 1283	»	5535
Նկ. 7	» 1336	Սխ	5786
Նկ. 8	» 1307	»	7691
Նկ. 9, 10, 11—ձևն.	1336 թ.	»	3786
Նկ. 12 և 13, 2-ադուճի, էջ	270—271	»	7691
Նկ. 14 ձևն.	1307 թ.	Սխ	»
Նկ. 15	» 1336 թ. Ժողովրդ. Ավագ	»	6230

ձև մի խուլը, որի վրա հաստատված է առաջամասում թագանման բարձր մի մաս, ճակատի վրա փոքր եռանկյունի բացվածքով, որը ետևի կողմից հանգուցվելուց հետո, ժապավեններից մեկը իջնում է կրծքի վրա, իսկ մյուսը՝ ծոծրակից վաս առկախ, ինչպիսին տեսանք (տխ. 22, նկ. 1) սպասավոր Շերենիկի մոտ:

Երկու եղբայրների վերարկուն, երկար ու նեղ թեզակիքով, իջնում է ձևկներից վար, միտպաղաղ պարզությամբ: Այդ մասին ավելի ճիշտ պատկերացում ունենք տխ. 22, նկ. 4-ում, մեկնեսա Առաքելի կերպարում: Կոշիկներն էլ հիշյալ մանրանկարում պատկերվածի նման պետք է որ լինեն: Երկու եղբայրներն էլ պատկատաղղու դեմք և երկնզված մորթով են:

Նկ. 2-ը Անիի Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու որմանկարներից է (13-րդ դար), ուր պատկերված է Տրդատ Գ-ը, շրջապատված իր ավագանիով, որին ներկայացնում են Գրիգոր Լուսավորիչը, կալանավոր վիճակում:

Նկ. 3-ը Սաղուն Արծրունու որդու՝ Խուլիու Բուզայի կերպարն է, Հաղպատի վանքի հարավային պատի որմանկարում: Այդ հայ իշխանը, ինչպես Ջաքարյան եղբայրները, մոնղոլների ենթակա վրաստանի ավարեկ և ամիր-սպասալար (Երկրի կառավարիչ և գործադետ) էր. հետևաբար, նրա տարազը առավելապես հատուկ էր 13-րդ դարի պալատական իշխանի, որ իր վրա կրում էր անշուշտ մոնղոլականի ազդեցությունը:

Տ Ա. Խ Տ Ա. Կ 31

Նկ. 1 և 2-ը վերցված են Մշո Առաքելոց վանքի փայտաքանդակ դռան (1134) ճակատամասի բանդակներից, ուր նույն շարքի վրա պատկերված են ձախից զեպի աջ՝ մի ձիավոր, գուրզը ձեռին և բոլորակ վահանը կողքին: Նրա դիմացի հեծյալը՝ հավանաբար որպես ս. Գևորգ, զգեստն է վիշապը ձիու ոտների տակ և նիզակով խոցել:

Նկ. 2-ում շեփորող հետիոտն անձը կրում է երկար, շերտավոր պարեզոտ, մեջքից վար գտնով ամփոփված: Գլխին կրում է ցածր գզակ, շուրջը փաթույթով: Նրա առաջից արշավում են զրահազգեստ երկու ձիավոր, որոնցից մեկը երկարաշեղք սուրն է մեկնել, իսկ նրա առջևինը՝ սպանական բարձրացրել է գուրզը:

Այդ ժամանակաշրջանում է ստեղծվել «Սասունցի Դավիթ» մեծ դրույցադնավեպը և անհիմն չի լինի ենթադրել, թե վերահիշյալ քանդակի ուղ-

մական գրվագը ներշնչված է եղել հենց հերոսական այդ վեպի ոգով!

Վարի շարքում ղեկավար ենթ թաթարական տիրապետության ենթակա (13—14-րդ դդ.) մի քանի հայ իշխանների քանդակները, որոնց տարազի վրա բացահայտ է նրանց ազգեցությունը՝ Նկ. 3—Մխիթ Զատան՝ որսորդ¹: Նկ. 4 և 5—էաչի և Բուրդել իշխաններ²: Նկ. 6-ը Վասակ հաղթակալանը ընտանիքով:

Տ Ա. և Տ Ա. Կ 32, 33 և 34

Սույն էրևք տախտակների մեջ ամփոփել ենք Արևելյան Հայաստանի 14—18-րդ դարերի պատմական դերակերպերի տիպական պատկերաբանազանքներ: Նրանց մեջ կան այնպիսիները, որոնք «Պոլիպոյան» անունով ճանաչված տարազաձևերի նախատիպերը կարելի է համարել:

Ընդհանուր առմամբ, պետք է ցավոք ասել, որ նրանց վրա բացորոշ է թուրանականի խաթարիչ ազդեցությունը:

Սույն էրևք տախտակներում ամփոփված նկարները վերցրել ենք Հայաստանի պետական պատմական թանգարանի լուսանկարչական սե ապակիներից, որոնց համարները առկա ենք ստորև.

Տախտակ 32

- Նկ. 1—Վասյց Զարի Գնդեվանրուժ, 1357 թ.
- Նկ. 2—Բատարգեչար, չՊՊԹ, № 4214
- Նկ. 3— » » » » 3401

- Նկ. 4—Անդեղակոթ գյուղ, չՊՊԹ, № 2018
- Նկ. 5—Ղանչի (Բատարգեչարի շրջ.) 1213
- Նկ. 6—Կարմրաշեն, չՊՊԹ » 2404
- Նկ. 7—Սույան (Վասյց Զոր) » 2362

Տախտակ 33

- Նկ. 1—Անդեղակոթ գյուղ, չՊՊԹ, № 1520
- Նկ. 2—Հին Զուգույի խաչածե սաղարհարարից
- Նկ. 3—Գեհեշիկ գյուղ (Աղիզրեկոթի շրջ.) չՊՊԹ, № 7100

- Նկ. 4—Արփա գյուղ (Վասյց Զոր) » » 2878
- Նկ. 5—Գնդեվանր (Սիսիան) » » 1357
- Նկ. 6—Սույան » » 2363

Տախտակ 34

- Նկ. 1—Բատարգեչար գյուղ, չՊՊԹ, № 3717
- Նկ. 2— » » » » » »
- Նկ. 3—Կարմրաշեն » » » » 2403
- Նկ. 4—Հորտոնց » » » » 2493
- Նկ. 5—Բուշի (Սիսիանի շրջ.) » » » » 3421

Սույն տախտակի ստորին շարքում ամփոփել ենք նախընթաց տախտակների բոլոր գլխարկաձևերը, թվով 14 հատ:

Մանր.—Տխ. 33, նկ. 1 և 2-ում, ինչպես նաև՝ տխ. 34, նկ. 2 և 4-ում քանդակված կան թագ կրող տեճեր: Այդպիսի թագ կրողները է «ձղա թագ», որը, ըստ ժողովրդական ավանդության, կրը մահացողը երիտասարդ է լինում, տապալի վրա նրան քանդակում են «Չարանյայց թագով»: (Տե՛ս «Պատմա-Բանասիրական հանդես», 1959, Դ հատ., էջ 208):

ԱՐԵՎԵԼԱՆԱՅԵՐ

Տ Ա. և Տ Ա. Կ 35

Պարսկահայերը մասն են կազմում Արևելահայ հասովածի, թե՛ աշխարհագրապես և թե՛ պատմականորեն, հետևաբար տարազային տեսակետով էլ պատկանում են նույն ընտանիքին:

Նկ. 1-ը Հին Զուգույի մի խաչքարից³ է, (1599 թ.), որի տակ քանդակված կա հանդուցյալի կերպարը: Նրա տարազը մի նմուշ է հինջուղայեցի հայ վաճառականի:

Նկ. 5-ը Եոհան Ալթըն (Հովհ. Ալթունյան) նորջուղայեցու արձանն է Ավինյոնում (Ֆրանսիա) հենց իր՝ ջուղայեցու տարազով (18-րդ դար), որպես երախտագիտական արտահայտություն՝ Ֆրանսիայում տորոն ներկարդյալի շահութաբեր մշակութայինը ներմուծած լինելու համար:

Նկ. 2-ը Հնդկաստանում հայ առևտրական և

մշակութային գործիչ ազուլեցի նահապետ Գյուլնազարի⁴ նկարն է (1687 թ.) անշուշտ հնդկական տարազով:

Նկ. 3 և 4, ինչպես նաև վարի շարքում՝ 6, 7 և 8-ը վերցրել ենք Նոր Զուգույից էջմիածնի վանքին որպես նվեր ուղարկված մի գորգի պատկերումներից: Վերևի երկու հայ խաչները, ինչպես երեզվում է, պարսկական տարազ են կրում հասկանալի պատճառներով. մինչդեռ վարի շարքի երկու «հրեշտակ»-ները և մեջտեղի Տիրամայրը ներկայացված են հայ կնոջ հարազատ տարազով:

Նորջուղայեցիների տարազային շարքից ունենք նաև հարուստ մի հայ ընտանիքի գունավոր խմբանկարը⁵ (տխ. 67-ում), ըստ 18-րդ դարի պարսիկ մի մանրանկարչի: Կնոջ գլուխը թագանման մի դարդ է կրում, որի տակից վարդազույն մի ղլխաշոր է իջնում, ամփոփելով ծամերը և

¹ ՉՊՊԹ,
² Վասյց Զորի Նորավանքում,
³ ՉՊՊԹ.

⁴ Գ. Առնյան, Հայ գիրքը և տղաքական արվեստը, Երևան, 1946, էջ 99.
⁵ A. Jourdin, La Perse, Paris, 1814.

միևնույն ժամանակ ծածկում է բերանն ու շրջան-
ցում վզի շուրջը Միրանագույն ու ոսկեթել նախշե-
րով թիկնոցը երկարում է մինչև ոտները, եղբրին
սև մուշտակ բոլորված: Նրա տակից երևում է պա-
րեզտար: Մեջքին ունի զարդարուն գոտի, ոտներին՝
զեղնագույն հողաթափեր: Սա՛ տարազային որոշ
նմանություն ունի տխ. 61, նկ. 6-ում ազուլեցի
կնոջ կրած տարազի հետ:

Նույն նկարի մեջտեղում կանգնած տղամարդը
դիվան կրում է ֆեսի նման կարմիր խուլը, մուշ-
տակով եղբրված: Մանուշակագույն պարեզոտի
վրայից հագնել է կարմիր կերպասով մուշտակ:
Կողքին կանգնող որդին հոր նման է զգեցած, ձեռ-
քում ունի ոսկեզովագ մի կեռ սուր:

Անցյալ դարի պարսկահայ կանանց տարազը
քաղաքաբնակների մոտ առավելագույն ներշնչված
է եղել երևանցի հայուհիների տարազին, ինչպես
երևում է տխ. 38, նկ. 3-ում գալթիթեցի հայուհու
դիմահարդարանքին, նույնպես որոշ շափով նաև՝
տխ. 66, նկ. 6-ի հարսի կերպարին:

Սակայն տխ. 64, նկ. 6 սալմաստեցի հայուհու
տարազը ավելի նմանություն ունի ազուլեցի կա-
նանց տարազի հետ: Նրա կողքի զեռաստի աղջկա
զգեստավորումն էլ, զլխի թասակով և նրանից
սակախ 3 ոսկեզրամ երեսնոցով, ուշադրավ է:

Գալթի նկ. 8-ին, ինչպես ընդհանուր երևույթ
է, քաղաքաբնակ հայ տղամարդիկ պարտավոր
էին կրել պարսկական տարազը:

Տխ. 38, նկ. 8-ը ներկայացնում է պարսկահայ
մի գեղջկուհի, իսկ նկ. 9-ում՝ Սպահանի Չարմա-
հալ ավանում գորգագործ հայուհիներ են՝ իրենց
տիպական արդուարդով ու տարազով¹:

Տ Ա Ն Տ Ա Կ 36

Այս և հետագա զանազան գավառների տա-
րազները պատկանում են առավելագույն 19-րդ դա-
րին, իսկ ոմանք տևում են մինչև ներկա դարի
առաջին քառորդը:

Նկ. 1—Գանձակեցի հայ քաղքենի², որի տա-
րազում հաստիանշական է լուխայի զարդականո-
րեն առկախ ձողված թեղանիքի տարազայման
երկարությունը: Առկախ թողնված այդ թեղերից մե-
կը ընդհանրապես նետում էին ուսի վրա, ինչպես
այս նկարում:

Նկ. 2—Լեռնային Ղարաբաղի գյուղացիներից³,

որի վրա առկա են «Կովկասյան» տարազի տիպա-
կան ձևերը:

Նկ. 3—Լոռեցի երիտասարդ կնոջ այս տարազը
մի փոփոխակն է Քիֆլիսի հայ կանանց տարազի,
թե՛ գլխահարդարանքի ձևով և թե՛ պարեզոտի
մեջքից առկախ լայն ժապավենի առկայությամբ:

Նկ. 4—Ստեփանակերտցի (Ղարաբաղ) կնոջ
այս տարազը⁴ պատկանում է Զանգեզուրի կանանց
այնքան ինքնատիպ և վարելագեղ զգեստավոր-
ման ընտանիքին, ինչպես տվել ենք զունավոր
տարազների շարքում (տխ. 63, նկ. 3, 4 և 5-ը):

Տ Ա Ն Տ Ա Կ 37

Նկ. 1—19-րդ դարի գանձակեցու հարսանեկան
թափոր, որի մեջ հետաքրքիր է փեսայի կերպարը:
Նա շուխայի վրա անց է կացրել դունագեղ շապիկ,
իսկ փափախի ճակատում ամրացրել է փոքր մի
խաշ, որի երկու կողմից շղթայաձև նուրբ դարձն
իրևում է կրծքի վրա: Հարսը քաղածածկ դեմքով,
հետևում է նրան:

Նկ. 2 և 3—Սեղրեցի կնոջ գլխահարդարանքը
19-րդ դարում, դիմացին և ծոծրակի կողմից դիտ-
ված: Դեմքը եղբրող զարդեղենների մանրամասն
զունավոր նկարը տվել ենք տխ. 68, նկ. 3 և 4-ում:

Տ Ա Ն Տ Ա Կ 38

Մի քանի շրջանների հայ կանանց գլխահար-
դարանքը 19-րդ դարում:

Նկ. 1—Քիֆլիսեցի հայ տիկին: Այդ տարազի
ամբողջական գունավոր նկարը տվել ենք տխ.
64-ի նկ. 4-ում:

Նկ. 2—Լենինականցի տարեց կին:

Նկ. 3—Գալթիթեցի հայուհի:

Նկ. 4—Օշականցի հայուհի:

Նկ. 5—Ազուլեցի տիկին:

Նկ. 6 և 7—Վասպուրականցի գեղջկուհիներ⁵:

Նկ. 8 և 9—Նոր Զուլայեցի հայուհի և Սպա-
հանի Չարմահալ ավանի գորգագործ հայուհիներ,
որոնց մասին խոսել ենք տխ. 35-ում:

Տ Ա Ն Տ Ա Կ 39

Նկ. 1—1830-ական թվականներին էրզրումից
Ախալցխա գաղթած մի հայ ընտանիք⁶: Մայրն ու
աղջիկը անվթար պահպանել են իրենց վաղեմի

¹ Նկար Ա. Պատրիկի, 1957:

² Նկ. 2—7 ՉՊՊ-ի ազգադրական աչքումից:

³ E. Reclus, Nouvelle Géographie de l'Arménie Russe, 1884, Paris.

տարազը՝ շնորհալի զլխահարգարանքը, թեզանի-
քից առկախ գունազեղ հավելվածը, ծիրանագույն
գրգռոցը և այլն: Մինչդեռ տղամարդիկ ստիպված
լինելով նոր միջավայրին հարմարվել, որդեգրել
են «Կովկասյան» տարազը:

Ախալցխացի հարսի գունավոր տարազը տվել
ենք տխ. 66-ի նկ. 3-ում, իսկ զլխահարգարանքը
և նրա մանրամասները՝ տխ. 68-ի վերևի շարքում:
Նկ. 2—Քիֆլիսի հայ կինտոյի կերպարը:

Նկ. 3 և 4—Շամախեցի հայեր, որոնց տարազը
օտարտաի է, մանավանդ նկ. 4-ի զլխանոցը, որ
նույնիսկ կովկասյան չէ, այլ՝ պարսկական:

Նկ. 5—Ղարաբաղի մելիքներից ոչ մեկի նկարը
մեզ չի հասել, բացի վերջիններից մեկի՝ Մելիք
Ֆրիտոնի մի լուսանկարից¹, որից կազմել ենք
ամբողջական տարազը, օգտվելով Ծ. Լալայանի
տեղեկություններից:

Տ Ա Ն Տ Ա Կ 40

Նկ. 1—Շուշեցի կին՝ իր թոռնիկի հետ² (19-րդ
դար): Նրանց տարազը քաղաքաբնակի դրոշմ է
կրում: Հատկանշական է առանց բերանակապի,
զլխահարգարանի պարզությունը: Թեզանիքը
լայնորեն շրջանակված է նրբահյուս ժանյակով:

Նկ. 2—Հայ քարավանատեր-վաճառականները
Հայաստանի պետականության կործանումից հե-

տո, բարբարոս տիրակալների ժամանակ էլ որոշ
արտոնություններ էին վայելում, որպես երկրի
տնտեսական կապերը պահպանողներ արտաքին
աշխարհի հետ և նույնպես ծանր հարկատու-
ներ էին:

Այս երկու տիպերը³ հանդիսանում են 19-րդ
դարի քարավանատեր-առևտրական դասի ներ-
կայացուցիչներ:

Տ Ա Ն Տ Ա Կ 41

Անդրկովկասի հայ բնակչությունը 1828 թվակա-
նի ռուս-պարսկական պատերազմը համարում էր
պարսկական դարավոր բռնակալությունից ազա-
տագրման առիթ: Այդ հույսերով խանգավառ, ա-
մենուրեք կաղամկերպվում էին կամավորական
ջոկատներ:

Ցարական կառավարությունը յուրաքանչյուր
կամավոր-զինվորի տալիս էր կայծքարավոր մի
հրացան, 30 փամփուշտ, 10 կայծքար, մի դաշույն,
գոտեպարկ, ուսպարկ, մահուզն մոխրագույն
շուխա, արխալուղ և շալվար՝ սև գույնի, փափախ
և յափուռի:

Պաշտոնական այդ ցուցակի համաձայն, նկ.
2-ում պատկերել ենք հայ կամավոր-զինվորի կեր-
պարը, իսկ նրա կողքին՝ կամավորական մի ըու-
կատի դրոշակը⁴:

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐ

Տ Ա Ն Տ Ա Կ 42

16—17-րդ դարերից ունենր հայկական հինգ
տիպեր՝ նկ. 1—5, շնորհիվ ժամանակակից իտա-
լացի նկարիչ Չեղարե Վիչելլոյի⁵: Այդ տիպերը,
որոնցից երկուսի մասին ունենք որոշ վերապա-
հումներ, գեոտեղել ենք մեր ալբոմում: Ստորև
թարգմանաբար տալիս ենք նկարիչ-հեղինակի
ժանոթագրությունները, ամփոփումներով:

Նկ. 1-ը ներկայանում է որպես «Ազնվական
հայ՝ Ստորին Հայաստանից»⁶: Գլխի սպիտակ ա-
պարոջը շինված արեգներով (կալոն), պատկառ-
ադրու է: Վերարկուն յայնկեկ է, թեզանիքը լայ-
նաբերան: Վզի շուրջ փաթաթած ունի էշարֆ:

Նկ. 2—«Բարեկեցիկ հայ», որի դեբստը երկար
է ինչպես հույների և արևելյան ուրիշ ժողովուրդ-
ների: Ապարոջը կապտագույն է, քանի որ սպի-
տակ գույնը միայն թուրքերին է վերապահված:
Վերարկուն հասնում է մինչև սրունքի կեսը. թե-

զանիքը կարճ են և զարդահանորեն ազատ ձգված:
Անդրավարիքը սրունքի վրա լայն է: Նրանք
ընդհանրապես զեղահասակ են և բնականորեն
թխազույն:

Նկ. 3—Քրիստոնյա հայ վաճառականները
սուլթանի հրամանով կրում են կամ մերտոջ նման՝
վենետիկյան գլխարկ և կամ՝ մուշտակով եղբ-
ված: Հագնում են սև, կապույտ կամ մանուշակա-
գույն նուրբ կերպասից կամ թավիշից զգեստ:
Ամռանը հագնում են պարեզոտ, Դամասկոսի կամ
այլ տիպի կերպասից, իսկ ձմռանը՝ վրայից հագ-
նում են մուշտակ: Կրում են կապույտ պատառե
զուպայ և թրքական ձևի հողաթափ, կաշա կրկնա-
կոշիկով:

Նկ. 4—«Կին՝ Ստորին Հայաստանից»—Այս
երկրի կանանց զլխահարգարանքը շատ տարբի-
նակ է, քաղկացած զանազան գույնի պատառե-
րից: Սպիտակ բամբակյա առաջին հանդերձի

¹ Աղբյուրական Հանդես, 1880, էջ 259:

² Mme Chantre, A travers l'Asie Russe, 1893, Paris.

³ G. Gagariné, Le Caucase pittoresque, 1847, Paris.

⁴ ՀԳԳԹ.

⁵ Cesare Vicellio, Habiti Antiche Moderni di Tutto il Mondo, Venezia, 1590, Paris, 1859.

⁶ Հեղինակը ակարկում է Գիլիկոս:

վրայից հաղնում են նախշուն մի պարեկոտ: Քացի այգ, նրանք կրում են հյուսիսի մի հանդերձ, նման կղերականների հմիփորոնին՝ հետակողմում ավելի երկար ձգված, քան առաջամասը, որով գլուխները ծածկելով կարող են տեսնել, առանց գրսից տեսանելի լինելու:

Նկ. 5—«Պարկեշտ հայուհի»—Այս տարազն արտահայտում է համեստություն և կուսություն: Այգ երկրում կանաչը կրում են սպիտակ մի ծածկույթ, որով փաթաթում են իրենց ամբողջ մարմինը: Երբ քայլում են փողոցում, ծածկում են իրենց դեմքը այն քողով, որ արևարդելի նման գտնվում է ունքերից վերև հավաքված: Կրում են վերարկու, շերտավոր ու մետաքսյա տրեզով եղբրված:

Վենետիկյի նկարչի վերոհիշյալ զծագրությունները, որպես հայկական ժողովրդական տարազի նմուշներ, արտատպվել են հայ և օտար հեղինակներին՝ Ալիշանի, Հայցունու, Հոտտենրոզի գործերում, առանց որևէ քննադատական մոտեցման:

Մենք սակայն ունենք հետևյալ առարկությունները.

Ա—«Ազնվական հայ» կոչվածի կերպարը մեզ թվում է շինծու, քանի որ հեղինակն իր զբրում (էջ 434) գրեթե նման տարազով է պատկերել նաև մի մավրիսանացու: Իսկ զխի մեծազանգված պարուշի սպիտակ գույնը թույլատրելի չէր քրիստոնյաներին, ինչպես ասում է հենց ինքը՝ հեղինակը հաջորդ՝ նկ. 2-ի պարագային, այնուամենայնիվ «Ազնվական հայը» ներկայացրել է սպիտակ գլխանոցով: Քացի այգ, իրավագրերի ռուսացան էր կարող հանդես գալ սուլթանանման այգ-պիսի դեեստավորումով, որքան էլ հարուստ, թեկուզ «ազնվական» լիներ:

Բ—Երկու հայուհիներից հատկապես նկ. 4-ը, ներկայացված որպես ճիկն Ստորին Հայաստանից», նույնպես մեղ թվում է ոչ հարազատ Արգեն հեղինակը «շատ տարօրինակ» է որակում նրա գլխահարգարանը: Քացի այգ, իր զբրի էջ 476-ում գրեթե նման տարազով է ներկայացրել նաև մի հույն կնոջ:

Ոչ մի տեղ, նույնիսկ մեր մանրանկարներում, հայ կինը չի պատկերվել տարազային նմանօրինակ ձևով:

Իսկ «Քարեկեցիկ հայ» և «Վաճառական հայ» տիպերը իրականությունից վերցված լինելը բացահայտ է, քանի որ վենետիկյի նկարիչը կարող էր նրանց անձամբ տեսած լինել, երբ նրանք իրենց սովորական գործերով հաճախ երթնեկում էին զբոսի Վենետիկ:

Նկ. 6—Այս գիմանկարը կատարել է մեծանուն նկարիչ Լեոնարդո դա Վինչին, որպես հայկական տիպ, գիմացից և կիսաղեմբից, բնորդ ունենալով մի հայ վաճառականի, քանի որ ճշտով համապատասխանում է Վիչելլոյի նկ. 3-ի տիպին:

Տ Ա Ն Տ Ա Ա Կ 43

Նկ. 1-ում պատկերված է հայ առաջին տպագրիչներից Աբգար Քոխասցին, իր որդու՝ Սուլթանշահի հետ. Հոմի Պուպին ներկայացնելիս (1565): Արդ, այս երկուսի տարազը, քացի Սուլթանշահի ձևերում բունձ գզակից, գրեթե նման է նախորդ տախտակում նկ. 2 և 3 անձերի կրած տարազին, ինչպես նկարագրել է Վիչելլոն քառորդ զար հետ:

Նկ. 2—Վիչելլոյից գրեթե մեկ զար հետ «Պարզաբանություն Սաղմոսաց»² գրքի պատկերագրուման մեջ (ուր 4. Պոլսո պատրիարքը եկեղեցու ամբիոնից քարոզում է) ամբողջ ժողովուրդը ապարոշավոր է, նման «Քարեկեցիկ հայի». կրում են լայն թիկնոց, շատերը մորուսավոր են:

Ստորին շարքի նկ. 3, 4 և 5-ը վերցված են 4. Պոլսի Ազգային հիվանդանոցի մի որմանկարից³ (զործ՝ անցյալ դարի առաջին քառորդի): Այդ երեք կերպարները արտացոլում են սուլթանականի հայ կնոջ և տղամարդկանց տարազը: Կինը գլուխը ծածկել է սպիտակ լաչակով. հագել է մուգ գույնի պեղնավոր պարեզոտ, որը ուսերից վարունի կրկնված մի հատված: Մեջտեղի ձեռուկը գավառից Պոլիս եկած պանդուխտ մի գեղջուկ է, որ զխի թաղիբյա գզակի վրա փաթաթել է ինչ որ թաշկինակ: Կրծքաքայ է. Հագել է երկար թեզանիթով թիկնոց: Անդրավարտիքն հետզհետե նեղանում է սրունքից վար: Ոտներին կրում է արևելա-Քիկունքին կապել է ճանապարհորդական պայուսակ:

Երրորդ անձը, որ ներկայացված է որպես բարեգործ, հագել է պոլսաբնակ հայի զգեստ: Գլխին կրում է սև խույր (գալիակ): Հագել է պեղնավոր պատմունան (ձնթարի), երկփեղկանի, մեջքը ամփոփված գոտիով, որից կախ է թաշկինակը: Պեղնավոր վերարկուն (ճյուբբե) երկար թեզանիթով է և օձիբը ծոծրակի կողմից բարձր:

¹ Տպագրված՝ Նրա հրատարակած օրացույցի մեջ: Հրատ. Վ. Չարգաշյանի «Հիշատակարանում», 1934, Կաշիրի:

² Հրատարակված՝ Վենետիկում, 1687-ին:

³ «Aesculape»—Քմ. ամսագիր, Մ 6, էջ 127-ում, Փարիզ, 1936: (Թմիչ Վ. Քորգոմյանի հաղորդագրություն լուսանկարից):

ԱՐԵՎՄՏԱ ԶԱՅԵՐԻ ԿԼԵԱՐԿԱՅԵՎԵՐ

Նկ. 1—9 շարքում ներկայացրել ենք Թուրքիայի քաղաքաբնակ հայերի (ղխավորապես պուսեյիների) գլխարկի գանազան տիպերը:

Ժամանակագրական կարգին հետևելու համար, սկսում ենք նկ. 7-ից: Սա իզմիրում բնակվող մի անձնավորություն է, նահատակված 17-րդ դարի վերջերին:

Նկ. 1-ը Պոլսում գործող մի առևտրական՝ Յարդու ամիրան է (մեռած 1752 թ.), որ հղավ նաև օսմանյան արքունիքի սեղանավորը: Սրա խույրը վերին մասում ավելի լայն է:

Նկ. 2—Նշանավոր ոսկերիչ Միքայել Տյուզյանն է (1724—1783): Խույրի գագաթին կա սկավառակաձև փոքր մի ելուստ:

Նկ. 3-ը Պեստոս-Մարդար Ալիջանն է (1775—1834), դրամագետ ու հայրը՝ Ղևոնդ Ալիջանի: Սրա դալփակի վերին մասը ավելի զանգվածեղ է:

Նկ. 5-ը Հարություն ամիրա Պեգճյանն է (1771—1834), պետական գործիչ, որի գլխարկն արդեն կարմիր ֆեան է, դրանաձև ու զանգվածեղ, երկար ծուղուկ:

Նկ. 6-ը Եղիպտոսում վարչապետ Նուպար փաշան է (1825—1899), որի կրած ֆեսի ձևը տևեց մինչև քեմալական արգելքը՝ 1925 թ.:

Նկ. 8 և 9-ը անցյալ դարի կեսերին Եվզոկիայի հայ տղամարդու և կնոջ գլխահարդարանքն է ներկայացնում: Ուշադրամ է հատկապես կնոջ գլխի ծուղավոր ֆեսը:

Այս առթիվ հարկ է նշել, որ հպատակ ժողովուրդների համար միշտ չի թուլանալվել դալփակի գործածությունը և հաճախ արգելվել է սուլթանական հրամանով:

Սասունցիների տարազը¹, ինչպես ասել ենք մեր ներածականում, թե՛ ամենահինը և անվթար մնացածն էր և թե՛ նախատիպն էր հանդիսանում հարևան մարզերի տարազի:

Սույն առիտակի վերևի շարքում՝ նկ. Ա և Բ տղամարդկանց տարազում տեսնում ենք երկու

¹ Ա. Արքայաճյան, Պատմություն Հայոց Եվզոկիո, Կաճիրե, 1952, էջ 1470:
² Ե. Կարապետյան, Սասուն, Աղզագրական նյութեր, էջ 57—67, քաղվածաբար:

փոփոխակ: Ա-ը գլխին քրտզ է դրել, շուրջը «փուշի» փաթաթած, իսկ Բ-ը՝ սասունցու հատուկ գունազեղ ասեղնագործ զգակ (տե՛ս տխ. 53), նույնպես եզերքին փուշի փաթաթած: Երկուսն էլ «ապի» են հագած, սասուցիների ամենահարգի զգեստը:

Ապին գործում էին այժի մազից և լինում էր երեք տեսակ. «միրանի ապին» հագնում էին գյուղի հարուստները, լինելով ավելի շքեղ և ուսերի վրա թավաձառ, Թևերը հասնում էին մինչև դաստակը. կրծքի երկու փեղկերը ոսկեթել երկզված էր լինում: «Խարճերով ապի» կրծքի փեղկերը 10 սմ լայնքով գործված էր լինում սուրմա թելով, որը ոսկու նման փայլում էր: Սա «խորդերի»՝ երեսասարգների նախափրած հագուստն էր: Իսկ «խազի ապին» նման էր նախորդին, սակայն եզերքի սուրման ավելի նեղ էր լինում: Սա հագնում էին միջին տարիքի տղամարդիկ: Սասունցիների մեջքը անպայման պաշտպանված էր լինում բազմածալ գոտիով: Անզրավարոփքը (թումպան) լինում էր երկու տեսակ. առյույա գործածականը՝ սև բրդից գործված, լայնկեկ էր, իսկ տեսականը՝ դուրախ, ինչպես նկ. Բ և Գ-ում: Հանդիսավոր օրերին սրունքներին քաշում էին երկարավիզ, նախուն զուլպա՝ «պջիկ» և հագնում կարմիր սուլեր: Այգպիսի առիթներում գոտու վրա կապում էին կաշվե գոտի՝ «թուղկի», որի մեջ խրում էին մի զաշույն: Կրում էին նաև ալլ զենքեր (տե՛ս տխ. 65, նկ. 4):

Նույն շարքի նկ. Գ և Դ-ն Հայոց Ջորի բնիկներն են, մոտավորապես նմանօրինակ զգեստավորումով:

Վարի շարքում են Տարոնի կամ Վասպուրականի զավաններից երեք գյուղացի, որոնք զանազան հարստահարություններից հայածական, պանդրիսուն են Պոլսում, ուր գրադվում էին գլխավորապես բեռնակրույթյամբ: Սրանց տարազի մասին՝ տե՛ս տխ. 46-ում:

Վերևի շարքում ոտքի կանգնածները շատախցիներ են², որոնց տարազը թեև որոշ լատիվ նման է սասունականին, սակայն էնթարու և շալվարի հյուսքը ավելի զարդական են, անշուշտ արհեստով շալագործ լինելու հետևանքով: Ասուցին շարքում նատոցների տարազը ևս որոշ լատիվ նման է ետևի կանգնածներին, ինչ ինչ տարբերակներով, ինչպես և աջ կողմում նստած երիտասարդը գլխին կրում է սասունական զգակ և ալլն:

² «Փարոս Հայաստանի», 1881, № Բ, էջ 14:

Տխ. 60-ի վերի շարքում տվել ենք շատախցի մի ընտանիքի անդամների գունավոր տարազա-
ձևերը:

Վարի շարքում գտնվող չորս անձերը Տարոնից
են, և՛ բաղաբաբնակներ¹:

Տխ. 49, նկ. 2 և 3-ը մշեցիներ են², իսկ գունա-
նկար տխ. 62, նկ. 1, 2 և 3-ը՝ Տարոնի գյուղերից³:

Տ Ա Ն Տ Ա Վ 47

Նկ. 1—Վանեցի մի ընտանիք, բաղաբաբու
տարազով⁴: Սակայն Վասպուրականի գանազան
գավառներում գյուղացիների տարազն ուներ տար-
բեր փոփոխակներ:

Ազգագրագետ Ե. Լալայանը 1910 թ. գործուղվել
է Վասպուրական և Նկարագրել⁵ նրանց տարազը⁶,
որից քաղվածաբար տալիս ենք:

Գյուղացի տղամարդկանց տարազը քրդակա-
նի հետ, որպես հարևան ժողովուրդ, ընդհանուր
գծերով նման է, սակայն մանրամասնի մեջ՝ տար-
բեր: Օրինակ, քրդական քեղախիկի (այլի) կրծքի
վրա փալում է ոսկեգույն կլավիտոնով բանված-
քը, մինչդեռ հայերինը ունենում է ասեղնագործ
նախշեր: Հայերի շավարը, հասկապես փողբերի
մասում լայնկեկ է և կողբերին՝ ասեղնագործված
շերտով (տխ. 59, նկ. 4), մինչդեռ քրդականը շու-
նի: Քրդերի բուրդը բարձր է և կոնաձև (տխ. 82,
նկ. 3), որի շուրջ փաթաթում են գույնզգույն
յազմա, իսկ հայերինը՝ ցածր է, շուրջը միայն մի
յազմա փաթաթած, իսկ ոմանք՝ թաղիքյա թասակ
կամ ասեղնագործ արախի են դնում: Հայ գյուղա-
ցիների զգեստավորման մյուս մասերը նման են
մշեցիների տարազին:

Այս տախտակի ստորին շարքի նկ. 1-ը հնձվոր
է, 2-ը լեռնային մարզերից, 3-ը գեղջկուհի, 4-ը
բաղաբացի տիկին՝ ոսկեշար գլխանոցով և մուշ-
տակով եզերված նախշուն խալաթով⁷:

Գյուղացի կանանց տարազը—նրանց շավիկը
երկարում էր մինչև ոտները, քղանցքը եզերված
15 սմ լայնությամբ ասեղնադրոսից: Ուտաշորը
կարում էին կարմիր շիլայից և լայնկեկ փողբերը
իջնում էին մինչև ոտները: Հագնում էին մեկ կամ
ավելի զբուն (մի տեսակ էնթարի գանազան գույ-

նի և մեկը մյուսից մի փչ կարճ, որպեսզի հաղոր-
դաբար երևան: Զբունը կողբերից ճղված էր լինում
մինչև մեջքը, որի բացվածքից երևում էր կարմրա-
գույն ուտաշորը: Զբունի վրա հագնում էին կոճիկ
կամ կոլտովիկ գունավոր շիլից, որը հասնում էր
մինչև մեջքը, կրծքի մասում լայն բացվածքով և
երկար թևերով: Միջկապը (գոտի) փաթաթում էին
կոճիկի եզրին: Նրա վրա կապում էին մեզաբը
(գոգնոց)՝ կարված գունավոր շիլից և սասառված,
ծածկում էր կուրծքը և իջնում մինչև զբունի
քղանցքից փչ վերև, որպեսզի զբունը երևա:

Նորահարսերը և հարուստ կանայք կոճիկ չէին
գործածում, այլ՝ հագնում էին կարմիր մահուկից
գալիմա (տե՛ս տխ. 56, նկ. 5), որը պարեգոտի
նման երկար էր և կուրծքը կլավիտոնով ասեղնա-
գործած: Ուտեղի կրում էին նախշուն գուլպա
և կարմիր սուլեր: Նրանց գլխահարդարանքը բավա-
կանին բարդ էր: (Տե՛ս տխ. 38-ի նկ. 6-ի շահեկ
աղջկա և նկ. 7-ի տարեց կնոջ գլխահարդարանքը):

Տ Ա Ն Տ Ա Վ 48

Բարձր Հայրի բաղաբաբնակների և գավառնե-
րի գյուղերում սարողների տարազի միջև, ինչպես
րնական է, կային որոշ տարբերություններ:

Այս տախտակի վերևում դրված տրապիզոնցի
տիկինների տարազում⁸ հայկական հետ կան նաև
օտարամուտ ձևեր: Նրանց գլխահարդարանքը,
ավանդական ոսկեշար գողակով, ինչպես նաև սալ-
թան՝ ոսկեճամուկ եզերազարդրով, հայկական
են, իսկ կոճիկի վրա գոտու շեղակի ետև փա-
թաթման ձևը, ինչպես նաև տարապայման լայն,
բաղմածալ մետաքս անգրավարտիքի ցուցադրա-
կան կերպարը, քղանցքի անհարկի վեր հավաքումը
բուրդով խորթ երևույթ են հայկական պարկեշտ
զգեստավորման ավանդույթներին: Գրանջ հայ
ոճևոր գասի մեջ մուտք են գործել Պոլսի թուրք
հարեմական ձևերից և մնացել են որպես մասնա-
կի երևույթ:

Ընդհակառակը, վարի շարքի նկ. 3-ում նստած
կնոջ տարազը հարադատորեն տոճմային է իր բո-
լոր մասերով: Նորահարսերը տեսնել տխ. 66-ի
նկ. 2 և 3-ում: Գալով նկ. 2 և 3-ի տղամարդկանց
տարազին, առաջինի սալթան, զարդականոթեն
առկախ կեղծ թևզանիքով, ցուլց է տալիս նրա
ունևոր գասի պատկանելությունը, իսկ նկ. 3-ի

¹ Փարոս Հայաստանի», Մ Գ, էջ 20:

² Վիշ, Հայաստան, հատր Բ, էջ 188:

³ Նկար 1-ը՝ ըստ Լանոսեի: Նկար 2 և 3-ը՝ Վ. Աու-
րևեյանցի:

⁴ Փարոս Հայաստանի», 1881, Մ Զ, էջ 21:

⁵ Անդազրական Հաղես», 1910, Մ 2:

⁶ «Գեղունի», 1909, էջ 59:

⁷ Փարոս Հայաստանի», 1880, Մ Ա, էջ 44 (Այստեղ տա-
րազը սխալմամբ վերագրված է կարիցիներին. մենք ուղղել
ենք այն):

տանրեց տղամարդու հագվելակերպը եղել է ժողովրդրահան լայն խավերում գործածական տարազը:

S Ա Խ S Ա Կ 49

Նկ. 1-ը Քարծր Հայքի մի հայ հողագործ¹ է, նահապետական իր տարազով: Քաղիքյա քուրզի շուրջ փաթեթներ է կապտորակ յազմա: Հագել է մուգ գույնի բրդյա քաղաթի (դեղջկական բանկոնակ, սայթա) երկար թեզանիքով: Կրծքի երկու փեղկերը միացված են կապի միջոցով: Մեջքին փաթեթներ է բրդյա բազմածալ գոտի, ընդհանրապես սպիտակ: Շալվարը, սև ասվից կարված, երկարում է մինչև ոտները: Գուլպաները նախշուն են, ոտները՝ արևխավոր:

Նկ. 2 և 3-ում մշեցիներ են, որոնց տարազը առավելապես պատկանում է բարձրհասակների բնատնիքին: Նկ. 3-ը գլուխակներ կերպար² է:

Նկ. 4-ում էրզրուսի Կիսիմ գավառակի խոտըրջուր ավանից մի կնոջ տարազն է իր երեխայի հետ: Այդ տարազի լրիվ և գունավոր պատկերացումը տեսնել տես. 63-ի նկ. 2-ում:

Նկ. 6-ը Կարնո շրջանի հայուհու տարազի մի լավագույն նմուշն է: Գլխին կրում է զարդական մի փոքր թասակ, որից բունքն ի վայր իջնում է ուղունքաշար կախիկ: Ջոլավոր պարեգոտը մեջքից վար կողմնակի ճղված է, տերևաձև շուրջանակի եզերումով: Թեզանիքը երկար են, լայնաբերան ու ծայրը նա հանդրիճելու հարմարանքով: Մեջքին կապել է շալ գոտի: Վզի շուրջ և կրծքի վրա մանյակ է կրում:

Գառով նկ. 5-ի արապիզոնցի հայ պատանու տարազին, զա՛ լավական է, որով ծնողներինց սմանք տոնականորեն զգեստավորում էին իրենց էրեխաներին, ինչպես Պոլսում՝ արևանական տարազով:

S Ա Խ S Ա Կ 50

Նկ. 1—Սեբաստացի կանայք, առօրյա աշխատանքի:

¹ Les costumes des peuples de l'empire Ottomane Constantinople, 1873, pl. XIX.

Մանր.—Վիեննայի միջազգային ցուցահանդեսի առթիվ թուրքական կառավարության հրատարակած այս ալբոմում նկ. 1-ը ներկայացված է որպես «Փրիստոնյա գլուխակ», լատինա ճամար հայ, միջոցով Հայաստանից գուրս, օրինակ, Գոնիայում գտնվողին անվանել են հայ՝ քաղաքական որոշ նկատումներով:

² Վիշ, Հայաստան, հատ. Բ, էջ 168:

³ Սույն տեղում, էջ 250:

տանրային զգեստավորումով: Տես. 66-ի նկ. 1-ում տվել ենք սեբաստացի երիտասարդ մի կնոջ գունանկար տարազը, իսկ տղամարդկանցը՝ տես. 51-ի նկ. 1—3-ում:

Նկ. 2-ը Սվազի Մանհրլըզ գյուղից⁴ է, որի զգեստավորումը աշխատանքային է, սակայն տոնականից զգալի տարբերություն չունի, քանի որ այն վերցրել ենք հարսանեկան թափորի մի լուսանկարից: Նրա կնոջ տարազի նկարը գրել ենք մեր տարազային բարեկրում:

Նկ. 3-ը նույն գյուղի հարսնացուի շատ հետաքրքիր և ինքնատիպ մի տարազն է, հատկապես գլխահարդարների տեսակետից: Գլխի խոյրը սպիտակ թղով պատելուց հետո, վրան ուղունքաշար մի մանյակ են բոլորել, զգալի կցելով նորարարից երեք փնջիկ՝ սատունցիներին փնայի գլխի «ճղոտ»-ի նման (տես. 59-ի նկ. 1): Պարեգոտի լայնաբերան թեզանիքից գուրս են կախվել շապիկի երկար ճոթերը, նման էրզրուսցի կանանց զաստակի կախիկներին: Մեջքին ունի արծաթակուտ կամար: Գոնոցը կենտրոնում ունի ժապավենից կազմված քառակուսի մի զարդ:

S Ա Խ S Ա Կ 51

Նկ. 1 և 2—Սվազի կովտուն գյուղի տղամարդու և երեխաների տարազ: Վերնաշապիկի (իշիկի) վրա հագնում էին ելեկ, երկու փեղկերի վրա ասեղնադործած: Մեջքի լայն գոտու վրա կապում էին կաշվե թղթապանակ-գոտի (սերաթլըզ), ուր խրոմ էին ծխախոտի սուպրակը և ի հարկին նաև մի փոքր զաշույն: Շալվարի (աղմա) վերի մասը խիստ լայն էր և բազմաթիվ փոթեր էր գոյացնում, իսկ իջնելով վար՝ սրունքների վրա նեղանում էր (տես տես. 56, նկ. 2 և 2՝): Երկու երեխաների տարազն էլ նման է իրենց հոր կրածին:

Նկ. 3—Սեբաստացի արհեստավորի (այստեղ՝ կամենագործ) կերպարն է:

Նկ. 4—Նվզոկիացի տիկին, որի նրբաճաշակ տարազը, ըստ երևույթին, ձևավորված է եղել պոլսահայ ազգեցությունից, քանի որ մի ժամանակ այդ քաղաքը Պոլսին կապող առևտրական ճանապարհի վրա կարևոր մի հանգույց է եղել:

⁴ Ըստ 1913 թ. մի լուսանկարի (2ՊՊԹ):

⁵ Ձեռք բերված հայրենագործներից:

⁶ Սույնպես:

⁷ Վ. Համբարձումյան, Գյուղաշխարհ, Փարիզ, 1927, էջ 120, 165:

⁸ Ա. Ալրոյանյան, Պատմություն Նվզոկիո Հայոց: Նկ. 4-ը՝ էջ 1472, 5-րդ՝ 1281, 6-րդ՝ 511-ից:

Նկ. 5-ը նույն քաղաքի հայ արհեստավորի (լազմաճու) կերպարն է:

Նկ. 6—Եվզովիացի շրջակա թախտիկա հայաբնակ գյուղից մեր ու աղջկա դեղջիկական տարազի մի նմուշ:

Տ Ա Խ Տ Ա Կ 52

Նկ. 1 և 2-ը Պոնտոսի հայաբնակ Համշենի շրջանի գյուղերից են: Նախորդ տխ. Նկ. 6-ի նման այս երիտասարդ կիսն էլ զլխին կրում է գզակ, լալակով ծածկած: Հանդերձանքի մնացյալ մասերը սովորական են: Իսկ տղայի զլխափաթույթը լազական պաշլիսն է:

Նկ. 3—Ամասիացի նորահարսի շնորհալի այս տարազը տիպական է ամբողջ Փոքր Հայքի (Սևրասիայի և Երզնկայի շրջանների) կանանց համար: Հարսի բողբ ամրացված է զլխի զարդական թասակի վրա: Պարեգուտը պեղնավոր և երկփեղկանի, եզերված է մետաքսյա ասեղնագործություններ: Կողքային ճղվածքից տեսանելի է լինում սնդուսն անդրավարտիքի փողբերը: Մեջքը զարդարված է ոսկերչական քամարով: Սալթան մուգ կարմիր կամ լաղվարդ թավիշից է, լայն եզերումով ոսկեթել ասեղնագործված:

Նկ. 4—Երիտասարդի տարազը այդ ամբողջ շրջանի քաղաքարնակ հայերի ընդհանուր հագնելակերպի մի նմուշ է:

Ստորին շարքում՝ Նկ. 5—Կեմերեկ ավանից (Սվազի շրջան) այս կնոջ կերպարը գավառացի հայ կանանց տարազի ընդհանուր մի տիպն է հանդիսանում:

Նկ. 6—Կյուրիկիցի մի հայ աշուղ՝ եռույն քաղաքի շալագործութեան հիմնադիր ինչուր կարապետը, որի ժողովրդական տարազը ավելի հին է, քան 19-րդ դարինը: Նրա թիկունքի մաշկազր հասուկ է Միջագետքի ընկններին:

Նկ. 7—Շարին-Գարահիսարցի աղջիկ, որի ըզգեստավորման մեջ մուտք է գործել եվրոպական ճաշակ, սակայն պահել է զլխին զարդական թասակ կրելու հայկական հին սովորույթը: Աղջիկները հարսնանարուց հետո միայն զլուխները ծածկում էին լաչակով:

Նկ. 8—Եվզովիացի հարսի ինքնատիպ տարազ՝ Գլխին դնում էին «Ֆինճան» կոչված խավաքարայա բարձրադիր մի զլխանոց, որը զեզին թեկերով ամ-

րացնում էին զլխին. հետո վրան ծածկում էին կարմիր քողով, որը երկարում էր թիկունքն ի վար: Սաղկանկար մետաքսաշյուս պատմունքներ, խիստ երկար քղանցքով, կողբերից ճեղքված էր լինում մինչև մեջքը, որով կարելի էր լինում քղանցքի ծայրերը վեր հավաքել և բշտել մեջքի ոսկերչական քամարի մեջ: Այգրիսով, երևում էին տակից հագած բեհեզյա անդրավարտիքի փողբերը: Պատմունքների թեկները տարապայման երկար, լայնաբերան և մինչև արմունկը ճղված էր: Կրծքի ձվածկ բացվածքը զարդարված էր լինում մանյակով կամ ոսկեշարով: Ոտներին կրում էր ասեղնագործած հողաթափ:

Տ Ա Խ Տ Ա Կ 53

Վերևի շարքում ներկայացված է ակնեցի ունևոր մի ընտանիք՝ Մերունի, ըստ արևելյան սովորության, պարեգուտավոր է: մեջքին կրում է գոտի: Վրայից հագել է պեղնավոր վերարկու (ճյուրբե), ընդհանրապես սև կերպասից. զլխին զրել է ֆես:

Նրա կնոջ տարազը ընդհանուր գավառականն է: Կողբի երկու աղջկա զլխահարգարանք հետաքրքիր է. զլուխները ծածկել են մետաքսյա լաչակով, որի եռանկյունի ծայրը բերել, զարդականորեն զետեղել են ճակատամասում: Մազերը շրտ հյուսքի վերածած, ծուպերով են վերջանում: Մեջքից վար իջնում է գոգնոցը: Շարքի մյուս ծայրում հարսն է, զգակի վրա լաչակով ծածկած: Հագել է թավշյա սալթա, ասեղնագործ եզերազարդով: Մեջքին կապել է ոսկերչական քամար, որից վար՝ գոգնոցն է երկարում:

Ստորին շարքում՝ կեսարացիներ են: Զախում տան տիկինն է, ոսկեշար զգակով, և լայն թեզանիքով սալթա հագած: Նրա կողբի երկու տղամարդիկ պարեգուտավոր են, մեջքներին՝ ունեն գոտի: Որիտասարդը կխամուշտակ է կրում, իսկ երկու ծերունիները՝ երկար մուշտակ:

Տ Ա Խ Տ Ա Կ 54

Վերևի շարքում, Նկ. 1—Շրեք գեյթունցիներ են¹, տարբեր տարիքի, հետևաբար տարազային ինչ-ինչ բնորոշ գծերով: Շրեքի զլխարկները նման են. թաղիքյա բոլորի շուրջ փաթեթված է փուշիով: Շրիտասարդի վերնաշապիկը երկարում է մեջքից վար, կողմնակի ճղվածքով, իսկ թեկերը կարճ են,

¹ «Գեդունիք» 1902, իսկ տարազային ծանոթությունները քաղել ենք «Արևելյան Մամուլի» 1904 թ., էջ 54-ում, Հովհ. Փազանճեբանի հոդվածից, որը ամփոփումներով:

² Մ. Պարսաձյան, Ակն և ակնեցիներ, 1952, Փարիզ:
³ Ա. Արթուրյան, Հայ Կեսարիա, Բ հատ., 1937, Կահիրե:
⁴ Agassi, Zeitoua, 1897. Paris, p. 203.

ուսից վար զարգացիւթեամբ եզերված: Անշտեղի ծերունու ներքնաշապիկի թևերը երկար հոթեր ունենալով, տարել հանգուցել է ուսերից վեր, ծոծրակի վրա, ինչպես անուս էին Տարոնի գյուղացիները, աշխատանքի ժամանակ՝ ազատ շարվելու համար: Աջակողմյան երիտասարդը կարճ թևերով սավթա է կրում, ոտներին՝ երկարահիտ կոշիկ:

Նկ. 2-ը Զեյթունի իշխաններից է: Նրա տարագում բնորոշ է սև ասից կարված լայնածալ օձիքով թիկնոցը, որի թեզանիքը երկար էն և վերջույթը լայնաբաց: Տակից հագել է պարեզոտ: Անջքին Տարաբլուսի մետաքսյա գոտի է փաթաթած: Շալվարը մուգ գույնի կերպասից է և այլն:

Զեյթունցիները միշտ եղել են լեռնային ազատասունչ ժողովուրդ: Տխ. 65-ի 2 և 3-ում սովել ենք նրանցից երկու տիպ:

Վարի շարքում՝ Նկ. 3, 4 և 6-ը Զեյթունի շրջակա գյուղերի՝ տղամարդկանց տարազի փոփոխական են, իսկ Նկ. 5-ը՝ գեղջկուհու:

S Ա. Խ S Ա. Կ 55

Նկ. 1 և 2—Զեյթունի գավառական կենտրոն Մարաշից են²: Սրանց տարազը գրեթե նման է Կեսարիայի և շրջանի հագվելիակերպին:

Նկ. 3-ը Կեսարիայի գյուղերից մի երիտասարդի կերպար է՝ առօրյա աշխատանքային զգեստավորումով:

Նկ. 4—Կեսարացի հարսի շնորհալի տարագ³, որի գլխահարգարանքը աջքան նման է տխ. 66-ի Նկ. 3-ում ախալցիացի հարսին, թեև գլխի թուղը ավելի կարճ է: Զուլավոր պատմուճանը, երկար թեզանիքով, պարզ և ճաշակավոր ձևավորված է: Մեջքին կրում է ոսկերչական քամար:

Նկ. 5 և 6—Տիգրանակերտացի այս զույգը⁴ քաղաքաբնակի տարազով են: Տղամարդու տարազը ընդհանուր առումով անատոլիական է, իսկ կնոջ ապարոշաձև և թեք գլխահարգարանքը, հագած կիսամուշտակը, կրծքի խճողված զարդեղենների առկայությունը ցույց են տալիս միջազգային ճաշակի ազդեցություն:

Նկ. 7 և 8-ը՝ Խարբերդի գյուղերից են: Ուշագրավ է կնոջ գլխազարդում ուղունքաշար կախիկ-

ները: Պեղնավոր պատմուճանը երկփեղկանի է և կրծքակալ զոգնոցով ծածկված: Նախարագուկներին կապել է բազուկան, որպես զարդ:

Նկ. 8-ի տղամարդու կրած տարազը մի քիչ խառն է: Գլխի թուղի շուրջ փաթաթած ունի ծոպավոր փուշի: Սավթան փոխանակ իշխիկի վրայից կրելու, ինչպես սովորություն է, մաշտպանման թիկնոցի վրայից է հագել, հավանաբար ցուցադրականորեն:

S Ա. Խ S Ա. Կ 56

Այս տախտակի զծագրությունները ներկայացնում են Շարին-Գարահիսարի տղամարդկանց և կանանց զգեստի մասերը⁵, որոնք, անշուշտ, հատուկ շնչ միայն այդ քաղաքի հայ բնակչության, այլ՝ առհասարակ Փոքր Հասիքի գավառական տարազի տիպերն են հանդիսանում:

Գծ. 1—Տիգրիկ (մինչև ծնկները հասնող շալվար, որի փովածքն է): 1'—հագնված վիճակում: 2—սղմա կամ զլբա՝ փովածք: 2'—հագնված: 3—կլեկ: 4—շալվար, փովածքը:

Կանանց զգեստեղենի գլխավոր մասերը. 5—գլմե՛ կողբերից մինչև մեջքը ճղվածքով: 6—էնթարի՝ հրքե ճղվածքով, առաջամասը ավելի կարճ, որպեսզի գլմե՛ի քղանցքը երևա: 7—իլիկ:

Նկ. 8—կլտը, որը տղամարդիկ էլ էին հագնում: Ստորև ներկայացված են աստուճի կանանց թե՛ ներքին և թե՛ արտաքին զգեստավորման մասերը⁶:

1—Կտավեղեն շապիկ, սպիտակ կամ կարմիր, որի քղանցքը կողմնակի ճղվածք ունի մինչև ծրնկները, աշխատանքի ընթացքում վեր հավաքելով՝ գոտու մեջ խրելու համար: 2—էնթարի, երկփեղկանի և մինչև մեջքը կողմնակի ճղվածքով: 3—Կուրտիկ, որը սովորաբար մանուսայից էին կարում, իսկ հարսներինը՝ գուտնից: 4—Վարտիք, որի փողբերի առաջամասում, մինչև ծնկները գոտնի կտոր էին կարում, որպեսզի քղանցքը վեր հավաքելիս վարտիքի կտավը չերևա: 5—Չատրիկ (զոգնոց), բրդյա մուգ-կարմիր թելով գործված, որը եզերում էին կապույտ կտորով, և ամբողջ երկայնքին Տ-ի ձևով զարգական փովածք անում և սրմա թելով կարում էին զոգնոցին: 5'—Նույնը կողմնակի դիտված: 6-ը սրտանոցն է (կրծկալ), ընդհանրապես մուգ-կապույտ կտավից, վրան

¹ Գ. Գալստյան, Մարաշ, 1934, Նյութ-Ցուրք:

² Նույն հատորից:

³ Ալբույանյան, Հայ Կեսարիա, Բ հատ., էջ 1687:

⁴ Նկ. 5 և 6-ը ինչպես նաև 7 և 8-ը վերցրել ենք անցյալ դարի վերջերում Կարուսիյան կրթնավորների հրատարակած տարազային բացիկների շարքից:

⁵ Գ. Հյուսիսյան, Ե. Գարահիսարի մասին գրած անտիպ նյութերից (299թ-ի արխիվ):

⁶ Գծագրել ենք Նղ. Կառապետյանի (ստուճոցի) տված բացատրությունների համապատասխան:

անհնազորած, որը վերևից կապում էին ծոծրակի հետև, իսկ վարի կողմից՝ մեջքին, ինչպես ցույց է տրված տխ. 59-ի նկ. 2-ում: 7—Ուննաման, որի կրունկին գամում էին մեխավոր պայտ (նալա, զծ. 8) ձմռանը լսայթաքելու համար:

S U. Խ S U. Կ 57

Վերևի շարքում՝ Վասպուրականի զանազան գտնվածքներում հայ կանանց դործածած զարդեղենները:

9ծ. 1—Կողմում էր մախլա, որը կապում էին ճակատակապի վրա և շղթայի ծայրը ամրացնում ծոծրակի վրա: 2 և 2՝—Երեսնոց, որը կախում էին բունբերի վրա: 3-ը կողմում էր շվան, որը դեղջուկ աղջիկները ֆեսի վրա էին ամրացնում որպես զարդ (տե՛ս տխ. 38-ի նկ. 6): 4-ը կրծքազարդ է, մանյակ (գերտանլըկ): 5 և 6-ը՝ խրզմա, որը անցկացնում էին բթի բլթակին, որպես զարդ: 7-ը դիտահարգարանքի շղթայավոր կանթ է¹:

Վարի շարքում զծ. 1 և 2-ը Մոկսի, Շատախի, Հայոց Զորի² կանանց դիտի ֆեսի վրա ամրացված արծաթագործ թասակներ են, շուրջ բոլորը շղթայիկով առկա զարդարամենքով: 2-ի թասակից առկա է Երեսնոց: 3-ը հատուկ է Մոկսի կանանց զլխահարգարանքին, որպես արծաթագործ թասակ, որին կցված են ծուլերով վերջացած երկար հյուսբեր (տե՛ս տխ. 59, նկ. 2 և 3 և տխ. 60, նկ. 5): Մեջտեղի զծ. 3-ը կրծքազարդ է:

S U. Խ S U. Կ 58

Նկ. 1—Սասունցիներին հատուկ անհնազործ զգակ, վերևից դիտված: Նկ. 1՝—Նույնը՝ կողքից դիտված: Նկ. 1՝—Փուշիով պատած զգակը տղամարդու գլխին³: Փուշին մետաքսյա սև շղարչե սպարոշ է, Էդրերը ցանցառ ծուլերով:

Կանանց զլխահարգարանքի մասեր⁴. 2—Քասակ՝ շիլա կտավից շինված, որի ճակատամասում կարում էին սղոցածև ևս կտոր, ակոխիկ կամ խիչիկ կոչված: 3—Քոֆի կամ ֆաս, ճակատում արծաթ զրաններ շարոցով, որը դնում էին թասակի վրա: 5—Աղջկա զլխահարգարանք, բոֆու վրա ոլորուն փուշի փաթաթած: 4—Մանյակ (գերտանլըկ): 6—Երեսնոց (փարիշան), ինչպես տեսնվում է աղջրկա բունքի վրա առկաիս:

¹ Այս տախտակի երկու շարքի զլխահարգարանք նկարել ենք բոս 29Պ թանգարանի նյութերի:
² Նույն տեղի նյութերից:
³ Նկարներ 4, 5 և 6-ը պատրաստել ենք բոս Ե. կարապետյանի (սասունցի) բացատրությունների:

S U. Խ S U. Կ 59

Նկ. 1—Սասունցի հարս ու փեսա⁵: Հարսի գլուխը ծածկում էին նախ կարմիր բողբոջ, որի վրա էլ սպիտակ շղարչով: Փեսայի գրակի ճակատամասում գրված է բուսական երեք բողբոջ, «Ճղա» կոչված, իսկ վզի շուրջ խաչածև փաթաթված է անձեռոց: 2—Սասունցի աղջկա տարազ, ետևից ու դիմացից⁶: 3—Վասպուրականի զեղջկու՛նի, ետևից դիտված⁷, ցույց տալու համար մազերին կրցված զարդական ծուլերը: 4—Տղամարդ՝ Արճեշի Ալճավաղ գյուղից⁸: Սրանում հետաքրքիր ձև է աչ դաստակից առկա նախշուն, երկար ժայռավենը որպես զարդ: 5—Վասպուրականի զեղջկու՛նի՝ ետևից դիտված⁹:

S U. Խ S U. Կ 60

Նկ. 1—4—Շատախցի մի ընտանիք¹⁰, որոնց զգեստեղենի որոշ մասեր, որպես շալագործներ, իրենց կողմից են գործված: Հատկապես ուշագրավ է կնոջ թեզանիքից առկա շապկի տարապատան երկար ճոթերը, Նկ. 5 և 7—Շատախ—Մոկս շրջանի աղջկա և տղամարդու տարազ¹¹, Նկ. 6—Վանցի հայուհի¹²:

S U. Խ S U. Կ 61

Նկ. 1—Վասպուրականցի զեղջկուհի¹³, 2—Մանակերտցի տղամարդ¹⁴: 3—Վասպուրականի Գավաշ ավանից հայուհի¹⁵: Սրանում ուշագրավ է ձեռագործ նկարչազեղ զոգնոցը: 4—Շատախցի հայուհի¹⁶: 5—Ակնեցի նորահարսի տարազ¹⁷, որը նկարել ենք բանաստեղծ Սիամանթոյի փարիզաբնակ հարագատների կողմից վերջերս ՀՊ պատմական թանգարան ուղարկված բանաստեղծի մոր հարսնության հալավից: Հարսի զլխահարգարանքը նկարել ենք օգտվելով տխ. 53-ում ակնեցի հարսի կերպարից: 6—Ազուխցի հայուհի¹⁸:

S U. Խ S U. Կ 62

Նկ. 1—Մշեցի հայուհի¹⁹: 2—Տարոնի գյուղերից ծերունի²⁰: 3—Մշեցի աղջիկ²¹: 4—Ալաշկերտցի հայուհի²²: 5—Խնուսցի²³: 6—Գավաշցի²⁴:

⁵ և ⁶-ը բոս Նկարիչ Աւշակ Յեթմեյանի:
⁷-ը բոս Նկարիչ Սարգիս Խաչատրյանի:
⁸ Օգտվել ենք մի լուսանկարից և գունավորել՝ բոս 29Պ թանգարանի համապատասխան զգեստեղենների:
⁹ 11, 14 և 19 բոս Նկարիչ Լանտեյի:
¹⁰ 13, 14, 20, 21 և 24 բոս Նկարիչ Վաղդես Սուրենյանի:
¹¹ 12, 15, 18, 22 և 23 բոս Նկ. Ա. Խաչատրյանի:
¹⁷-ը՝ Ա. Պատրիկի:

S Ա. ԽՏ Ա. Կ 63

Նկ. 1—Կարնո Ալկալա գյուղից երկու գեղջկու-
հի, Լուսից ու գիմացից գիտված¹: 2—Կարնո
հոտրջուր ավանից մայր ու աղջիկ²: Ուշագրավ է
կնոջ մուգ-կարմիր. գոգնոցանման ինքնատիպ
վերնազգեստը, եզերված՝ ոսկեգույն մետաքսե ա-
սեղնազործությամբ: Կրակիտոնով հյուսված մի
կրծքազարդ սքոռում է կրծքի ճղվածքը: Մեր տա-
րագլխին քարտեզում նրա կողքին նկարել ենք նաև
սւլզ տարազի մի ուլիշ փոփոխակը: 3—Ստեփա-
նակերայի³ (Լեոն, Ղարաբաղ) տարեց մի կին,
զանգեզուրյան տարագույլ: 4—Գորիսեցի կին, կա-
պույտ գոգնոցով⁴: 5—Նույն տեղացի նորահարա⁵:

S Ա. ԽՏ Ա. Կ 64

Նկ. 1—Երևանցի հայուհի՝ ժողովրդական տա-
րագույլ⁶: Նկ. 5—Նույնպես Երևանցի, սակայն
ունենոր դասի աիկնոջ տարագույլ⁷, ուր գլխավոր
ձևերը պահպանված լինելով հանգրծ, զրանց
ալվելայոված են որոշ ճոխություն: Հագած է թավ-
շյա կիսամուշտակ, անության զարդական ճրդ-
վածքով: Մեջքին, բամբակի փոխանակ կապել է
լայն ու ծաղկանկար մի ժապավեն, որը երկարում
է մինչև թղանցքի վերջավորությունը:

2 և 3—Մեղրեցի կնոջ և տղամարդու տարագ⁸:
Վերջինինը մասամբ կովկասյան է, մասամբ նաև
պարսկական, տեղազործությամբ սահմանակից լի-
նելու հետևանքով: Մինչդեռ կնոջ տարագը հիշեց-
նում է ագուլիացիները: Ինքնուրույն է, սակայն,
գունային ճաշակը, ինչպես նաև՝ մեջքին կապած
սպիտակ ու լայն գոտին, որի ծայրը ծաղկանկար
ասեղնազործած, կողմնակի կախ է թողնված զար-
դակներուն: Սա էլ նրանց նման քիթը ցցուն չուստ
է կրում:

Նկ. 4—Թիֆլիսեցի հայուհու տիպական տա-
րագ⁹, որը ձևավորվել է, ինչպես ասել ենք, Երե-
վանից և նրա շրջաններից 1778 և 1804 թթ. զեպի
Վրաստան գաղթած և հասկանալի Թիֆլիսում հաս-
տատված հայուհյան միջավայրում: Այդ տարագի

բնորոշ մասերն են նրբաճաշակ ղլխահարդարան-
քը, պարուրված՝ թափանցիկ շղարշով: Վառ-կար-
միր ներքնազգեստի վրա հազել է գորշ-կապտա-
վուն շրջագզեստ, բազմածալ և պեղնավոր քղանց-
բով և երկար թևզանիքով, որի անութից մինչև
արմունկը թողնված բացվածքից պարզվում է
ներքնազգեստի կարմրագույնը: Մեջքը ներքնապես
սեղմիրանով նրբացած, բուրբված է կարմիր և
ծաղկանկար ժապավենով, որը առաջամասում
հանդուցյված, երկու երկար ծայրերը առկախ է թո-
ղած քղանցքն է վայր: Կրծքի քստանկյունի բաց-
վածքից զարդականոթեն երեւում է կարմիր պա-
րեզուր:

Նկ. 6—Սալմաստեցի հայուհու¹⁰—հենց Բաֆֆու
Երիտասարդ կնոջ տարագը, որը զրեթե ընդհա-
նուր էր պարսկահայ կանանց համար և որի վրա
նշմարվում է Երևանի և Թիֆլիսի ոճական ազդե-
ցությունը:

Նկ. 7—Աղջնակի տարագ¹¹, Ուշագրավ է նրա զըլ-
խի զարդարուն թասակը, որից բունքն է վայր առ-
կախ է խաչաձև մի փոքր զարդեղեն՝ երեսներ
(տե՛ս տխ. 57, նկ. 2, 2՝):

Նկ. 8—Պարսկահայ թաղաքարնակ անձ¹², որի
տարագը անշուշտ ազդվել է պարսկականից:

S Ա. ԽՏ Ա. Կ 65

Նկ. 1—Զեյթունցի հայուհի¹³, Հատկանշական է
նրա կարճ թևերով սալթան, որի կրծքի և թևերի
վրա ասեղնազործ զարդեր են բանված: Կրծքի
երկու փեղկերը վարի ծայրում միացված են ար-
ծաթյա վարդախաձև երկու ճարմանգով:

Նկ. 2 և 3—Զեյթունցի ուղմիկներ են¹⁴, որոնց
զգեստավորման մեջ խառն են տեղական և սիրիա-
կան ձևերը, ինչպես թիկունքի մաշկը և ալյու:

Նկ. 4—Սասունցի մարտիկի կերպարը¹⁵:

Նկ. 5, 6 և 7—Սվեախացի երկու կանանց և
մարտիկի կերպարը¹⁶:

¹ Ըստ Ա. Ֆեթվանյանի:

² Վերակազմություն Ա. Պասրիկի:

³ Նկ. Ա. Պասրիկի (1957 թ.):

⁴ Ըստ Լանսետի:

⁵ Նկ. Ա. Պասրիկի (1957 թ.):

⁶ Կ 7 ՉՊՊ թանգարանի ֆոնդերից:

⁸ Նույն ֆոնդերից:

⁹ Ըստ Նկարիչ Հակոբ Հովհաննյանի (Հայաստանի պետ-
կան պատկերասրահ):

¹⁰ Կ 11 Վերակազմություն Ա. Պասրիկի (2ՊՊ՝ նյութերից):

¹² Նույն նյութերից:

¹³ Ըստ լուսանկարի և հայրենագարծ զեյթունցիների ցու-
ցումի:

¹⁴ Առաջինը ըստ լուսանկարի, օգտագործելով 2ՊՊ
թանգարանի ազգազրական նյութերը, իսկ Նկ. 3-ը Լան-
սետի կողմից:

¹⁵ Ըստ տխ. 58 և 59-ի տարագաձևերի:

¹⁶ Մ. Սարիի «Ալլակներ հյուսիս» հաստի լուսանկար-
ներից:

Նկ. 1—Մերտոսացի նորահարսի տարազ¹: Նրա գլխահարգարանը գերծ է ավելորդ ծանրաբեռնվածությունից, ոսկեշար զգակը ծածկված է միայն շղարշյա լաշակով (յազմա): Քաց-կապտագույն պարեզոտը երկփեղկանի է և կողմնակի գույզ էղվածքով, որից բայլելիս երևում է կարմիր սնդուս անդրավարտիքի փողբերը: Մեջքը սեղմած է ոսկեբլշական քամարով: Թավշյա սաշխյի երկու փեղկերը և թեղանիքի կարերը առեղնագործված են սուրմա թելով, նույնպես նաև հողաթափի երեսները:

Նկ. 2—Բարձր Հյւթի գումառական հարսնացուի² տարազի ամենուհատկանշական մասերն են թեղանիքից առկտխ անձեռոցանման զարդական երկու հավելյալածերը, մետաքսյա գունազեղ կտորից, խնչպես տեսանք տխ. 48, նկ. 3-ում:

Նկ. 3—Ախալցխացի նորահարսի շնորհալի տարազն է³, որը տեղում կոչվում է «Հալոյ շոր» և որոշ չափով նախորդի քաղաքատիպ ձևն է ներկայացնում, ըսնի որ 1830-ական թվականներին կարիների էին գաղթել: Գլխահարգարանի մասերը տվել ենք տխ. 68-ում: Հատկապես պետք է նշել հարսի գոգնոցի ավանդական նշանակությունը: Մուգ-կարմիր կտորից պատրաստված և ոսկեզույն եղբերումով այդ գոգնոցը ոչ միայն հարսնացուի զգեստավորման անհրաժեշտ մի մասն էր, այլ նաև Բարձր Հայքի կանանց հատուկ լինելով, սովորական գործածություն ունեւր հարս լինելու օրից ըսկըսլալ: Այն տալիս էին որդես օժիտ, գոտու նեղ կապի վրա սովորաբար աչպիսի մի մակագրութուն առեղնագործած. «Ի վաչելումն ...-ի», նշելով նաև ուժունություն թվականը:

Նկ. 4—Ղարաբաղցի հարսնացուի ինքնատիպ տարազ, ըստ ստեփանակերտցի նկարիչ Ա. Մատուչյանի, և որի հարազատությունը ստուգել ենք տեղում:

Նկ. 5—Շամախեցի հարսու տարազ, խոնձ տեղական օտարտտի ձևերով:

Նկ. 6—Գավրիթեցի հարսի տարազ⁴, որն զգալի

¹ Մրա միագույն լուսակարը լույս է տեսել «Գեղունու» 1902 թ. № 3 համարում, որը նշով համապատասխանում էր իմ մոր հարսանական հարսի, ուստի, որպես ականատեսի, նրանից գունանկարել եմ:
² Ըստ Ա. Խաչատրյանի:
³ Ըստ նկ. Լանսերի:
⁴ Ըստ Ա. Խաչատրյանի:

ազդեցություն է կրել Երևանի և Թիֆլիսի հարսուհիների տարազից:

Նկ. 1—Նորբուղացի ունևոր մի ընտանիք⁵, որի տարազային նկարագրականը տվել ենք պարականայերի բաժնում:

Նկ. 2.—18-րդ դարի առաջին տասնամյակում հայ աշուղի և թիֆլիսեցի «գլուխներին» (բարձր դասի տիկիներ) հին տարազը⁶, որը ցույց է տալիս, թե Երևանի և Թիֆլիսի անունով ծանոթ հարսուհիները, իր շնորհալի գլխահարգարանը, տարածվել է Վրաստանում Թիֆլիսի հայերի միջոցով:

Վերևի շարքում՝

Նկ. 1—Ֆես, կենտրոնում ոսկեբլշական վարդյակով: 2—Մոպ (փյուսղուլ), որ երկարում է մինչև թիկունքը: Մոպի գլխին ադուցված է արծաթյա մի զարդեղեն: 3—Քունքերից մինչև ուսերն իջնող մարգարտաշար կախիկներ (գլխիֆլղ): 4—Ֆեսը բոլորող շրջանակ, ճակատամասում առեղնագործված է ծաղիկներով, իսկ երկու կողմում՝ վարդ: 5—Ճակատազարդ (ջավշակ): 6—Ճակատի ոսկեշարը (շերիտ): 7—Հարսի գլխահարգարանը ամբողջացած վիճակում:

Մեջտեղում՝ նկ. 1 և 2—Վանի հայ ոսկերիչների նուրբ զարդեղեններով եզերված կանացի երկու զգակ:

Վարը նկ. 3 և 4—Մեղրիի, Ազուլիսի, մասամբ էլ Ձանդեզուրի հայ կանանց գլխահարգարանի զարդեր⁸ (տե՛ս տխ. 37, նկ. 2 և 3, տխ. 61, նկ. 6 և տխ. 63, նկ. 3 և 5):

ՏԻՐՈՋԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ

Մանր.—Տախտակ 45—68-ում պատկերված տարազները, որոնք գործածական են Եղել հայաբնակ զանազան դավառներում 19-րդ դարից մինչև ներկա դարի առաջին քառորդում, ամփոփված են ներդրի տարազային բարտեղում, ըստ նրանց աշխարհագրական տեղաբաշխման:

⁵ Amb. Jourdain, La Perse, tom V, Paris, 1814.
⁶ Գործ՝ նկարիչ Հ. Հովհաննիսյանի, Մատ. 4426.
⁷ ՀՊՊ թանգարանի ֆոնդերից, ըստ Ա. Ֆեդվանյանի նկարի:
⁸ ՀՊՊ թանգարանի ֆոնդերից. նկ. Ա. Պատրիկի:



Հ Ա Վ Ե Լ Վ Ի Թ

Օ Տ Ա Ր Տ Ա Ր Ա Ջ Ա Ջ Ե Վ Ե Ր

Հայաստանի հարևան ժողովուրդների հետ մեր դարավոր շփումների բերումով, ինչպես բնական էր, ունեցել ենք տարազային ինչ-ինչ ազդեցություններ: Ուստի անհրաժեշտ համարեցինք այս բաժնում ներկայացնել նաև նրանց տարազներից նմուշներ, որոնք կարող են ի հարկին օժանդակել մի հանգիստանալ լուսարանելու համար հայկական տարազի անհայտ մնացած մասերը, ինչպես նաև՝ օգնելու մեր կերպարվեստագետներին հայկական տարազը ձևավորելիս օգտվելու նաև այդ նյութներից:

Տ Ա Խ Տ Ա Կ 69

Նկ. 1, 2, 3, 5, 6, 7 և 8-ը խեթական հուշարձաններից պատկերումներ են¹, Քանի որ հայ ժողովրդի բազմազան խառնուրդից հայաստա-ազգիները խեթերի հետ դարավոր հարևանության մեջ են եղել, անշուշտ, նրանց տարազի հետ ունեցել են որոշ փոխազդեցություններ:

Նկ. 4-ը ասորեստանյան մի արքայի կերպարն է:

Նկ. 9 և 10—Փոյուզիացի պատերազմիկներ են², Արմենները, ըստ Հերոդոտոսի, «փոյուզիացիների հետ համազդեցություն են»:

Տ Ա Խ Տ Ա Կ 70

Վերևի շարքում՝ մարական տարազներ³.
Նկ. 1—զինվոր. 2—բարձրաստիճան անձնավորու-

¹ Perrot et Chippier, Histoire de l'Art dans l'Antiquité, 14. 1 և 2-ը՝ էջ 225, 8-ը՝ 637, 5-ը՝ 280, 6-ը՝ 559:

Նկ. 7 և 8-ը՝ Ա. Խաչատրյան, Հայաստանի սեպագիր շրջանի պատմություն, էջ 282:

² Perrot et Chippier, նույն աշխ., V. 173.

³ Նկ. 4 և 5-ը Готтенрот Фр., Ист. внешней культуры, 1885, М., I—табл. 22, 2—табл. 76, 3—табл. 63.

թյուն. 3—թագավոր. 4—խորհրդական. 5—զինվոր. 6—բրձավետ. 7—բուրմ:

Միջին շարքում՝ Արքեմենյան պարսիկների տարազներ⁴.

Նկ. 1—ազնվական. 2—զինվոր. 3 և 4—պատերազմիկներ. 5—թագավոր. 6—սպարապետ. 7—քաղաքացի:

Վարի շարքում՝ պարթևական տարազներ⁵.
Նկ. 1 և 2—ժողովրդական տիպեր. 3—պայատական ծառայող. 4—թագավոր. 5, 6, 7 և 8—բարձրաստիճան պաշտոնատարներ:

Տ Ա Խ Տ Ա Կ 71

Վերևի շարքում՝ Աղեքսանդր Մակեդոնացու դամբանի քանդակներից, որ պատկերված է պարթև և հելլեն զինվորների պատերազմը⁶:

Նկ. 1, 2 և 3—պարթև զինվորների տարազը, որը այնքան նման է տի. 7, նկ. 2-ի Հայաստանը անձնավորող արձանի տարազին:

Վարի շարքում՝ նկ. 5—հոռմեական զինվոր. 6—կայսր (Մարկոս Ավրելիոս⁷). 7—հոռմեական քաղաքացի՝ տոգայր⁸. 8—կին ստոլայով փաթաթված⁹:

Տ Ա Խ Տ Ա Կ 72

Սասանյան տարազներ¹⁰:

Վերևի շարքում՝ նկ. 1, 3, 4, 4' և 6—արքայազուներ են: Նկ. 2 և 5—թագուհի և թագավոր:

Միջին շարքում՝ նկ. 7 և 8 ազնվական, նկ. 10—պայատական. նկ. 9, 11, 12, 13 և 14—զինվորականներ:

⁶ Базмгартен Ф. Н., Сасанидская культура, 1914, ст. 170, табл. II.

⁷, ⁸ և ⁹ նույն էջ 229, 103 և 339:

¹⁰ Ըստ Готтенрот-ի табл. 76.

Ստորև նկ. 1—ժողովրդական տիպ, գլխաբաց. 2, 3, 4—վերնախավի զլխարկածներ. 5—10—արքայական թագի ձևեր:

S Ա. Խ S Ա. Կ 73

Նկ. 1—պալատական՝ մարական տարազով. 2—պալատական՝ սասանյան տարազով. 3—սասանյան արքայի:

Նկ. 4—զինվորական հրամանատարներ. 5—զինվորների տիպեր՝ սահրավորներ, սասերակիրներ, նիզակավորներ, լախտակիրներ¹:

S Ա. Խ S Ա. Կ 74

Նկ. 1—Սասանյան արքա, շրջապատված ծառայողներով՝ որոնց ժողովրդական տարազն որոշ նմանություն ունի մեր պատկերաբանողակներից ոմանց հետ²: Նկ. 3—ը Սասանյան Անուշիրվան արքան, իսկ նկ. 1, 2, 4 և 5—նրա պալատական և զինվորական պետեր³: Այս վերջինների տարազն էլ հասկանաբար որոշ նմանություն պիտի ունենա հայ Արշակունիների պալատական տարազի հետ:

S Ա. Խ S Ա. Կ 75

Սասանյան արծաթյա այս արձանում պատկերված ձիավոր պատերազմիկների տիպերը իրենց գրոշակներով ու զենուղարքով կարող են որոշ լուսաբանություն տալ նաև այդ ժամանակաշրջանի հայ զինվորական տարազածների պատկերազման հարցերում⁴:

S Ա. Խ S Ա. Կ 76

Վերևում շրջանակի մեջ առնված տիպերը (պարային շտրիքարծու) սասանյան ժամանակաշրջանի ժողովրդական տարազի նմուշներ են:

Ստորև՝ նկ. 1—նվազածու. 2—մեհենական պարուհի. 3 և 4—պալատական տիկիներ. 5—մատովակ⁵:

¹ E. Babelon, Manuel archéologique Orientale, Paris, p. 175.

² Flandin et Coste, Voyage en Perse ancienne, Paris pl. 50.

³ և 4 Орбели И. А. и Тревер К. В., Сасанидский металл, табл. 16 et 13, Москва—Лен., 1935.

⁵ Орбели И. А. и Тревер К. В., Сасан. металл.

⁶ Նույն տեղում:

S Ա. Խ S Ա. Կ 77

Բյուզանդական ժողովրդական տարազածներ¹.

Նկ. 1—երկրագործ. 2—դարբին. 3—ծիաղարման. 4—ունևոր քաղաքացի. 5, 6 և 7—ժողովրդական տիպեր. 8—արիստոկրատ տիկնոջ և նվագածուի կերպարներ. 9—քաղցրեղև կին. 10—պալատական տիկին, որի պարեզոտի կողմնակի ճղվածքը, ինչպես նաև թևերից առկա ծոպավոր երկու ժապավենները առնչակից են մեր ժողովրդական տարազի ինչ-ինչ ձևերին. 11—արիստոկրատի տիպ. 12—պարուհի:

S Ա. Խ S Ա. Կ 78

Վերևում՝ բյուզանդական արքունիքի տարազներ²:

Նկ. 1—փոքրասիական ականավոր անձ. 2—ազնվական տիկին. 3—զինվորական հրամանատար. 4—բյուզանդական կայսր. 5—թագուհի. 6—արաբական վերնախավի տարազ³. 7—արտք ժողովրդական տիպեր⁴:

Աջակողմում՝ նկ. 1—6—բյուզանդական վերնախավի կանանց հերահարզարանքի զանազան ձևեր⁵:

S Ա. Խ S Ա. Կ 79

